

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Փռնիզ ևր  
Քարոյլտր

Հարոյր ՅԷ

*Spiritual Reflections*

2022

Ի Հայրապետութեան  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ազնիւ մեկենասութեամբ՝  
ՍԻՊԻԼ ԱՔՐԱՀԱՄԵԱՆԻ

*“Իմ ապաստանս եւ ապաւինս ես, ոյ Աստուած,  
եւ Զեզի կը վստահիմ” Մաղմոս 91:2*



This publication was made possible  
through the generous contribution of  
**SYBILLE APRAHAMIAN**

*“You are my refuge and my fortress;  
my God, in You I will trust.” Psalms 91:2*

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Էջ
Առաջաբան	7
2021 Աղօթքի Տարին	12
«Նորոգող Հնույթեանց, Նորոգեա՛ եւ Ձիս, Նորոգ Չարդարեա»	14
Մբ. Ծննդեան Պատգամ	18
Առաջին Կիրակի	22
Տեառնընդառաջ	26
Նորին Խորհուրդը	28
Մեծ Պահք՝ Դուռը Նոր Կեանքին	31
Լուսաւորիչ Հայրապետի Մուտն ի Վիրապն	34
Աւագ Ծաբաթ	38
Խաւարման Գիշեր	41
Աւագ Ուրբաթ	45
Չատկական Պատգամ	48
Նոր Կիրակի	52
«ԶՀոգին մի՛ Ծիջուցանէք»	56
Երկրորդ Ծաղկազարդ	62

	Էջ
Սբ. Ղեւնոդեանց Մայր Տաճարը՝ Պատկեր Արեւմտեան Թեմի	64
Սբ. Գրիգոր Լուսաւորիջի Ելն ի Վիրապէն	67
Արթուն Պահէնք Մեր Հոգին	69
Սբ. Էջմիածին Մայր Տաճարը	72
Սբ. Էջմիածինը՝ Հայի Վերածնութեան Աւագանը	74
Սրտի Խօսք	78
«Աղօթք Հանդերձ Ծնրադրութեամբ զՏէր Աղաչեսցուք»	80
Արդար Սպասում Մը	82
Հովուական Գիր	85
Աստուածամայրը	88
Անդամալոյծի Բժշկումը	92
Ճանապարհորդութիւն Աստուծոյ Հետ	94
Սբ. Մկրտութեան Խորհուրդը	98
«Դուք Տուք Նոցա Ուտել»	102
Մեզ Ընտրողը Աստուած Ինք է	104
Յաւիտենական Ճշմարտութիւնը	106
Երեք Նուիրագործուած Խաչքարերը	108

	Էջ
Սրտագին Կոչ Մեր Սբ. Եկեղեցւոյ ու Ազգի Զաւակաց	110
Պատգամ՝ Սբ. Ներսէս Ընծայարանի	112
Մեր Հաւատքով Պարտ Ենք Լեռները Ճարժել	114
Հայրենիքը Մեր Առաքելութիւնն է	116
Պատգամ՝ 21 Սեպտեմբերի	118
Զօն 44-Օրեայ Պատերազմի Նահատակ Հերոսներու Յիշատակին	120
Կոչ Թեմիս Հոգեւորականաց Ձեռք Երկարիր Եղբօրդ	124
Սրտի Խօսք Նորոգ Հանգուցեալ Տէր Ասողիկ Քահանային	126
Սբ. Գէորգ Չօրավարի Տօնը	128
Պատգամ Հոգեւորականաց Ընդհանուր Ժողովին	130
Այրի Կնոջ Լուման	132
Նաւակատիք	134
Եկեղեցւոյ Օծումը	136
«Թագաւոր Երկնաւոր Չեկեղեցի Քո Անշարժ Պահեա՛»	138
Անդրադարձ Հայաստանի Անցնող Ճարթօնայ Իրադարձութեանց	140

	Էջ
Աստուածամօր Տանար Ընծայումը	143
«Հաւատքը Մեր Կեանքի Ուժն է»	146
Սրտի Խօսք “Նարեկ”-ի Արեւմտահայերէն Նոր Թարգմանութեան Մասին	149
Հովուական Գիր	151
Սրտի Պատգամ Արեւմտեան Թեմի Սարկաւազաց Դասին	153
Սր. Ստեփանոսի Տօն	154
Եւ Չգենույ զՆոր Մարդն	156
Յուցակ	160

## ՄՐՏԻ ԽՈՍՔ

Միրելի ընթերցող,

Պատիվ ունեմ այս անգամ եւս իմ համեստ մտորումները փոխանցել Հայց. Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմի Առաջնորդ՝ Գրշն. Տ. Հովնան Արք. Տերտերյանի հերթական, թվով 17-րդ քարոզգրքի կապակցությամբ, որն առավել միտված է Արցախյան մեր վերջին պատերազմի եւ նրա հետ բերած հետեւանքները վերլուծելու եւ հոգեւոր լուծումներ առաջադրելուն:

Այսօր առավել քան երբեւէ, երբ մեր ազգն ապրում է օրհասական մի ժամանակաշրջան, խիստ օգտակար եւ հոգեշահ է ծանոթանալ Սրբազան հոր խոսքին, որն արթնության հրավեր է եւ հիշեցնում է բոլորիս մեր քրիստոնեական ինքնության, արժեքների եւ, ամենակարեւորը՝ Տիրոջ վերադառնալու հրամայականի մասին: Այն սրտագին կոչ է՝ *«Մեր կեանքերը վերածելու կենդանի Աւետարանի»*, մեր մեջ վառ պահելու *«Յարութեան յոյսը»* եւ աւետարանական կույրերի հետ միասնաբար աղերսելու Տիրոջը, ասելով՝ *«Տէր զի բացցին այք մեր»*, քանզի նյութապաշտությունը կուրացրել է մեր հոգու այքերը. *«Մեր ժողովուրդի զաւակներէն շատեր ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի հեռացած են աղօթքի կեանքէն եւ աւելի ապաւինած են նիրթին»*:

Սույն Քարոզգիրքը յուրահատուկ օրագիր է Սրբազան հոր մեկամյա բեղուն գրական գործունեության: Մի ամբողջ տարի Առաջնորդ Սրբազան հայրը խրատեց, քաջալերեց եւ ուսուցանեց Տիրոջից իրեն վստահված բանավոր հոտին եւ ինչպէս ամեն անգամ իր խոսքը

սկսեց Մբ. Ծննդյան եւ Աստվածահայտնության անի-  
մանալի խորհրդով, որի մասին Սրբազանն այսպէս է  
արտահայտվում. *«Մինչ Քրիստոսի հրաշալի Ծնունդը  
մարդկութիւնը չկարողացաւ իր բանականութեամբ  
ինքզինք բարձրացնել այն մակարդակին, որով պիտի  
կարողանար ըմբռնել այն, որ մարդն ստեղծուած էր  
Աստուծոյ պատկերին համաձայն եւ իր մեջ կը կրէր  
աստուածային սիրոյ ու իմաստութեան ճառագայթումը»:*

Սրբազան հոր խոսքերը լի են կյանքի մասին վեր-  
լուծումներով, որը լինելով Աստծո մեծագոյն պարգևը՝  
չի կարող ինքնանպատակ լինել. այն նախ եւ առաջ  
*«կոչում է մշտապէս ապրելու Աստուծոյ հետ»*, իսկ  
Աստծո հետ ապրել՝ նշանակում է. *«կեանքը հոգևոր ու  
բարոյական արժէքներով փայլեցնել»:*

Շատերս ենք վերլուծում մեր ազգի նախորդ տաս-  
նամյակներում կատարած սխալներն ու արձանագրած  
թերությունները, սակայն քչերս ենք անդրադառնում,  
որ մեր վիճակի հիմնական պատճառը՝ *«Քրիստոնէայի  
սերէն պարպումը ըլլալն է»*, որով՝ *«մենք մեզ կ'առաջ-  
նորդենք հոգևոր կեանքի պարտութեան»:*

Այս իրավիճակից դուրս գալու առաջին քայլը նե-  
րողամտության ոգի ունենալն է, որին Սրբազան հայրը  
կոչ է անում բոլորիս անխտիր՝ *«Բացէք Աւետարանները  
եւ այնտեղէն պիտի քաղենք ոգին ներողամտութեան:  
Այս ոգու բացակայութիւնը կ'օտարացնէ մեզ մեկզմի-  
սէն»:*

Սրբազան հոր հորդորը հստակ ու պարզ է. Մեզանից  
յուրաքանչյուրը քաղաքական կամ հասարակական որ  
բեւեռում էլ որ գտնվի, սոցիալական ինչ կարգավիճակ  
էլ ունենա, աշխատի որ անկյունում էլ որ ապրի, պար-  
տավոր է հիշել որ Քրիստոնէական սերն է եղել մեր



փրկության գրավականը, որ *«Քրիստոսի սիրով պարտութեան ենք մատնած ժամանակներու ընթացքին բոլոր տեսակի փորձութիւնները»*, որ հայի հողը՝ *«Հող չէ միայն, այլ տեսլապաշտ մեր նախնեաց ոսկորներուն փռշիացումն է, որուն մէջէն կ'առնենք պատգամ զգատութեան եւ հոգենորոգութեան*: Մեզանից յուրաքանչյուրը հեռու պիտի պահի իրենից *«հոգու տկարութիւնը եւ անտարբերութիւնը ազգային արժէքներու հանդէպ, քանզի այն համագոր է մեղքին»*:

Ամեն հայրողի յուրովի ապրեց Արցախյան վերջին պատերազմի հարվածները, սակայն քչերս գիտակցեցինք, որ զենքի կողքին եւ զենքից էլ առավել պիտի ապավինենք Տիրոջ ամենահաղթ խաչին, քանի որ խաչով ենք հաղթահարում մեր ներքին թուլություններն ու վախերը, որ. *«Խաչն է ապաւենը մեր կեանքին ու պահպանը ընդդէմ թշնամոյն: Մեր թշնամին կրնայ ըլլալ հաւատքի մէջ երեւացող տկարութիւնը, որ կը մերժենք խաչին զօրութեամբ: Հաւատքին մէջ տկարութիւնը հաւասար է մեղքի եւ այն պարտ ենք անտեսել ու հոգու աչքերով տեսնել ու կերտել մեր կեանքի լուսաւոր արշալոյսը*: Այլ խոսքով՝ իրավունք չունենք *«հոգին շիջուցանել»*: Ավելին՝ *«Այնպէս պիտի դաստիարակենք մեր զաւակները, որ խաչին խորհրդով պարծենան, խաչին լոյսը կրեն իրենց սրտին վրայ որպէսզի Մ. խաչին զօրութեամբ մշտապէս քայլեն Աստուծոյ գծած ճանապարհէն»*:

Ներկա իրավիճակում Հայց. Առաքելական Մր. Եկեղեցու դերը ազգի կյանքում կենսական է եւ անփոխարինելի, իսկ եկեղեցին չի կարող ամբողջությամբ կատարել իր առաքելությունը, եթե այն շարունակում է մնալ պառակտված. *«Գէթ մեր հայրենիքի այս ծանրագոյն օրերուն, չ'ըսելու համար օրհասական պահին,*

*մոռցուած է եւ հայրենի պետականութեան գոյութեան հրամայականը, եւ եկեղեցին արմատապէս իր միութեան մէջ հաստատելու տեսլականը»:* Այսօր «Հաւատի քաջութեամբ պարտ ենք մեր մէջ կոխկոտել «եա»-ը եւ այնպէս ընել, որ այս աշխարհէն բաժնուինք մեր ժողովրդի մեծ երազը՝ եկեղեցւոյ միութիւնը իրականացած տեսնելով»:

Միության հրամայականը անժխտելի է, սակայն նրա հետ մեկտեղ եկեղեցին վերագարթոնքի կարիք ունի. «Հայց. Առաքելական Եկեղեցին այսօր, աւելի քան բոլոր ժամանակներուն, պէտքը ունի ինքզինք բարձրացնելու ծառայութեան նոր մակարդակի մը վրայ հոգեւոր ու աշխարհիկ սպասաւորներով»: «Եկեղեցին մեր տունն է: Եկեղեցւոյ առաքելութիւնը ամբողջական է, երբ հոգեւոր դասը յիովին կը կատարէ իրեն վստահուած հոգեւոր ասանդը, որը դարերու նուիրականութիւն ունի»:

Եկեղեցու առաքելութիւնը չի կարող հաջողվել, եթէ հայ հավատացյալը շարունակի դեգերել օտարների մոտ եւ չվերադառնա Իր հոգեւոր Սոր գիրքը, ով նրան գրկաբաց սպասում է: Ժամանակն է, որ «Ճանաչենք Հայաստանեայց Եկեղեցին, որպէսզի մենք մեզ որդեգրութեան չտանք, այլ վերադառնանք մեզ լոյս աշխարհ բերող մօր գիրկը: Մայր՝ որ իր զաւակաց շնորհեց Աստուածաշունչ Մատենին իօսքը Մեսրոպաշունչ այբուբէնով, հաւատքը՝ ընդդէմ օտար խորհուրդներու, տեսիլքը Հայ Քրիստոնէայի ընտանիքի, խոնարհումի ոգին՝ հայրենի ժառանգին առաջ, հոգեւոր ու բարոյական սկզբունքներով շաղախուած կեանքին զգացողութիւնը...»:

Երբ ասում ենք Հայաստանյայց Առաքելական Մր. Եկեղեցի՝ նախ եւ առաջ հասկանում ենք Մր. Էջմիածին. «Անդադար միմեանց պատգամենք Մր. Էջմիածնի խոր-

*հուրդը եւ այն ժամանակ պիտի տեսնենք, որ ազգն ամբողջ կը վերածնի, կը դառնայ անլռելի կանչը մեր սուրբ նահատակներու»:*

Քարոզգիրքն ընթերցելու ընթացքում, աստիճանաբար փարատվում են մտահոգություններն ու վախերը, ցրվում է մշուշը եւ հույսի ու հավատի նոր լիցք է գալիս՝ հարատելելու հայ քրիստոնյային բաժին հասած պայքարում. «Շարունակենք մեր բարի պատերազմը, եւ կեանքէն մեզ բաժին ինկած փորձութիւնները մերժենք, չտկարանանք, այլեւ զօրացած... վերապրինք ծնունդը մեր նոր կեանքին»: Պիտի՝ «Նորոզենք մեր քրիստոնէական կոչումը ու ծառայութեան ոգին, ամրացնենք մեր քրիստոնէական սիրով շաղախուած ընտանիքները», որպէսզի կարողանանք դիմավորել մեր ազգի նոր արշալույսը:

Խոսքս ցանակնում եմ ավարտել Սրբազան Հոր արթնացնող պատգամով, որն ինձ իբրեւ հայ քրիստոնյայի հույսի եւ լավատեսության նոր լիցք է հաղորդում: Սրդարեւ՝ «Կոչուած ենք կեանքն ապրելու յարութեան խորհրդով, ստեղծագործելու հզօր կամքով ու եռանդով, հայրենական տեսիլքով, մեր էութեան մէջ խեղդելով տկարութեան ցանկացած դրսեւորում եւ քաջ գիտակցելով, որ անժամանակին մէջ օր մը պիտի վեր յառնէ մեր նախնեաց ամբողջական Հայաստանը, պայմանով, որ այս տեսիլքով առաջնորդենք մեր զավակունք այսօր, վաղը եւ յալիտեան»:

Ակնածանոթ՝

Հայկ Մադոյան

Հունիս 15, 2022

## 2021 ԱՂՕԹՔԻ ՏԱՐԻՆ

Ս. Ծննդեան պատարագին 2021 տարին հռչա-կե-ցինք «Աղօթքի Տարին» մեր թեմական կառույցին ներս բազում նկատառումներով: Արդարեւ, այսօր մեր ժողովուրդի կեանքին մեջ աղօթքը պետք է արտայայտուի մեր բովանդակ կեանքով, ե՛ւ անհատական, ե՛ւ հաւաքական առումներով: Մեր տառապեալ ժողովուրդի համար աղօթքի բացակայութիւնը մեզ կ'առաջնորդէ անսպասելի նոր աղէտներու: Աղօթքի մեջ մնանք եւ աղօթքի զօրութեամբ վերհիմաստաւորենք եւ մեր մեջ ամրագրենք հաւատքի զօրութիւնը, փոխանակ մէկզմիւսին նկատմամբ ժխտական կեցուածք որդեգրելու: Տառապող ժողովուրդի մը զաւակները հարկ է, որ առաւել մօտ կանգնին Աստուծոյ եւ աղօթքը արտայայտուի նաեւ մեր ներքին միաբանութեամբ, որով եւ կարելի է ապահովագրել հորիզոնէն անդին մեզ սպասող նոր արշալոյսը մեր հայրենիքին:

Ի՞նչ է աղօթքը, եւ ինչո՞ւ կամ ինչպէ՞ս պիտի աղօթենք:

Աղօթքին մեկնակէտը Աստուած է, որը մեզմէ կը պահանջէ կենտրոնացում եւ յարատեւութիւն, որպէսզի առանց յապաղումի եւ շեղումներու հասնինք մեր նպատակակէտին՝ յաջողեցնելու համար մեր կապը Աստուծոյ հետ: Խորքին մեջ ճշմարիտ եւ իրական աղօթքը կը սկսի Աստուծոյ հետ հանդիպման պահէն, իսկ մինչեւ այդ կատարուածը նախապատրաստութիւնն է: Այնպէս, ինչպէս ինքնաթիռը մինչ իր թռիչքը իր ուժերու առաւելագոյն լարումով կը պատրաստուի

բարձրանալ երկինք, ահա այդ ձեռով ալ պատրաստութիւն կը կատարուի մեր էութեան մէջ: Եւ յանկարծ դէմ առ դէմ ենք Աստուծոյ հետ, աղօթքի պահն է այդ:

Մեր առջեւ կը բացուի նոր կեանքի ճանապարհը՝ Մեծ Պահքով: Քառասնօրեայ հոգեւոր այս ճանապարհորդութեան ընթացքը լուսաւորենք մեր կեանքը Աստուծոյ պարգեւած պատգամներով: Օրերը լեցնենք աղօթքով ու պահեցողութեամբ, հոգեւոր սերտողութիւններով ու բարեգործութիւններով: Մեր այս գրութեամբ կը թելադրենք, որ այս տարի ձեր ձեռքին ունենաք Շնորհալի Հայրապետի, «Հաւատով խոստովանիմ»-ը, Նարեկացու, «Մատեան Ողբերգութեան»-ը, եւ Առաջնորդարանի կողմէ հրապարակուած «Աղօթքով եւ պահեցողութեամբ վերնագրուած» հաւատացեալի ուղեցոյցը: Այս խիստ շահեկան գրքերը ի ձեռքին ունենալով սնուցանենք մեր հոգին ու միտքը, որպէսզի քառասնօրեայ ճանապարհորդութեան ընթացքին մեր քայլերը կարողանանք ուղղել առ Աստուած եւ մեր մէջ վերանորոգենք քրիստոնէական կոչումը:

Մեծ Պահքը քրիստոնէայի կեանքին մէջ այն հանգրուանն է, երբ դէմ առ դէմ կը կանգնենք Անտեսանելիին առջեւ: Անտեսանելին՝ Աստուած է, բայց երբ աղօթքով կ'իջնենք մեր հոգու խորքերը, ապա այնտեղ մեզ դիմաւորողը Աստուած ինք է:

*Փետրուար 11, 2021*

## **“ՆՈՐՈԳՈՂ ՀՆՈՒԹԵԱՆՑ, ՆՈՐՈԳԵԱՄ ԵՒ ՉԻՍ ՆՈՐՈԳ ՉԱՐԴԱՐԵԱՄ”**

(Ռուն, որ կը նորոգես, նորոգէ նաև զիս...)

*Ս. Ներսէս Շնորհալի*

Ս. Ծննդեան Տօներու մթնոլորտին ու տրամադրութեան մէջ ենք բոլորս հոգեւոր վերածնունդի փափաքով մանաւանդ այն սպասումով, որ 2021 տարեշրջանը մեզի պիտի բերէ խաղաղ, առողջ ու բարգաւաճ տարի մը: Ինչքան գեղեցիկ է կեանքը, երբ մեր հոգիներուն մէջ լոյսը վառ կը մնայ եւ անով կը մերժենք սկարութիւնը:

Միրելի բարեպաշտ հայորդիք, այս օրերուն եկեղեցին անընդհատ կը յայտարարէ ու կը կրկնէ Յիսուսի ծննդեան հրաշալի աւետիսը: Եւ այդ ապրող եկեղեցին մենք կը դառնանք, երբ խոստում ու ուխտ կը կատարենք կեանքն ապրելու Աստուծոյ գծած ճանապարհով: Եւ ո՞րն է Աստուծոյ գծած ճանապարհը. - Քրիստոսով ուղեգծուած կեանքի ճանապարհը:

Մեր խօսքն այս սուրբ պատարագին, սիրելի հաւատացեալներ, ուղղուած է բոլորիդ, դուք, որ ֆիզիքապէս ներկայ էք եւ այսօր ի մասնաւորի թեմի առաքելական համայնքներուն, որոնք կազմաւորման ընթացքին մէջ են կամ փոքր են, որոնք օրըստօրէ կը խմբուին կազմելու համար աղօթքի ընտանիքներ, ուր բոլորիս պարտականութիւնն է մեր զաւակները դաստիարակելու քրիստոնէական սիրով ու պատգամներով:

Այս ս. պատարագով կը դիմաւորենք Նոր Տարին, բայց մանաւանդ երկու օրեր վերջ՝ Յիսուսի Ս. Ծնունդը:

Միբելի բարեպաշտ հայորդիք, կ'ուզենք ձեզ տեղեակ պահել, որ այսօր ս. պատարագին մեզի կը միանան մեր թեմի այն ծուխերը իրենց հաւատացեալներով, որոնք հեռաւոր շրջաններու մէջ են, թիւով թէւ Փոքր, բայց եւ սիբելի մեզի համար, որոնք աստիճանաբար կը կազմակերպուին, որպէսզի օր մը Աստուծոյ կամօք ունենան և՛ իրենց եկեղեցին, և՛ իրենց հովիւր: Եւ ինչպէ՞ս կը կազմակերպուին Առաքելական համայնքները (Mission Parishes), եթէ ոչ Առաջնորդի և հոգեւորականներու հոգածու այցելութիւններով ու աշխատանքով և հաւատացելոց ծառայութեամբ:

Եւ ժամանակի ընթացքին կը կազմաւորուին ծուխերը, որոնց հոգեւոր կեանքին առանցքն է աղօթքը ու Աստուծոյ խօսքին քարոզչութիւնը: Կ'աղօթենք առ Աստուած, որ պահպանէ բոլորս Coronavirus-ի համաճարակէն, և մենք անգամ մ'ես պատեհ առիթն ունենանք հովուական այցելութեամբ տեսնելու ձեզ, զօրավիզ ըլլալու և աջակցելու ու մանաւանդ խանդավառ տրամադրութեամբ մեր գնահատութիւնը բերելու ձեզ ձեր ծառայութեան համար:

Նայեցէ՛ք երկնքի թռչուններուն, թէ ինչպէս կը կառուցեն իրենց բոյնը: Բազում պտոյտներով իրենց կտուցին կը բերեն թեթեւ ճիւղեր եւ կը կառուցեն իրենց ամուր տունը: Եւ քամին ու անձրեւները անկարող կը դառնան վտանգելու բոյնը: Ահաւասիկ ճիշդ նոյն ոճով, աշխատանքով ու ծառայութեամբ պիտի ստեղծէք ձեր համայնքներն ու եկեղեցիները:

Մենք ուրախ ենք, որ այսօր առցանց մեզի կը միանան ոչ միայն մեր արանդական համայնքներէն հաւատացեալներ, բայց նաեւ հաւատացեալներ հետեւեալ համայնքներէն. Turlock, Lake Tahoe, Reno, Tuscon, Riverside, La Verne, Denver, Carmel, Bakersfield, New Mexico,

Victorville, Santa Barbara, San Luis Obispo, United States of Mexico և այլ համայնքներ:

Մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած բոլորիս համար, որպէսզի Յիսուսի Ծննդեան Տօնը և Նոր Տարին բոլորիս առջեւ բանայ կեանքի նոր ճանապարհը:

Յիշեցէք, որ մենք կը պատկանենք Աստուծոյ, և ս. մկրտութեամբ որդեգիր ենք Քրիստոսի եկեղեցոյ: Եւ եթէ անցնող տարի ունեցանք փորձութիւններով լեցուն տարի մը, ապա Աստուած մեզի տուած է հաւատքի զօրութիւն ու իմաստութիւն՝ դիմագրաւելու բոլոր տեսակի մարտահրաւէները:

Միրելիներ, մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած աշխարհի խաղաղութեան համար, որ մարդիկ Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ առաջնորդեն իրենց կեանքը և բարին ստեղծենք: Մեր աղօթքն է, որ խաղաղ ու բարգաւաճ տարի մը ապրի Մայր Հայաստանն ու Արցախը: Մեր աղօթքն է, որ հիւրընկալ Ամերիկայի տարածքին ապրող մարդիկ և մեր ժողովուրդի զաւակունք իրենց կեանքը շարունակեն ստեղծագործ ոգով, բայց մեր պարագային՝ հայրենիքի սիրով ու մեր ս. եկեղեցոյ հանդէպ հաւատարմութեամբ:

Մենք մեր ձեռքերով պիտի կերտենք նոր գալիք արշալոյսը: Դեսպանները պիտի դառնանք ապագային և մեր հաւատքը պիտի դարձնենք տեսանելի, օրինակելի ու բացառիկ՝ մեր ծառայութեամբ:

Ահաւասիկ այս ոգին է, որ իր նոր ծնունդը կ'ապրի մեր մէջ Յիսուսի Ծնունդով, որուն հետ պարտ ենք հրաշագործել մեր կեանքը՝ հայրենասիրութեամբ ու եկեղեցասիրութեամբ, հայ ընտանիքը դարձնելով մանրակերտ, Հայաստան-Ս. Էջմիածին յաիտենական սրբու-



թին սրբոցներով, որպէսզի մեր յարգանքը ու խոնարհումը մեր նահատակներու հոգիներուն առջեւ ըլլայ ճշմարիտ ու ազնիւ:

“Նորոգող հնութեանց, նորոգեա՛ եւ զիս նորոգ զարդարեա”:

*Յունուար 4, 2021*

## ՄԲ. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ

«Զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք» (Գործք 17:28):

“C'est en lui que nous avons l'être, le mouvement et la vie”

(Act. 17:28)

Քրիստոսի Ծնունդը մարդկութեան հոգևոր էութեանը մէջ բացայայտուած գերագոյն ճշմարտութիւնն է՝ Աստուածայայտութիւնը: Մինչ Քրիստոսի հրաշալի Ծնունդը մարդկութիւնը չկարողացաւ իր բանականութեամբ ինքզինք բարձրացնել այն մակարդակին, որով պիտի կարողանար ըմբռնել այն, որ մարդն ստեղծուած էր Աստուծոյ պատկերին համաձայն և իր մէջ կը կրէր աստուածային սիրոյ ու իմաստութեան ճառագայթումը:

Քրիստոսի Ծնունդը մարդկութեան հոգիներուն մէջ խնամարհած Աստուածորդու մարդկութեան խորհուրդն է, որպէսզի մարդը բարձրանար առ Աստուած: Հաւատքի այս գիտակցութիւնը առաջնորդեց նաև առաքելները, որոնք խորագոյնս ըմբռնեցին քրիստոնէական վարդապետութիւնը և այն քարոզեցին որպէս հոգևոր աւանդը Տիրոջ կողմէ իրենց վստահուած. «Որովհետև Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3:16): Եւ այս նոյնին քարոզիչը դարձաւ նաև Պօղոս Առաքելայր, որուն ողջ քարոզչութիւնը ամփոփուած է այս խօսքին մէջ.

«Զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք»:

Յիսուսի Ծնունդը հայելին է մարդկութեան լինելիութեան: Իր Ծնունդովը պիտի պայմանաւորենք մեր

կեանքի ճանապարհը և այնուհետև քայլ առ քայլ պիտի հետևինք Տիրոջ կեանքին, որպէսզի իր մէջ տեսնենք նաև մեր կեանքը՝ իր բոլոր հանգրուաններով: Անոր հրաշալի Ծնունդը պարտաւորեցնող է, որ մշտապէս ապրինք ու գործենք խոնարհ ոգով, աղօթքով ու հաւատքով և աւելին՝ մեր կեանքը վերածենք կենդանի Աւետարանի, լոյսը՝ մարդկանց կեանքին մէջ, աստուածային ներշնչումը մէկզմիւսի կեանքին մէջ:

Ինչքան խորհրդածութիւններու աղբիւր կը դառնայ Յիսուսի Ծնունդը բոլորիս համար անխտիր, եթէ երբէք մանուկի մը անմեղ ու մաքուր սրտով ու հոգով մեր էութիւնը դարձնենք ու վերածենք Բեթղեհէմ սուրբ քաղաքին և տօնախմբենք մեր առջև բացուած նոր կեանքին ճանապարհորդութիւնը առ Աստուած: Եւ այն ժամանակ Աստուած կը կարդայ մեր սրտին խորքերուն խորհուրդը, որ փափաքն ունինք ապրիլ Քրիստոսի նմանակցութեամբ:

Մեծ փիլիսոփան Փասքալ գեղեցիկ կերպով է սահմանած այս ճշմարտութիւնը հետևեալ բառերով.

*“C’est le coeur qui sent Dieu, et non la raison. Voilà ` ce que c’est que la foi: Dieu sensible coeur, non a la raison.”*

*«Միրտն է, որ կը զգայ Աստուծոյ ներկայութիւնը, և ոչ թէ բանականութիւնը: Ահաւասիկ թէ ի՞նչ է հաւատքին դերակատարութիւնը: Աստուած՝ սրտին մէջ, և ոչ թէ ծնունդը բանականութեան»:*

Յիսուսի Ծնունդը 2021-ի տարեմուտին մարդկութեան կեանքին մէջ կը տարածէ նոր կեանք, հաւատքի ու յոյսի առատացում: Քանզի 2020 տարին աշխարհի կեանքը փոթորկեց քորոնավիրուսի համաճարակով, անթիւ մարդկային կեանքեր խլեց, ընկերային կեանքի ու տնտեսութեան ճգնաժամի մը առաջ կանգնեցուց

աշխարհը: Եւ այս իրավիճակին մէջ մեր ազգն ու հայրենիքը ունեցան ծանր կորուստներ և՛ Արցախի հողատարածքներու զիջումով, և՛ երիտասարդ քաջարի զինւորներու նահատակութեամբ: Այս բոլորը, սակայն, պէտք է յաղթահարել և անտարակոյս Յիսուսի Ծնունդը՝ մեր քրիստոնէական հաւատքը, յոյսն ու սէրը կը դարձնէ անկոտորում, որ շարունակենք մեր բարի պատերազմը, և կեանքէն մեզի բաժին ինկած փորձութիւնները մերժենք, չտկարանանք, այլև՝ աւելի զօրացած, Յիսուսի Ծնունդով մեր մէջ վերապրինք Ծնունդը մեր նոր կեանքին:

Քրիստոնէական հաւատքը մեր հոգու աչքերուն մտասնեռումը կը կենտրոնացնէ Աստուծոյ վրայ, որուն մէջ կը գտնենք նաև նպատակն ու առաքելութիւնը մեր կեանքին: Այլ խօսքով՝ Աստուծոյ վրայ հաստատուած ու խարսխուած կեանքը մեր մէջ կ'արթնացնէ նաև աստուածային կոչումը՝ ծառայելու մարդկութեան և հաւատքի գիտակցական այն կեանքը, որն եղած է ուղին մեր նախնեաց: Եւ այստեղ է, որ քրիստոնէական մեր հաւատքը մեր մէջ կը խորացնէ նաև տեսլապաշտ կեանքը: Ուրեմն, քրիստոնէական հաւատքը մեր մէջ արթուն կը պահէ ճանաչողութիւնը աստուածային պատուիրանաց, ինչպէս կը խորհրդածէ նաև Էմմանուէլ Քանթ փիլիսոփան.

*“La religion est la connaissance de uo nos devoirs comme commandement divins.”*

*«Կրօնքը՝ ճանաչողութեան չափորոշիչն է մեր պարտականութեան, որպէս աստուածային պատուիրանները»:*

Քրիստոս Ծնաւ և յայտնեցաւ,  
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի:

Միրելիներ, միմեանց ողջունենք բարի ակտիստվը Յիսուսի Օնունդեան: Քաջ գիտակցինք, որ Քրիստոսի Օնունդը՝ Աստուծոյ ներգործութիւնն է մեր կեանքին մէջ, որպէսզի մեր էութեան խորքին երբէք չմարի հոգևոր վերածնունդին տեսիլքը: Ինչքան տկար է մարդը իր էութեամբ, նոյն մարդը իր մէջ ունի նաև Աստուածադիր զօրութիւն ու իմաստութիւն, որպէսզի մերժէ տկարութիւնն ու փորձութիւնները և ոտքի կանգնելով շարունակէ ապրիլ լուսաւոր կեանքով: Ուրեմն, ապրինք հոգևոր Օնունդը և մեր առջև բացուած Նոր Տարին լեցնենք բարի ապրումներով. կերտենք նոր կեանք, նորոգենք մեր քրիստոնէական կոչումը ու ծառայութեան ոգին, ամրացնենք մեր քրիստոնէական սիրով շաղախուած ընտանիքները՝ մշտապէս մեր հոգիին սլաքն ուղղելով առ Աստուած և հայրենիք, որոնք տեսանելիօրէն ու շօշափելիօրէն մեզ կը հաղորդեն Աստուծոյ այցը մեր ժողովուրդին, յանուն հաւատքի ու հայրենիքի պատարագուած կեանքի վկայութիւնը՝ Ս. Էջմիածնի միտոնահամբոյր, աստուածադրոշմ կառոյցին մէջ ամրագրուած:

Յիսուսի Օնունդը խոնարհ կեանքով ապրելու հրաւերն է: Թող Սանուկ Յիսուսի լուսեղէն ներկայութիւնը պայծառակերպէ նաև իւրաքանչիւրիս կեանքը: Կեանքը գեղեցիկ է ու օրհնուած, երբ մարդը կ'ապրի Յիսուսանման կեանքի օրինակով: Յիսուսի նմանակցութեամբ ապրուած կեանքը իր մէջ կը կրէ ու կը բաշխէ աստուածային սէր ու իմաստութիւն, և մանաւանդ ոգին խաղաղութեան:

**Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,  
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի:**

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

Ս. Ծննդեան Տօնին յաջորդող այս առաջին Կիրակին մեզի կը ներկայացուի Աւետարանական երկու դասերը. Առաջինը՝ Եբրայեցոց 12-րդ գլուխէն քաղուած «Աստուծոյ հայրական խրատը» վերնագրուած պատգամն է, իսկ երկրորդը՝ Ղուկասու Աւետարանէն մեզի տրուած պատմութիւնը, թէ ինչպէս Ս. Կոյս Մարիամ կ'այցելէ Եղիսաբէթին եւ կը ստանայ անոր օրհնութիւնը եւ կը պատասխանէ Աստուծոյ կանչին:

Այսօր հիմնականին մէջ կ'ուզենք մեր օրուայ պատգամը կենտրոնացնել Պօղոս Առաքեալի Եբրայեցոց ուղղուած պատգամին վրայ, որուն ունկնդիր պէտք է ըլլանք բոլորս, որովհետեւ շատ կարեւոր դասեր ունինք քաղելիք առաքեալին կողմէ տրուած խօսքերէն: Եւ ինչու՞ համար եկեղեցին կը քարոզի Աստուծոյ խօսքը՝ Քրիստոսով ու Առաքեալներով մեզի հաղորդուած: Պատասխանը պարզ է եւ շատ օգտակար. որովհետեւ Տէրունական պատգամները մարդուն հոգեւոր կեանքը կը մշակեն եւ մեր մէջ կ'ամրացնեն Աստուծոյ պատկերը, որուն համաձայն ենք ստեղծուած: Եւ ամբողջ Աւետարաններն ու առաքելական թուղթերը, որպէս մէկ ամբողջութիւն, մեզի կը ներկայանան որպէս կեանքի գիրքը: Այստեղ բնականօրէն ի նկատի պէտք է առնել Աստուածաշունչ մատեանին ամբողջութիւնը:

Օրուայ Առաքելական թուղթը՝ ուղղուած Եբրայեցիներուն, առաջին հերթին մեզի կը խօսի Աստուծոյ կողմէ մեզի տրուած խրատի մասին, եւ այն այնուհետեւ կը համեմատուի Հայր եւ զուակ փոխյարաբերութեան հետ:

Առաքեալը բոլորիս կ'ուղղէ հետեւեալ խօսքը. «Որ-  
դեա՛կ, մի՛ արհամարհէր Տիրոջ խրատը, եւ մի՛ վհասիր,  
երբ քեզ յանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ,  
կը նշանակէ թէ քեզ իւր զաւակ կ'ընդունի» (Եբր. 12:5-6):

Այս խօսքին մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ ան-  
սահման սիրոյ արտայայտութիւնը բոլորիս նկատմամբ:  
Անոր աստուածային խրատները կը միտին մաքրել մեր  
հոգեւոր էութիւնը: Անոր խրատները թերեւս յանդիմա-  
նութիւն ըլլան մեր գործած սխալներուն համար, բայց  
երբ ունկնդիր կը դառնանք Աստուծոյ խրատներուն,  
առաջին հերթին կը զգանք Անոր սէրը եւ մանաւանդ  
այն հանգամանքը, որ Աստուած մեզ կ'ընդունի որպէս  
իր զաւակները:

Այստեղ Առաքեալը մեզ կը յիշեցնէ հետեւեալը.  
«Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը,  
գիտենալով, որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ»: Այս  
համեմատականէն յետոյ Առաքեալը մեզի կուտայ յա-  
ւելեալ բացատրութիւններ, որոնց դուք ծանօթ էք որ-  
պէս ծնողներ, որովհետեւ երբ ձեր զաւակները սխալ  
գործերով են առաջնորդուած, ապա դուք կը յանդիմա-  
նէք, եւ սակայն մենք մեր յարգանքը ծնողաց հանդէպ  
կը պահենք, որովհետեւ քաջ կը գիտակցենք այն ճշմար-  
տութեան, որ մեզի տրուած յանդիմանութիւնը իրօք  
ծնողական սիրոյ եւ մտահոգութեան արդիւնքն է:

Առաքեալը իր խրատականին մէջ կը կատարէ հե-  
տեւեալ համեմատականը, ուր Աստուծոյ յանդիմանու-  
թիւնը կը համապատասխանէ ծնողաց յանդիմանու-  
թեանը. «Ուրեմն, որքա՛ն աւելի հնազանդ պէտք է ըլ-  
լանք հոգիներու Հօրը (Աստուծոյ), որպէսզի կեանք  
ունենանք»: Հետեւաբար, Աստուծոյ խրատականով է  
պայմանաւորուած ճշմարիտ կեանքը, քանզի «Աստ-

ուած կը խրատէ մեր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան» (Եբր. 7-10): Վերջապէս, Առաքեալին խօսքին եզրակացութիւնն այն է, որ «Աստուծով կրթուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը տրուի»:

Առաքեալի այս խօսքը, միայն Աստուած եւ մարդ ծնողք ու զաւակ փոխարարութեան մասին չէ. Որպէս ճշմարիտ զաւակներ մենք պարտ ենք նաեւ մէկգմիւսին խրատել: Քանզի խրատել մեր մէկ նմանին կը բացատրէ սէր ցոյց տալ անոր նկատմամբ, հոգատար ըլլալ եւ մեր կեանքի օրինակելի ընթացքով դառնալ Աստուծոյ ս. ձեռքերը միմեանց կեանքի մէջ:

Այս է օրուայ Առաքելական թուղթէն քաղուած շատ պարզ, բայց այնքան էական պատգամը մարդկութեան կեանքին մէջ ապահովելու համար խաղաղութիւն իմաստը բառին լման առումով:

Իսկ օրուայ Աւետարանական դասը ուղղակի կապուած է Ս. Կոյս Մարիամի հետ, որ հնազանդեցաւ Աստուծոյ կանչին, իր մէջ կրեց Աստուածորդին՝ Յիսուս Մանուկը, որուն ծնունդը մեր ս. Եկեղեցին կը շարունակէ տօնախմբել ութ օրեր շարունակաբար: Եւ Ս. Ծննդեան տօնախմբութենէ յետոյ մանուկ Յիսուսի հետ մանկացած կը վերսկսինք մեր կեանքի ճանապարհորդութիւնը, որպէսզի հեռու չմնանք Աստուծմէ եւ Անոր կենսատու խօսքերով ապրինք մեր կեանքը:

Մեր պատգամն է, սիրելի հաւատացեալներ, որ մշտապէս աղօթքի առաջնորդէք ձեր քայլերը եւ հոգեւոր կեանքով հարստացնէք ձեր ողջ էութիւնը: Մեր յարատեւ ուխտագնացութեամբ ու աղօթքի կեանքով ականատես պիտի դառնանք Յիսուս Մանուկի աճող կեանքին եւ Անոր կեանքը դարձնենք հայելին մեր կեանքին: Եւ ինչքա՛ն ուշադիր ու կենտրոնացած հետեւինք Անոր



կեանքին, ապա այն ժամանակ մեր ամբողջ կեանքի  
ելեւելջները պիտի հասկնանք, որ նման է Տիրոջ կեան-  
քին: Ուրեմն, օրուայ հոգեւոր պատգամները մեզ կը  
հրաւիրեն լսելու Աստուծոյ պատուիրանները, պատաս-  
խանելու Նրա կանչին եւ ապրելու Քրիստոսի նմանակ-  
ցութեամբ: Ամէն:

*Յունուար 9, 2021*

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Այս տօնը Քրիստոս Աստուածորդու ծնունդէն յետոյ քառասնօրեայ մանուկ Յիսուսի Տաճար ընծայման օրը կը նշանաւորէ մեր ս. Եկեղեցոյ կեանքին մէջ: Եւ այս հիմքով է, որ հայ քրիստոնէայ ընտանիքին մէջ լոյս աշխարհ եկող մեր մանուկները մեր նախնեաց աւանդութեամբ ս. Եկեղեցի կը բերենք եւ խորանին ընծայումով փառք կը վերառաքենք Աստուծոյ մեզի տրուած պարգեւին համար, միաժամանակ կատարելու նաեւ խոստումը, որ Աստուծոյ կողմէ մեզի վստահուած մանուկին կեանքը պիտի լեցնենք Յիսուսի պատկերով:

Տեառնընդառաջ – այս տօնին խորհուրդը մեծ է, որովհետեւ կոչում ու հրաւեր կը ստանանք կեանքն ապրելու համար Աստուծոյ հետ մշտապէս: Այս ճանապարհորդութիւնը կը սկսի քառասնօրեայ մեր մուտքովը ս. Եկեղեցի եւ առաջնորդուած դէպի խորան, եւ այնուհետեւ այն պէտք է ունենայ իր ամբողջական նուիրումը Աստուծոյ ս. Խորանին:

Մեր ազգի կեանքի մէջ եկեղեցին՝ Աստուծոյ տունը, որտեղ մենք բոլորով աղօթքի ենք կանգնած, այն սրբատեղին է, ուր մեզմէ իւրաքանչիւրին կեանքը կը սրբուի ու կը լեցուի աստուածային սիրով ու իմաստութեամբ:

Այսօր, կանգնած ենք այն սուրբ խորանին առջեւ, ուր մեր մանուկ հասակին մեր ծնողները մեզ բերին որպէս ընծայում Աստուծոյ ընդառաջ: Այսօրուան աղօթքը մեզ կը հրաւիրէ, որպէսզի վերանորոգենք մեր հաւատքին կեանքը: Եւ ինչպէ՞ս պիտի ապրի այդ հաւատքը մեր մէջ. Քրիստոսի սերը պարտ ենք դարձնել լոյսը մեր կեանքին, նպատակը մեր հոգեւոր ճանապարհորդութեան, ուղին՝ հայ քրիստոնէայ ընտանիքին: Քանզի

հաւատքով ապրուած կեանքը մեզ հեռու կը պահէ չարէն եւ միայն կը մօտեցնէ Աստուծոյ:

Տեառնդատաջ: Թարգմանենք այս բառը: Տիրոջ ընդ առաջ: Աստուծոյ ներկայութեան: Այս գիտակցութիւնը պարտ ենք ապրել հաւատքով, եւ այն ժամանակ մեր հոգու բուրվառին մէջ պիտի տեսնենք Աստուծոյ ներկայութիւնը: Ուրեմն, եկեղեցի ենք եկած լեցուելու Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ, բայց մանաւանդ այն ուխտին համար, որը իրաքանչիւրէս կը սպասուի:

Այսօր մանուկներու տօնն է: Այսօր տօնն է մանաւանդ նորապսակներու, եւ տակաւին բոլոր անոնց, որոնք տեսիլքն ունին ստեղծելու հայ քրիստոնեային վայել սուրբ ընտանիքը: Ուրեմն, բանա՛նք մեր սրտերը այս ոգով լեցուած, նոյն ոգին մեզ հետ տանի՛նք մեր տուները, որպէսզի մեր զաւակաց հոգիներուն մէջ մեր աղօթքը դառնայ լոյսն աստուածային:

Մեր կեանքի բոլոր օրերը պիտի ապրինք Տեառն ընդ առաջ: Քանզի Աստուծոյ ներկայութեան ապրուած կեանքը սուրբ է: Քառասուն օրեր առաջ Աստուած օրհնեց մեր կեանքը իր Միածին Որդու՝ Յիսուսի ծնունդով: Այսօր Յիսուսի քառասնօրեայ տաճար ընծայման տօնին ուխտի հրաւեր կը ստանանք մեր կեանքը ընծայաբերելու Աստուծոյ ս. սեղանին եւ նոյն կեանքը շարունակել ապրելու Յիսուսի հետ: Ահա այս է խորհուրդը Տեառնընդառաջի տօնին: Աստուծոյ հրաւերն է այս տօնը բոլորիս: Ուրեմն, պատասխանենք սիրով ու խոնարհումով:

*Փետրուար 2, 2020*

## ՆՈՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բուն Բարեկենդանի կիրակիով քրիստոնեայի կեանքին մեջ կը բացուի մեր հոգեւոր ճանապարհորդութեան նոր դուռը: Եւ երբ մուտք կը գործենք այս դռնէն ներս, քառասնօրեայ աղօթքի, պահեցողութեան ու հոգեւոր ընթերցումներու ամբողջ ժամանակահատուածը մեզի համար կը դառնան սրբութեան օրեր, եւ ամենէն էականը Աստուծոյ ներկայութեան մնալու խոստումին իրականացումը:

Քառասուն եւ աւելի տարիներ շարունակ խօսած ու քարոզած ենք Մեծ Պահքի մասին: Այս պահուն կ'ուզենք կատարել ընդգծում մը, որ քառասնօրեայ այս հոգեւոր ճանապարհորդութիւնը կը համապատասխանէ Քրիստոսի քառասնօրեայ մեկուսացումին անապատին մէջ: Անապատին մէջ Ան առանձինն էր, բայց ոչ մենակ: Հայր Աստուծոյ ներկայութեան էր Ան եւ կը լեցուէր ս. հոգւոյ զօրութեամբ: Ուրեմն, եթէ Քրիստոս Աստուածորդին իր երկրաւոր առաքելութիւնն սկսելէ առաջ իր մէջ զգաց աղօթքին զօրութեամբ լեցնելու պահը, ապա ինչքա՞ն էս մենք նոյնին անհրաժեշտութիւնը ունինք: Մեզմէ սպասուածը ոսկի ու արծաթ չէ, բայց միայն աղօթքի հրաւերին պատասխանը, որպէսզի փայլեցնենք կեանքը հոգեւոր ու բարոյական արժէքներով, որովհետեւ կեանքը ամենէն թանկագին նուէրն է Աստուծմէ, եւ այն պէտքը ունի հոգածութեան եւ խնամքի: Աստուածաշունչ մատեանը, մեր ս. եկեղեցին, մեր նախնեաց աղօթքներն ու շարականները, երբ դարձնենք հոգեւոր գործիք հոգեւոր այս ճանապարհորդութեան ընթացքին, ապա մեր սրտին ու հոգիին վրայ հաւաքուած փոշին կը մաքրենք:

Օրուայ Աստուածաշնչական ընթերցումները՝ Եսայի մարգարէութիւն (Գլուխ 13:11-14), եւ Մատթէոսի Աւետարան (Գլուխ 6:1-21) մեզի կը խօսին հիմնականօրէն աղօթքի ու պահեցողութեան մասին: Հետեւաբար, թող այս ընթերցումներու ոգով առաջնորդենք մեր հոգեւոր կեանքը, որպէսզի նորոգենք մեր կեանքի ընթացքը, մեր էութեանը մէջ գտնենք Աստուծոյ ներկայութիւնը եւ Անոր պարգեւած բարիքները:

Միրելի ծնողներ, հետամուտ եղէք սորվեցնելու ձեր զաւակներուն մեր եկեղեցոյ աղօթքները: Ինչքան հաճելի է, երբ կը տեսնենք, թէ զաւակները կը խաչակնքեն ու կ'աղօթեն, բայց ցաւ կ'ապրինք, երբ կը տեսնենք, որ դեռ շատ-շատեր հեռու են հաւատքի կեանքէն եւ նոյնիսկ կը դժուարանան խաչակնքել: Մեր հաւատքի առաքելութեան մէջ պէտք է նոր քայլեր ձեռնարկենք: Մեր համայնքի մէջ դեռ ինչքան երիտասարդներ եւ չափահասներ ունինք, որ դեռեւս մկրտուած ու դրոշմուած չեն: Այս թերիւնները պիտի սրբագրենք եւ ուղին բռնենք վերապրելու մեր հաւատքը:

Մեր առջեւ բացուող Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութիւնը պիտի արժեւորենք նաեւ տուն դարձով, մկրտութեամբ ու եկեղեցասիրութեամբ: Մեր խօսքը կը վերաբերի ի մասնաւորի անոնց, որոնք դեռեւս չեն ներգրաւուած եկեղեցոյ առաքելական կեանքին մէջ: Եւ այս առաքելութեան մէջ յաջողութիւն կ'արձանագրենք միայն ձեր օգնականութեամբ: Դուք մեզ հետ պիտի քարոզէք ու աշխատանք տանիք: Բոլորիս պատիւը պիտի ըլլայ մեր ազգի հօտի կորուսեալ զաւակները բերել իր աղօթքի տունը: Ահաւասիկ այս մօտեցումը որդեգրելով՝ ցոյց տուած կ'ըլլանք աղօթքի ու պահեցողութեան գործնական քայլ մը:

Ս. Ծննդեան մեր քարոզով մենք պատգամ յղեցինք, որ Աղօթքը այս տարի դարձնենք մեր կեանքի նշանաբանը: Տեսանելի է, որ մեր ժողովուրդի զաւակներէն շատեր ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի հեռացած են աղօթքի կեանքէն եւ աւելի ապաւինած են նիւթին: Անոր արդիւնքն է սիրոյ ու յարգանքի բացակայութիւնը

Աղօթքը մեզ կը կապէ Աստուծոյ: Աղօթքը մեզ կը դաստիարակէ՝ ցոյց տալով մարդկանց հետ յարաբերութեան ճշմարիտ եղանակը: Եւ եթէ աղօթքի մէջ ձեր կեանքն առաջնորդելու պէտք ունիք, ապա մենք՝ հոգեւորականներս, պատրաստ ենք ուղղութիւն տալու ձեզ եւ տրամադրելու աղօթագրքեր, որպէսզի այն դարձնենք բանալին ձեր աղօթքի կեանքին:

Մեր կոչն է, որ մօտիկէն հետեւիք մեր ցուցումներուն եւ այսօրուրնէ սկսեալ մինչեւ Զատիկ երկարող ժամանակը աղօթքով ու պահեցողութեամբ նուիրէք Աստուծոյ, եւ ձեր հոգեւոր կեանքի վերածնունդին:

Յատկանշական է, որ այս տարի Տեառնընդառաջը եւ Բուն Բարեկենդանը միասնաբար կը տօնենք: Ահաւասիկ մեզի համար առիթ մը եւս, երբ շեշտուած պատգամ կը տեսնենք՝ մշտապէս մնալու Աստուծոյ ներկայութեան եւ նոյնին ներշնչումը փոխանցելու բոլորին:

*Փետրուար 14, 2021*

## ՄԵԾ ՊԱՀՔ՝ ԴՈՒՌԸ ՆՈՐ ԿԵԱՆՔԻՆ

«Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեացէ,  
եւ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն»:

(Մաղմոս 101: 2-3)

Մեր սուրբ եկեղեցոյ հայրերը ինչքա՛ն խորիմաստ քայլեր են որդեգրած մեր առջեւ բանալու համար դուռը՝ նոր կեանքին: Մեծ Պահքը՝ դուռն է նոր կեանքին: Ինչո՞ւ եւ կամ ինչպէ՞ս, որովհետեւ քառասուն օրերու աղօթքի ու պահեցողութեան շրջանը քրիստոնէային կեանքին մէջ կը դառնայ սրբութեան ժամանակահատուածը, որպէսզի տեսնենք Աստուծոյ երեսը:

Մարդը առհասարակ եւ այս պարագային մեր խօսքն ուղղելով հայ քրիստոնէային, պէտքն ունի իր հոգեւոր կեանքը մշտապէս լեցնելու Աստուծոյ ներկայութեամբ, որպէսզի մեր հոգիէն բխում առած բառերը ըլլան խօսքն Աստուծոյ, եւ մեր արարքները՝ նոյն աստուածային խօսքին շօշափելի արտայայտութիւնը:

«Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց...»:

Տէ՛ր Աստուած, լսէ՛ իմ աղօթքին ձայնը: Առ Աստուած ուղղուած մեր աղօթքին խնդրանքը անկեղծ սրտով պիտի ներկայացնենք, եւ այն զգացողութեամբ, որ անոր ներքին պահանջն ու փափաքն ունինք. Քայլելու առ Աստուած եւ Անոր ներկայութեամբ ապրելու ու ըմբռնելու նոր կեանքը:

Մեր սրտէն բխած աղօթքով կը դիմենք Աստուծոյ, եւ կը խնդրենք Աստուծմէ, որպէսզի լսէ ձայնը մեր

սրտին եւ առաջնորդէ մեր քայլերը դէպի լոյս եւ ճշմարտութիւն:

«Աղաղակ իմ առ քեզ եկեացէ»:

Մաղմուսերգուի այն բառերը կը շեշտեն մեր սրտի փափաքը, որպէսզի մեր աղօթքը իր թոհչքով հասնի Աստծուն, որովհետեւ մեր հոգեւոր կեանքը ծարաւի է Աստուծոյ խօսքին, Անոր սիրոյն ու իմաստութեան:

«...Մի՛ դարձուցանէր զերեսս քո յինէն»:

Մաղմուսերգուի այս բառերն ալ խնդրանք են, որպէսզի Աստուած չմերժէ իր ողորմութիւնն ու գթութիւնը մեր նկատմամբ:

Մեծ պահքի հոգեւոր ճանապարհորդութեան ընթացքին կը թելադրենք, որ ամէն առաւօտ, երբ մեր աչքերը կը բանանք, արեւի լոյսին հետ մեր սրտի խորքերէն արտասանենք սաղմոսի այս բառերը.

«Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեացէ, եւ մի՛ դարձուցանէր զերեսս քո յինէն»:

Նոյն այս բառերը արտասանենք երեկոյեան ննջելէ առաջ, որպէսզի մեր միտքն ու հոգին ապաւինի Աստուծոյ ձեռքերուն մէջ: Շարունակելով մեր հոգեւոր քայլերը Մեծ Պահքի ընթացքին՝ ընտրութիւն կատարենք մեզի հրամցուած աղօթքներուն ու ընթերցումներուն մէջէն, որպէսզի մեր ողջ էութիւնը զարդարենք երկնայինին խորհուրդով: Մեծ Պահքի քառասնօրեայ հոգեւոր ճանապարհորդութիւնը անպայմանօրէն պիտի տարբերի տարուոյ մնացեալ օրերէն: Մեծ Պահքի



Ժամանակահատուածը հոգեւոր պատրաստութեան բացառիկ այն առիթն է, որ մեր մէջ ծնի նոր մարդը, եւ մաքուր սրտով կարող դառնանք դիմաւորելու մեր Տիրոջ Յարութիւնը՝ խարիսխը մեր հաւատքին:

Ուրեմն, մեր թելադրութիւնն է, որ օրուայ մէջ եւ առաւելաբար առաւօտեան արշալոյսին մի քանի բոպէ յատկացնենք աղօթքի եւ օրուայ Աստուածաշնչական հատուածի ընթերցումի, եւ այն ժամանակ պիտի ըլլայ օրինուած օր, ճանապարհորդութիւն Աստուծոյ հետ:

Մեծ Պահքի քառասնօրեայ ճանապարհորդութեան ընթացքին համար մեր ս. եկեղեցոյ հայրերը հաստատած են մասնաւոր արարողակարգեր, իրենց յատուկ աղօթքներով, շարականներով ու Աստուածաշնչական ընթերցումներով, որոնք իրենց բովանդակութեամբ ու քաղցրաշունչ եղանակներով հաւատացեալի հոգին կը պարուրեն Աստուածային սիրով՝ տեղ չձգելով, որ խաւարը իշխէ մեր կեանքին վրայ: Եւ այս պահուն է, որ խաղաղութեամբ նոր օծում մը կը ստանայ մեր հոգին, միտքն ու սիրտը: Որովհետեւ Քրիստոսի Յարութիւնը դժուար պիտի ըլլայ դիմաւորել առանց նորոգուած էութեան:

Օրական ձեր աղօթքներու ու ընթերցումներու հետ համատեղ հաւատացեալներուն կը ներկայացնենք հոգեւոր խորհրդածութիւններ, որոնք քաղած ենք մեր ընթերցումներու ընթացքին: Յուսալից ենք, որ մեր խորհրդածութիւններու մէջ պիտի ապրիք նաեւ մեր սրտի աղօթքը:

*Յունուար 18, 2021*

## ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ

«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ ու քու ամբողջ մտքովդ: Այս է մեծը եւ առաջին պատուիրանը. Եւ երկրորդը՝ ասոր նման է. պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ օրէնքը եւ մարգարէները»:

(Մատթ. 22:34-40)

«Եւ ձեզմէ մեծը ձեր սպասաւորը պէտք է ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ կը խոնարհեցնէ իր անձը՝ պիտի բարձրանայ»:

(Մատթ. 23:11-12)

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

Մեծ Պահքի 6-րդ կիրակին է այսօր, զորս մեր սուրբ եկեղեցոյ մէջ արձանագրուած է որպէս Գալստեան կիրակի: Նոյն ժամայն այս կիրակին կանխող Շաբաթ օրը Ս. Գրիգոր Լուսաւորիչի մուտն ի Վիրապի Տօնն է, որուն համար այս եկեղեցին կը տօնախմբէ իր անուանակոչութիւնը, ուխտի օրը իր հաւատացելոց համար: Օրուայ Աւետարանական ընթերցումները, շարականներն այնքան հարուստ եւ ոգեշնչող են իրենց բովանդակութեամբ, որ գրեթէ անկարելի է ամբողջովին անդրադառնալ քարոզի մը սահմաններուն մէջ: Ահա այդ իսկ պատճառով օրուայ աւետարանական ընթերցումներէն կ'ընտրենք միայն երկու պատգամ, որպէս օրուայ հոգեւոր հացն ու սնունդը մեր մէջ ամրապնդելու համար մեր քրիստոնէական հաւատքն ու ինքնութիւնը:

«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ...»:

Քրիստոսի այս պատգամը ուղղուած է բոլորիս անխտիր, որպէսզի մեր աղօթքին ու մտածումներուն կենտրոնացումը ըլլայ Աստուած, որուն առաջնորդութեամբ ապրուած կեանքը լուսաւոր է եւ օրհնուած: Այնուհետեւ մեր սէրը ուղղենք մեր ընկերոջ նկատմամբ, այն գիտակցութեամբ, որ Աստուծոյ տուած պարգևին հաղորդակից կը դարձնենք մեր ընկերը:

Քրիստոս իր այս պատգամով կը պատասխանէ իրեն մօտեցողներուն, որոնք կարծէք կը փորձէին զինք հետեւեալ հարցումով. «Վարդապետ, օրէնքի մէջ ո՞ր պատուիրանը մեծ է»:

Արդարեւ, քրիստոնէայ հաւատացեալին կեանքը մշտապէս պիտի լեցուի Տիրոջ այս պատգամով, որուն մէջ են խտացուած ամբողջ օրէնքն ու մարգարէներու իմաստութիւնը: Ուրեմն, ինչ կը թելադրէ Քրիստոս իր այս պատգամով: Պարզ եւ յստակ կերպով մեզի տրուած Աւետարանի դասը այն է, որ մեր կեանքի ճանապարհորդութիւնը ապրինք Աստուծոյ հետ: Այսօրուայ աշխարհի մէջ շատերու կեանքին մէջ որոշապէս կը տեսնենք օտարացումը Աստուծմէ: Բայց ինչքա՛ն մօտ ենք Աստուծոյ, այնքան եւս Աստուած հայելին է մեր կեանքին, որպէսզի այն ըլլայ ուղիղ ու արդար: Այսօրինակ կեանքը մեզ կը մօտեցնէ նաեւ մեր ընկերոջ, որպէսզի անոր մէջ եւս տեսնենք Աստուծոյ ներկայութիւնը:

Ուրեմն, սիրելի հաւատացեալներ, ճաշակեցէ՛ք Քրիստոսի այս հոգեւորոգ պատգամը, որպէսզի ձեր մէջ եւ մեր մէջ գտնենք նոր ծնունդը կեանքին:

Սիրելի բարեպաշտ հայորդիք, այսօր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ անուանակոչութիւնն է, որովհետեւ երէկ Հայց. եկեղեցին տօնախմբեց մեր ս. եկեղեցոյ Լուսաւորիչ հայրապետի մուտն ի Վիրապն տօնը: Ուխտի

օր է այս տօնը իւրաքանչիւր հայ քրիստոնէայ հաւատացեալի համար, որովհետեւ աղօթքով ու երկիւղածութեամբ կը ոգեկոչենք սուրբին կեանքը եւ ի մասնաւորի անոր աղօթանուէր առաքելութիւնը՝ Հայոց մէջ քրիստոնէական հաւատքն ու կրօնը դարձնելով պետականօրէն հաստատուած կրօնը: Ինչպէ՛ս պիտի իմաստաւորենք այս տօնախմբութիւնը: Հիմնականին մէջ կայ մէկ մօտեցում մը. Քրիստոնէական հաւատքին հաւատարմութեամբ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, գործնական քայլերով: Ուրիշ խօսքով՝ ի գործ դնելով այն բոլոր միջոցները, որոնք հաւատքը կը խորացնեն մեր ժողովուրդի կեանքին մէջ, որովհետեւ մեր կեանքի մէջ եկեղեցին ինչպէս 1700 եւ աւելի տարիներ շարունակ, այսօր եւ յաիտեանս պիտի շարունակէ ըլլալ այն ժայռը, որուն պիտի ամրագրենք ե՛ւ մեր հայրենիքի, ե՛ւ մեր ազգի յաւերժականութիւնը:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, անցնող տարին բոլորիս համար դարձաւ փորձութեանց շրջան մը. մէկ կողմէ համաճարակը, միւս կողմէ Արցախեան պատերազմը, որոնք թեմական ու համայնքային կեանքի մէջ ստեղծեցին շօշափելիօրէն նոր կացութիւններ: Փառք Աստուծոյ, տոկացիներ բոլորին եւ կարծէք աւելի վճռական կը շարունակենք մեր առաքելութիւնը: Փորձութեան այս շրջանին թեմի եկեղեցականներէն շատերը ունեցան անհանգստութիւն եւ անոնց շարքին աւելի դժուարին ապաքինման շրջան մը ունեցաւ ձեր սիրելի հոգեւոր հովիւր՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քահանայ Փեթրոյեանը: Փառք Աստուծոյ, որ Տէր Հայրը արդէն վերագտած է իր առողջութիւնը եւ արդէն մեզի հետ է: Այս շրջանին եկեղեցին իր առաքելութիւնը շարունակեց Տէր Վազգէնի ծառայութեամբ, որուն համար երախտապարտ ենք:

Այսօր, Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայց. եկեղեցին կը նշանավորուի նաեւ նուիրագործումով երկու որմնանկարներու օծումովը. մէկ խորանի պատին վրայ նկարուած Քրիստոսի Յարութեան պատկերովը եւ եկեղեցւոյ մուտքին տեղադրուած Լուսավորչի տեսիլքին պատկերովը, որը կը ներկայացնէ Քրիստոսի էջքը Մայր հողին, ուր ամրագրուեցաւ Հայոց մէջ առաջին կաթողիկէ կառուցումովը՝ որպէս հիմնաքարը մեր քրիստոնէական հաւատքին:

Մեր պատգամը կ'աւարտենք օրուայ Աւետարանէն քաղուած երկրորդ պատգամով, որուն մէջ կը տեսնենք Քրիստոսի ներկայութիւնը, Անոր գալստեան խորհուրդը՝ իր Մարդեղութեամբ, որպէս արտայայտութիւնը Աստուծոյ անսահման սիրոյն: Քրիստոս իր այս պատգամով կը հրաւիրէ բոլորս՝ հետեւելու իր կեանքի օրինակին, այլ խօսքով՝ Քրիստոսի նմանակցութիւնը պէտք է ըլլայ կոչումը մեր կեանքին:

*Մարտ 18, 2021*

## ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան վերջին հանգրուանն է Աւագ Շաբաթը, որուն ամբողջ ընթացքը մեզի կը ներկայացնէ Տիրոջ երկրաւոր կեանքին վերջին օրերը՝ Ծաղկազարդէն մինչեւ Ս. Յարութեան լոյսի առաւօտը:

Ինչքան խրախուսելի է, որ քրիստոնէայ հաւատացեալը այս ընթացքին քայլ առ քայլ ճանապարհորդակից ըլլայ Քրիստոսի, մեր սուրբ եկեղեցոյ հայրերու կողմէ հաստատուած աղօթքներու ու շարականներու առաջնորդութեամբ, որոնց մէջ կը տեսնենք Քրիստոսի ներկայութիւնը եւ այն կը դարձնենք հայելին մեր կեանքին:

Անցեալ տարիներուն մենք առանձինն գրքոյկներով հաւատացեալին համար պատրաստեցինք բացատրականներ, որպէս ուղեցոյց, որպէսզի աղօթքով ու խոկումով ապրինք առանձնութեան պահեր, զգալու համար Աստուծոյ ներկայութիւնը ամբողջականօրէն: Ինչու՞ այս քայլին կը դիմենք, որովհետեւ Աստուծոյ ձեռքերուն մէջ դնելով մեր կեանքը՝ կ'առաջնորդենք դէպի սրբութիւն:

Կեանքը, այն թանկագին նուէրն է, տրուած Աստուծոյ կողմէ, որ պէտք է ապրիլ ճշմարիտ հաւատքով, այն հարստացնելով բարի արարումներով: Եւ կը բաւէ, որ մեր առջեւ ունենանք գերագոյն մտատիպարը՝ Քրիստոս, եւ Անոր կեանքի նմանակցութեամբ ապրինք նոր կեանքը՝ Աստուծոյ կամքին համաձայն:

Ծաղկազարդի կիրակիով Երուսաղէմ սուրբ քաղաք կը դառնայ դուռը Նոր կեանքին, քանզի Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ սուրբ քաղաք նոր

իմաստ կը ներշնչէր Հին Ուխտով Աստուծոյ հետ դաշինք կնքած մարդկութեան հետ: Քրիստոսի մուտքը Երուսաղէմ սուրբ քաղաք կը խորհրդանշէ լրումն Օրինաց: Եւ կարծէք վարդապետին դիմաւորողները, իրենց «Ովսաննա»-ներու աղաղակումներով իրենց հոգո՛ւ աչքերով կ'ապրէին իրենց հաղորդուելիք պատգամը՝ Նոր կեանքին:

**«Օրհնեալ եկեալ անուամբ Տեան»:**

Ուրիշներ իրենց սրտին ձայնը բարձրացնելով առ Աստուած՝ կ'աղաղակէին ըսելով. «Տէ՛ր, զի բացցին աչք մեր»: Անոնք իրենց խնդրանքը կը ներկայացնէին վարդապետին, որպէսզի առաջնորդէր զիրենք հասկնալու համար աստուածայինը: Աւագ Շաբթուայ ամբողջ ընթացքին մեր սրտին աղօթքը պիտի ըլլայ կոյրերուն աղաչանքը. «Տէ՛ր, զի բացցին աչք մեր», որպէսզի մեր ողջ էութիւնը մկրտենք Աստուծոյ սիրոյն մէջ եւ կերպարանափոխուած Քրիստոսի Յարութեան շունչով նայինք կեանքին, այն ապրելու Քրիստոսի նմանակցութեամբ:

Քրիստոսի Երուսաղէմ մուտքը Աւետարաններու մէջ կը ներկայացուի տօնական արձագանգումով մը: Քրիստոս իր հետ կը բերէր նոր կեանքին լոյսը, եւ անկասկած այդ սպասումը թէկուզ եւ անգիտակցօրէն մարդիկ կ'ապրէին: Այնուհետեւ, յաջորդող օրերուն իրերու յաջորդականութեամբ մեր հոգեւոր կեանքին մէջ կը ներարկուին հոգեւոր ու բարոյական արժէքներու գերագոյն սկզբունքներ, որոնք մեզի կը ներկայանան Քրիստոսի կեանքի օրինակով եւ որոնք իրենց մէջ կը կրեն խորհուրդը ճշմարիտին ու արդարին, եւ որոնց բացակայութենէն մարդկութիւնն այսօր կը տառապի:

Մեզի տրուած ճշմարիտին պատգամներէն մէկը խոնարհութեան դասն է.

«Զի որ խոնարհեցուցանէ զանձն իւր բարձրացի»:

Քրիստոս է խոնարհութեան ապրող պատգամը: Աստուածորդու այցը մարդկութեան, Անոր երկինքէն երկիր էջքը արդէն իսկ կը բացատրէ ոչ միայն Անոր խոնարհումը մարդկանց կեանքին մէջ, բայց մանաւանդ աստուածային սիրոյն անսահմանելիութիւնը մարդկանց հոգիներու փրկութեան համար:

Խոնարհ սրտով մարդը իր մէջ կը կրէ անկողոպտելի ուրախութիւն, որուն մտաբերումը կը տարածէ խաղաղութիւն ու սէր մարդկանց կեանքին մէջ: Մա բալասան է մարդկանց հոգիներու համար:

Մեզի տրուած ճշմարիտին պատգամներէն է նաեւ ծառայութեան դասը: Քրիստոնէութեան կրօնը ծառայութեան կը հրաւիրէ բոլորս, որպէսզի ծառայենք Աստուծոյ եւ միմեանց: Այստեղ եւս Քրիստոս մեզի կը ներկայանայ ծառայական կերպին մէջ: Ուրեմն, ինչքան եւս մենք պիտի ապրինք նոյն ոգով: Եւ Քրիստոս այս ոգին գերազանցապէս ապրեցաւ խաչին վրայ իր կեանքին պատարագումով:

Քրիստոսի կեանքի օրինակով մեզի տրուած այս զոյգ պատգամներով հոգեւորապէս պատրաստենք մենք մեզ ներշնչուելու Անոր հրաշալի Յարութեան խորհրդովը, որը մեր առջեւ կը բանայ նոր կեանքին արշալոյսը:

Աւագ Շաբաթը դուռն է, որ մեր առջեւ կը բանայ Յարութեան ճանապարհը՝ Քրիստոսով մարմնաւորուած, քանզի երբ հաւատքով մեր հոգիին աչքերով մեր մտասելեռումը կը կեդրոնացնենք Քրիստոսի Յարութեան խորհուրդին վրայ, ապա մեր էութեան մէջ կը սերմանենք լոյսը Յարութեան:

*Յունուար 24, 2021*



## ԽԱՒԱՐՄԱՆ ԳԻՃԵՐ

«Երկինք ցնծային եւ երկիրս ուրախանայր, քանզի Փրկիչ ցուցաւ սուրբ խաչն եւ լուսատու տիեզերաց. աղաչեմք սովաւ Փրկիչ, պահպանեա՛ զանձինս մեր»:

Այս երեկոյի հոգեպարար արարողութիւններն, իրենց աղօթքներով ու շարականներու երգեցողութեամբ եւ ամբողջ ծիսական ասանդոյթներով, մեզի կը պատմեն Աստուածորդու Երկրաւոր կեանքի վերջին օրերու մասին, մինչեւ Գողգոթա եւ վերջապէս՝ խաչին վրայ պատարագումը՝ մարդկանց հոգիներու փրկութեանը համար: Դարերու հոլովոյթովը նուիրականացած աղօթքներն ու շարականները բոլորիս հոգիները կը լեցնեն Քրիստոսի Անձին ներկայութեամբը եւ կը ներշնչեն մեզ պատարագեալ կեանքով մը ապրելու խորհուրդովը: Քրիստոս, Աստուածորդին, մեր առջեւ բացուած ճշմարիտ կեանքի գիրքն է ու լոյսի ճանապարհը: Ան մեզի կը խօսի ու կը հրաւիրէ ընկալելու համար ճանապարհը, կեանքն ու ճշմարտութիւնը Քրիստոսի Անձին մէջ:

Բանանք մեր հոգու դռները, որպէսզի մեր էութեանը մէջ ընդունինք ու ապրինք Քրիստոսի ներկայութիւնը երկրաւոր իր կեանքի բոլոր հանգրուաններովը, եւ այսօր մանաւանդ ճանապարհորդակից ըլլանք Վարդապետին՝ Գողգոթայի չարչարանաց ճանապարհէն մինչեւ խաչելութիւն:

Բայց տեսէք, թէ ինչպէս կը գովերգեն ու կը փառաբանեն մեզ ս. եկեղեցոյ աղօթող հայրերը ի տես Քրիստոսի խաչելութեան, խաչին մէջ տեսնելով կենսատու ներկայութիւնը Քրիստոսի. «Երկինք ցնծային եւ երկիրս

ուրախանայր, քանզի Փրկիչ ցուցաւ սուրբ խաչն եւ լուսատու տիեզերաց. Աղաչեմք սովաւ Փրկիչ, պահպանեա՛ զանձինս մեր»:

Արդարեւ, Քրիստոսի խաչելութիւնը՝ մարդկութեան առջեւ կը բանայ նոր կեանքի արշալոյսը եւ խաչը՝ Քրիստոսի խաչելութեամբ նոր իմաստ մը կը զգենու իր մէջ, որուն առջեւ աղօթքի ենք կանգնած այս երեկոյ, որպէսզի դառնանք նոր՝ հոգով ու սրտով, դառնանք նոր կեանքի առաւօտ՝ կեանքի մէջ բացուած ծնունդը նոր ճանապարհորդութեան՝ պարտութեան մատնելու համար մեր հոգիին խաղաղութիւնը ալեկոծող օտար խորհուրդներէն, որոնք մեզ կրնան տանիլ խաւարի ճանապարհներէն: Բոլորս անխտիր, երբ կեանքի փորձութեանց բովէն կ'անցնինք, ապա այն ժամանակ մեր հայեացքն ուղղենք դէպի Քրիստոս՝ որպէս հայելին մեր կեանքի: Երկինք ու երկիր կը ցնծան այս գիշեր, քանզի Քրիստոսի խաչը կը դառնայ լոյսը տիեզերքի, որուն առջեւ խոնարհուումը մը կը խնդրենք մեր անձերու պահպանութիւնը:

Այս երեկոյ, բոլորով կանգ ենք առած խաւարին վրայ յաղթանակած լոյսին առջեւ: Եւ լուսատու այս խաչին ուղղէք ձեր հոգու աչքերը, որպէսզի բոլորս այնտեղ տեսնենք մեր իսկական պատկերը եւ ապա կողմնորոշենք ընթացքը մեր կեանքին: Բանանք մեր լսողութեան փակուած դռները, որպէսզի ականջալուր դառնանք Քրիստոսի պատգամներուն՝ ունենալու համար սիրող սիրտ, ներողամիտ հոգի, բարեգործ ոգի, հաւատքի եռանդ, տեսլապաշտ կեանք, ու մէկ խօսքով՝ մեր կեանքին ուղին դարձնենք նմանակցութիւնը Քրիստոսի: Խոստումի պահն է այս երեկոյ բոլորիս համար, որպէսզի մաքրենք մեր էութիւնը բոլոր տեսակի օտար

խորհուրդներէ եւ վերսկսինք կեանքը՝ նոր ծնունդով մը: Այս է հրաշքին ճշմարտութիւնը մեր կեանքի մէջ:

Միրելի հաւատացեալներ, Քրիստոս Աստուածորդին խաչի ճանապարհը դարձուց կեանքի ու մանաւանդ Յարութեան ճանապարհ: Եւ մենք, որպէս քրիստոնէայ զաւակները մեր ս. եկեղեցւոյ, մեր կրած խաչելութեան մէջ երբէք չենք կորսնցուցած Յարութեան լոյսն ու յոյսը եւ մեր անձնական, եւ մեր ազգային կեանքին մէջ: Ժողովուրդներու պատմութեան կեանքին մէջ հայուն կեանքը եղած է ամենէն աւելի արտացոլումը Քրիստոսի դէպի Գողգոթայի բարձունք բարձրացող կեանքին, բայց նոյնքան եւս խաչին խորհուրդովը վերապրած ու Յարութեան շունչով վերսկսած կեանքը: Բանանք մեր պատմութեան վերջին հարիւրէ աւելի տարիներու կեանքը եւ այնտեղ պիտի տեսնենք խաչեցեալն Քրիստոսի կեանքովը ապրող մեր ժողովուրդի կեանքին պատկերը, եւ նոյնժամայն միշտ հրաշքը՝ նոր կեանքի, անկոտորում հաւատով ու Յարութեան շունչով:

Ինչքան իրական է շարականին պատգամը. «Ապաւինեցաք ի խաչ քո, Արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամեաց»:

Խաչն է ապաւենը մեր կեանքին, ու պահապանը ընդդէմ թշնամոյն: Մեր թշնամին կրնայ ըլլալ հաւատքի մէջ երեւացող տկարութիւնը, որը կը մերժենք խաչին զօրութեամբ: Հաւատքին մէջ տկարութիւնը հաւասար է մեղքի եւ այն պարտ ենք անտեսնել ու հոգու աչքերով տեսնել ու կերտել մեր կեանքի լուսաւոր արշալոյսը:

Խաւարման գիշերը՝ Քրիստոսի Անձին խաչելութեամբը մեղքին պարտութեան գիշերն է. Մահուան վրայ տարուած յաղթանակն է, քանզի մեր մէջ կը գտնենք լոյսն աստուածային՝ վերածնունդու եւ ապրելու քրիստոսանման կեանքը. Այն կեանքը, որ իր մէջ պիտի

կրէ բարիին ու գեղեցիկին տեսիլքը, Աստուծոյ աչքին ընդունելին, ու մարդկանց համար հաճելին եւ ամենէն կարեւորը՝ այն կեանքը, որ իր ընթացքը պիտի ուղեգծէ խաչին խորհուրդով: Այս է պատգամը. լուսատու այս խաչէն ճառագայթող ձեր կեանքը ապրէ՛ք Քրիստոսի սիրովն ու իմաստութեամբ, զԱստուած դարձուցէ՛ք հիմքն ու հաստատութիւնը ձեր կեանքին, ձեր զաւակներու հոգիները զարդարէ՛ք Աւետարանի ոսկի պատուիրաններով, որպէսզի բոլորով մեր կեանքը վերընծայենք Աստուծոյ ասելի գեղեցկացած ու որպէս ընտիր նուիրաբերում Աստուծոյ փառքին համար. Ամէն:

*Մարտ 30, 2021*

## ԱԲԱԳ ՈՒՐԲԱԹ

«Զի եւ Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ մեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց, զի զմեզ մերձեցուցէ առ Աստուած. Թէպէտ եւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգով» (Պետրոս 3:17-18):

Քրիստոնեայի կեանքին մեկնակէտը Աստուած է. մեր հաւատքի կեանքին մղումով, աղօթքի գիտակցական զգացողութեամբ, քանզի՝ աղօթքով կեանքը կը տեսնենք որպէս փնտրտուք մը՝ գտնելու համար զԱստուած, որուն պատկերով ենք ստեղծուած, եւ այդ պատճառով ալ պարտ ենք մեր կեանքի ամբողջ ընթացքը դարձնել ճանապարհ առ Աստուած:

Աւագ Ուրբաթը այն նուիրական օրն է մեր եկեղեցական աւանդութեան մէջ, երբ եկեղեցւոյ հաւատացեալները, հոգեւորականաց աղօթքներու առաջնորդութեամբ երկրպագութիւն կը կատարեն Քրիստոսի գերեզմանի առջեւ եւ կը փառաբանեն Անոր թաղումը: Բարեպաշտական այս արտայայտութիւնը կը բացատրէ մեր հաւատքին անսահմանելի տարողութիւնը եւ աւելին՝ այն գիտակցութիւնը, որ Քրիստոսի պատարագումը առանցքն է քրիստոնէական վարդապետութեան, ուր Աստուածորդու եռօրեայ թաղումը մեր հոգիներուն մէջ առաւել կը խորանցէ մեր համոզումը, թէ ինչքան անսահման է Աստուծոյ սէրը մարդկութեան հանդէպ, որ աշխարհ ուղարկեց իր Միածին Որդին, ու ան մարդկային կերպարանք ստանալով իր վրայ կրեց չարչարանքն ու խաչելութիւնը՝ սրբելու համար մեզ մեղքի ծանրութենէն եւ մեռաւ որպէս արդարը անարդարներու մէջ, որպէսզի մեզ մօտ առաջնորդէր Աստուծոյ:

Այստեղ է ահաւասիկ գլխաւոր նպատակը Աստուածորդու պատարագումին. մարդը տանելու դէպի Աստուած:

Քրիստոնէային հաւատքին կեանքին, ինչպէս նաեւ աղօթանուէր կեանքի ընթացքին նպատակը մէկն է. Հաւատացեալին կեանքը մօտեցնել Աստուծոյ: Կեանքն ինքնին արդէն փնտրտուք մըն է, եւ առանց աղօթքի ու ապրուած հաւատքի մենք կը մնանք խաւարի մէջ խարխաբինք եւ կը գլորինք դէպի անդունդ: Մարդուն կեանքը, եւ այս պարագային քրիստոնէայ հաւատացեալին կեանքը պէտք է ընթանայ դէպի սրբութիւն, որով կը պայմանաւորուի մեր հանդիպումը Աստուծոյ հետ:

Ուրեմն, քրիստոնէան աղօթքի ու հաւատքի մէջ պիտի մնայ իր կեանքով, որպէսզի տեսնէ Աստուծոյ ներկայութիւնը, եւ կատարէ Աստուծոյ կամքը՝ իր կեանքի բոլոր հանգրուաններուն:

Հետեւաբար, Աստուծոյ ներկայութիւնը զգալու նախապայմանն է հոգեւոր պատրաստութիւնը. Ինչպէս մեզ կը պատրաստենք դիմաւորելու մեր հիւրերը, ապա ինչքան եւս պէտք է պատրաստուինք հոգեւորապէս, որպէսզի Աստուծոյ հետ հանդիպման պահին մենք ապրինք հարազատութիւն:

Քրիստոս իր կեանքը պատարագեց ընդհուպ մինչեւ իսկ խաչին վրայ եւ մեռաւ մանամոլ, բայց կենդանի մնաց հոգով, միայն այն պատճառին համար, որ մեր առջեւ ունենանք մտատիպարը ճշմարիտ ու արդար կեանքին: Բոլորս ալ, անկախ այն հանգամանքին, թէ ուր կը գտնուինք, եթէ թերանանք պատարագում ու զոհողութիւն, ծառայութիւն ու բոլորանուէր սէր ցուցաբերելու բոլորին նկատմամբ, այն ժամանակ եւ՛ մենք մեղքի մէջ ենք, եւ՛ դեռ դէպի խաւար կ'առաջնորդենք մեզ հետեւողները:

«Սուրբ Աստուած, սուրբ եւ հօօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար / թաղեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

Ամէն անգամ, երբ կ'անդրադառնանք կամ կ'երգենք այս տողը, անոր մէջ կը տեսնենք Աստուծոյ սէրը եւ կը գիտակցինք, որ քրիստոնէութիւնը ընդունած ենք որպէս կեանքի ուղին, ուրկէ ներս մտնելով կը զգանք Քրիստոսի առաջնորդութիւնը՝ իր սէրն ու հովանին մեր վրայ, որպէսզի դառնանք իր սուրբ ձեռքերը եւ կատարենք իր բարի կամքը:

Քրիստոսի գերեզմանին ուղղած մեր հոգու հայեացքը ակընդէտ սպասենք անոր հրաշալի ու յաղթական Յարութեան: Եւ աւելի գեղուն զգացում չի կրնար ըլլալ մեր կեանքին մէջ, քան այս սպասումը, տեսնելու ու դիմաւորելու Քրիստոսի Յարութիւնը, ուրախանալու, եւ ապա դառնալու վկաները Անոր Յարութեան խորհուրդին եւ նոյնին մէջ տեսնելու նոր կեանքը:

Հետեւաբար, սիրելի հաւատացեալներ, այսօր եւ վաղը ամբողջ երկու օրեր աղօթքի մէջ մնանք խաղաղ հոգով ու մտօք, որպէսզի մեր ամբողջ էութեամբ պատրաստ ըլլանք դիմաւորելու Կիրակի վաղ առաւօտեան Քրիստոսի հրաշալի Յարութիւնը: Այս սպասման ժամանակահատուածը, ե՛ւ հոգեւոր պատրաստութեան կ'առաջնորդէ մեզ, եւ լ միաժամանակ մեր հոգեւոր էութեանը մէջ կը ծնի ուրախութեան անբացատրելի զգացողութիւնը: Նոյնպիսի հոգեկան իրավիճակ կ'ապրինք, երբ սիրելիի մը հետ հանդիպման սպասումին մէջ ենք: Ինչքա՛ն եւս մեծ է մեր ուրախութիւնը, երբ կը պատրաստուինք դիմաւորելու Ս. Յարութեան տօնը, որ քրիստոնէութեան կեանքի տօնն է, յաղթանակը մահւան վրայ եւ պարտութիւնը բոլոր տեսակի փորձութեանց: Ահաւասիկ այս իսկ պատճառով ալ մենք Աւագ Ուրբաթի խորհուրդին մէջ կը տեսնենք լոյսին ծնունդը Քրիստոսի Յարութեան խորհուրդը հորիզոնին վրայ:

## ՉԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

«Ուրախացան ազգք մարդկան,  
Յորժամ լուան զքո յարութիւնդ,  
Նորափետուր զարդարեցան  
Ի յարութեան Սուրբ Միածնիդ»

*(Ներսէս Շնորհալի)*

Յարութեան Տօնն է մեր հաւատքի կեանքին մէջ: Անբացատրելի ներքին ուրախութիւն մը կ'ապրինք բոլորս եւ Մանուկի մը պէս ուրախ ենք հոգեւին, զորս բառերով կարելի չէ բացատրել:

Աշխարհը եւ մարդիկ ի լուր Քրիստոսի հրաշափառ Յարութեան խորհուրդին նոր արշալոյսի մը ջերմ փափագով կ'ուզեն առաջնորդել իրենց կեանքը: Մանաւանդ համաճարակի փորձառութիւնը բոլորս կը հրաւիրէ հոգեւոր արթնութեան եւ հաւատքի գիտակցութեան: Քրիստոնէայի հաւատքի կեանքին առանցքն է վարդապետի հրաշալի Յարութիւնը, քանզի այն կը խորհրդանշէ նոր կեանք: Մենք պիտի ուզէինք կատարել հետեւեալ հաստատումը, որ Յարութիւնը, կեանքին մէջ բացուած նոր կեանքի արշալոյսն է: Իսկ Նոր կեանքի արշալոյսը կերտողը մենք ենք մեր հաւատքով ու աղօթքի առաջնորդութեամբ:

Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, որ մեր շուրջը տեղի ունեցող փորձութիւններն ու դժուարութիւնները կարծես թանձր վարագոյրի են վերածուած եւ կ'արգելակեն մեզ տեսնելու Աստուծոյ ձեռամբ մեզի տրուած տիեզերքի գեղեցկութիւնը: Աշխարհը միշտ ալ անցած է փորձութիւններու կրակի միջով, բայց Քրիս-



տոսի Յարութեան շունչովը ներշնչուած մարդը ի մասնաւորի մերժած է տկարութիւնը, քանզի Քրիստոսի խաչին մէջ տեսած է մահուան ու մեղքին պարտութիւնը, եւ Անոր Յարութեամբ լուսաւորուած իր կեանքը, իմաստնացած Աւետարանաշունչ պատգամներով:

Միրելի բարեպաշտ հայորդիք, ինչպիսի՞ խորհուրդ կը հաղորդէ Քրիստոսի Յարութիւնը այսօր մեր կեանքին մէջ, ըլլայ անձնական եւ թէ հաւաքական: Ամենապարզ բառերով եթէ ուզենք բացատրել, ապա առաջին հերթին Քրիստոսի Յարութիւնը քրիստոնէայ հաւատացեալին համար հրաւերն է աղօթքի կեանքին, քանզի աղօթքով առաջնորդուած կեանքը իր ուղին կը բռնէ դէպի Աստուած, դէպի բարին, ազնիւն ու արդարը: Յարութեան հրաւերը աղօթքի կեանքով ապրելու նախապայմանն է քրիստոնէային համար, քանզի մեր հոգեւոր կեանքի շէնքը կը կառուցուի այդ հիմքին վրայ: Քրիստոսի Յարութեան խորհուրդէն մեզի հասնող երկրորդ պատգամը կը պարտաւորեցնէ բոլորս, որ մեզի տրուած կեանքին նայինք պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, այն մշտապէս նորոգելու համար առաքինի կեանքի խոստումներով եւ ի մասնաւորի կեանքը արժեւորելու ծառայութեան ճշմարիտ ոգով: Մենք այստեղ կ'ուզենք յատուկ շեշտադրութեամբ ընդգծել մեր մտածումը այն մասին, որ կեանքը մշտապէս պարտ ենք նորոգելու առաքինութեան խոստումներով ու ծառայութեան ճշմարիտ ոգով, որովհետեւ կեանքի մէջ առկայ բոլոր կոչումները պարտ ենք ընդունիլ որպէս նուէր Աստուծոյ կողմէ մեզի վստահուած: Ինչու՞ այս մտածումներով մտահոգ ենք, որովհետեւ աշխարհը արագընթաց կ'ուղղուի դէպի անտարբերութիւն:

Ծնողներ, ուսուցիչներ, գիտնականներ, հոգեւորականներ ու պաշտօնատարներ, մէկ խօսքով ամէն ոք իր

պաշտօնին մէջ պարտ է մշտապէս ինքզինք նորոգելու առաքինութեան խոստումներով ու ծառայութեան ոգով: Եւ եթէ աշխարհի կեանքին մէջ այսօր կը տեսնենք թերիներ, սկարութիւններ, ապա այդ արդիւնքն է անտարբերութեան: Աստուծոյ ձեռքով մեզի վստահուած տիեզերքը եւ ստեղծագործուծեան մէջ մարդը՝ որպէս բարին, մշտապէս պէտք ունին վերահսկողութեան ու նորոգութեան:

Քրիստոսի հրաշալի Յարութիւնը մեր հոգեւոր էութեանը մէջ կը ներառէ նաեւ մէկ այլ չափազանց կարեւոր կոչում մը, որ այն հաւատքը, որուն ժառանգութեանը արժանի ենք դարձած, նոյնին ժառանգակից դարձնենք նաեւ մեր զաւակունք եւ գալիք սերունդները: Եւ ինչպէ՞ս բացատրենք ժառանգին իմաստը. հայ քրիստոնէայի համար ժառանգը՝ Աստուծոյ սէրն ու գիտակցութիւնն է, քրիստոնէական հաւատքն է ու նուիրումը եկեղեցւոյ առաքելութեան հանդէպ, հայրենական տեսիլքն է եւ հայ քրիստոնէայի ընտանիքի խորհուրդը: Այս ժառանգը Յարութեան խորհուրդին տեսանելի ու շօշափելի արտայայտութիւնն է, որուն շնորհիւ մեր մէջ կ'ամրագրենք իւրովի ինքնութիւն: Մարդը իր մէջ պիտի կրէ ինքնութիւն, որը իր հաւատքի կեանքին դրոշմն է, իր պատմութեան զգացողութիւնն ու գիտակցութիւնն է, իր մշակոյթի հանդէպ յարգանքն է: Այս տեսիլքով ապրող մարդը միայն կարողութիւնը կ'ունենայ արժէքներ գնահատելու եւ իր դիմացինին հոգեւոր ու ազգային ինքնութեան առջեւ խոնարհելու:

**Քրիստոս Յարեալ ի մեռելոց,  
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:**

Միրելի՛ բարեպաշտ հայորդիք, բանա՛նք մեր հոգիին դռները, որպէսզի այնտեղ մշտապէս արձանագրէ Յարութեան խորհուրդը: Զատկական այս տօնական

օրին մեր հոգիները զարդարենք Յարութեան խորհուրդով, որպէսզի դէպի կեանք վերադառնանք առաւել զօրացած մեր քրիստոնէական հաւատքով ու կոչումով: Բառեր չփնտռենք փորձել բացատրելու համար խորհուրդը Յարութեան, քանզի մարդկային տրամաբանութեան մէջ կարելի չէ սահմանափակել Ս. Յարութեան խորհուրդին անսահմանելիութիւնը: Զուարթ հոգիներով յայտարարենք Ս. Յարութեան խորհուրդին բարի լուրը եւ այն ժամանակ պիտի զգանք նոր կեանքին շարժումը մեր ողջ էութեանը մէջ: Ահա այդ նոր ոգիի ճարտարապետն է Քրիստոս Իր Յարութեամբ, որուն հաղորդակցութեամբ երկնային լոյսով կը զարդարուի նաեւ մեր ողջ էութիւնը:

Յարութեան Տօնին այս հրաշալի ու կենսութիւն օրը առաւել լոյս ու օրհնութիւն թող պարգեւէ մեր Մայր երկրին, որպէսզի Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ առաջնորդուած՝ մեր ազգի զաւակունք միմեանց ողջունեն խոնարհութեամբ ու ծառայութեամբ:

Մեր աղօթքը՝ որ աշխարհն ամբողջ խաղաղութեան կանչը մշտապէս շեփորէ, որպէսզի միասնաբար վայելենք Աստուծոյ հրաշալի ստեղծագործութեան բարիքները եւ անդադրում եւ ուրախ սրտով յայտարարենք՝ ըսելով.

**Քրիստոս Յարեաւ ի մեռելոց,  
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի**

*Ապրիլ, 2021*

## ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

«Արդ, կ'ըսեմ ձեզի հիմա. հեռո՛ւ մնացեք այդ մարդոցմէ եւ ձգեցե՛ք զանոնք, որովհետեւ եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդոցմէ է՝ պիտի ձախողի, իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար ձախողեցնել զանոնք. գուցէ աստուածամարտ ալ դառնաք» (Գործք, 5:38-39):

Նոր Կտակարանի Գործք Առաքելոց գրքի մեջ կը կարդանք ուշագրաւ պատմութիւն մը, որ տեղի կ'ունենայ Քրիստոսի հրաշալի Յարութենէն յետոյ: Գամաղիէլ անունը կրող փարիսեցի մը վեճի կը բռնուի հրեայ իշխանաւորներուն հետ, ովքեր ընդհարման մեջ էին Քրիստոսի առաքեալներու հետ, որոնք կը քարոզէին Քրիստոսի վարդապետութիւնը եւ առաւել եւս վկաներն էին Անոր Յարութեան խորհուրդին: Ի տես այս իրավիճակին, Գամաղիէլ անունը կրող հեղինակաւոր փարիսեցին, որ նաեւ օրէնքի ուսուցիչ էր, շատ դիպուկ կերպով կը հանդիմանէ հրեայ իշխանաւորները, որոնք կը ներկայացնէին քահանայք, դպիրներ ու փարիսեցիք, անոնց ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Հեռո՛ւ մնացեք այդ մարդոցմէ եւ ձգեցե՛ք զանոնք...»:

Ովքե՞ր էին այդ մարդիկ, որոնց մասին կ'ակնարկէ Գամաղիէլ. նոյնինքն Քրիստոսի առաքեալները, որոնք Քրիստոսի Յարութենէն քիչ ժամանակ անց հեռու աշխարհներ երթալով՝ պիտի քարոզէին Աստուծոյ խօսքը, եւ որպէս վկաները Քրիստոսի, պիտի տարածէին Քրիստոսի վարդապետութիւնը: Եւ քրիստոնէից պատմութիւնը կը խօսի այդ մասին, եւ մենք գիտենք նաեւ, թէ ինչպէս Քրիստոսի վկաներէն երկուքը՝ Թադէոս եւ Բար-

թուղիմեու կը հասնին մինչեւ Հայաստան եւ կը դառնան մեր աշխարհի առաջին լուսաւորիչները, ովքեր իրենց նահատակութեամբ կը լուսաւորեն Հայաստան աշխարհը Քրիստոսի Աւետարանի լոյսովը:

Եւ Գամաղիէի խօսքը պետք է ընդգծել այստեղ՝ ուղղուած հրեայ իշխանաւորներուն, երբ կ'ըսէ. «Հետո՛ւ մնացէք այդ մարդոցմէ եւ ձգեցէ՛ք զանոնք, որովհետեւ եթէ այդ խորհուրդը (Յարութեան վկայութիւնը) կամ այդ գործը մարդոցմէ է՝ պիտի ձախողի, իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար ձախողեցնել զանոնք. գուցէ աստուածամարտ ալ դառնաք»:

Որոշապէս այն խորհուրդը, որ Յարութեան վկայութեան պատգամն է, Առաքեալներու քարոզչութեամբ Աստուծոյ կամքն էր, եւ կարելի չէր ձախողեցնել առաքեալներու գործը: Իսկ Աստուծոյ կամքին հակառակ ընթացքը Գամաղիէ կը ներկայացնէ որպէս Աստուծոյ դէմ հակառակութիւն եւ պայքար:

Անցնող երկու հազարամեակներու ընթացքին շատեր հակառակեցան Աստուծոյ կամքին, եւ սակայն նահատակ առաքեալներու եւ հայրապետներու արեամբ հիմքը դրուեցաւ եկեղեցւոյ: Սերունդներ իրենց կեանքով դարձան ապրող եկեղեցին, եւ քրիստոնեայ հաւատացեալները ս. աւագանին մկրտութեամբ խոստում կատարեցին՝ հետեւելու Քրիստոսի եւ ապրելու Վարդապետի նմանակցութեամբ:

Քրիստոնեայ եկեղեցւոյ պատմութեան մէջ մեր ազգի զաւակներու հաւատքի կեանքը ընդգծելի է որպէս մարտիրոսացած քրիստոնեաներ: Եւ մեր պատմութեան ամբողջ ընթացքին մեր ս. եկեղեցւոյ ու զաւակաց կեանքը եղաւ խաչի ու տառապանաց ճանապարհ, ընդհուպ մինչեւ այսօր, բայց խաչի ճանապարհէն ընթացող մեր

ազգի զաւակունք երբէք չդադրեցան դառնալէ Յարութեան խորհուրդին վկաներ եւ մերժեցին հակառակիլ Աստուծոյ կամքին ու դառնալ աստուածամարտ:

Այսօր, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի պարտ ենք շարունակել մեր պայքարի կեանքը, մերժելու տկարութիւնն ու փորձութիւնները եւ դառնալու որդեգրեալ զաւակները Աստուծոյ: Ժամանակները միշտ ալ փորձութիւններ կը բերեն մեր կեանքի մէջ, բայց Յարութեան խորհուրդով, հաւատքի կեանքով ոտքի պիտի մնանք, ապրեցնենք մեր մէջ տեսիլքը մեր նախնեաց եւ մեր հերոս երիտասարդներու քաջարի ոգին: Պատմութեան ընթացքին շատ անգամ փորձութեան մէջէն ենք անցած եւ սակայն հաւատքի եռանդով ու գիտակցութեամբ վերակերտած ենք հայրենիք եւ մեր զաւակաց հոգիներուն մէջ խորացուցած այն համոզումը, որ ամէն ընտանիք իր սրբութեամբ ու հոգեւոր արժէքներու պահպանութեամբ հայրենիքը ու Ս. Էջմիածինը խորհրդանշող ներկայութիւն է եւ պարտ ենք նոր ժամանակներու մէջ վերապրիլ Վարդանանց ոգին, Սարդարապատի հերոսամարտի քաջարի յաղթանակի երթը:

Ինչպիսի պատգամ պիտի տանինք մեզի հետ այսօր սրբազան այս պատարագէն մեր տուները: Յստակ պատգամ մը, որ մենք աստուածամարտ չենք եւ Աստուծոյ կամքը պիտի կատարենք՝ գործնապէս ապրելու Յարութեան խորհուրդը՝ մեր զաւակաց փոխանցելու համար քրիստոնէայի կեանքով ապրելու ոգին եւ ամուր պահելու այն որպէս մեր ինքնութեան ամէնէն կարեւոր յատկանիշը ու որոշիչը:

Անցնող կիրակի, մենք մեր եկեղեցիներէն յայտարարեցինք հաստատ հաւատով վարդապետին Յարութիւնը: Եւ մինչեւ Հոգեգալուստ յիսուն օրեր շարունակ պիտի տօնախմբենք Յարութիւնը, Զատկական տօնը,

մինչև որ մեր ամբողջ էությունը հիմնապես լուսաւորենք, պայծառացնենք ու սրբենք Քրիստոսի սիրով ու Անոր Աւետարանի պատգամներով:

**«Քրիստոս յարեալ ի մեռելոց,  
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»**

Անդադրում յայտարարենք Յարութեան խորհուրդը, որպէսզի մեր արեան կանչը դարձնենք այն եւ աշխարհին առջեւ ոտքի կանգնինք, որպէս ճշմարիտ քրիստոնեաներ, այն տեսիլքով, որ Աստուածորդին երկինքէն իջաւ հայրենի հողի վրայ եւ այնտեղ հաստատեց առաջին կաթողիկէն՝ Ս. Էջմիածինը, լոյսի ու յոյսի փարոսը մեր ժողովուրդի զաւակաց համար այսօր եւ յաւիտեան. Ամէն:

*Սպրիլ 11, 2021*

## «ԶՀՈԳԻՆ ՄԻ՝ ՇԻՉՈՒՑԱՆԷՔ»

Աւետարանաշունչ այս պատգամը կեանքի հրաւիրող պայքարի ոգին իր մէջ սեղմած բալասան է մեր ազգի սրտին բացուած եւ տակաւին չսպիացաց ցաւօտ այն վերքին, որ կը շարունակէ անդադար մորմոքիլ: Մեր ազգի ու հայրենիքի կեանքը կը թուի ըլլալ տառապանքի կսկծալի շրջապտոյտ ճանապարհ մը, որ վերջ չունի: Ահա թէ ինչու մեր հոգին արթուն պահելու համար հազար պատճառ ունինք ականջ տալու Տիրոջ Առաքեալի պատգամին՝ «Զհոգին մի՛ շիջուցանէք», քանզի մեր կեանքի ճանապարհը յար եւ նման է Քրիստոսի չարչարանաց ու խաչի ճանապարհին: Խաչի ճանապարհէն քայլող մեր նախնիք մշտապէս իրենց հոգին դարձուցին ծննդավայրը՝ Յարութեան խորհուրդին, վաղուան արշալոյսին:

Սրբազան պատարագի մատուցմամբ հոգեւոր Առաջնորդներով ու հոգեւորականաց ողջ դասով եւ ձեր բոլորի աղօթանուէր ներկայութեամբ կը ոգեկոչենք յիշատակը սրբոց նահատակաց, անոնց միացնելով նաեւ Արցախեան պատերազմի քաջարի հերոսներուն վառ ու յաւերժական յիշատակը հայրենիքի տեսլականով:

«Զհոգին մի՛ շիջուցանէք»:  
Հոգին մի՛ հանգրէք:

Աստուածատուր մեր կեանքի նշանաբանն է սա, որը եւ պիտի վստահինք մեր զաւակներուն ու գալիք բոլոր սերունդներուն: Այս աստուածային պատգամը ուղղուած է բոլորիս անխտիր, որպէսզի մեր բովանդակ



կեանքի ընթացքին մեր հոգեւոր էութեան խորքէն մշտապէս լսենք արձագանգը սրբոց նահատակաց՝ «Վասն Յիսուսի, վասն Հայրենեաց»: Մեր սուրբ նահատակները իրենց մէջ կրեցին ու ապրեցուցին նոյն սրբազան ոգին, որը առաջնորդեց Ս. Ղեւոնդեանց եւ Վարդանանց դէպի գիտակից մահ՝ կերտելու համար անմահութիւն: Մեր նախնեաց կեանքի ճանապարհը յարաժամօրէն դարձած է Գողգոթայի ճանապարհին կրկնութիւնը: Բայց մեր նախնեաց սրտին մէջ երբէք չէ մարած յարութեան լոյսը: Երբ այս վկայութիւնը կը հաստատենք խոր հաւատքով, ապա ինչպէս մեր նախնիք, այնպէս եւ մենք հեռու կը պահենք մեզմէ հոգու տկարութիւնը եւ անտարբերութիւնը, ազգային արժէքներուն հանդէպ, որ համագօր է մեղքին: Մեր ազգի ու հայրենիքի վերջին աւելի քան հարիւր տարիներու պատմութիւնը, ունենալով հանդերձ արիութեան եւ հպարտութեան բազում առիթներ, ունի նաեւ դժնդակ եւ յուսալքիչ դրուագներ: Բայց հայու ոգին չարսօսէր մեզ տկարանալ ու կը մերժէ ընկրկել մեր առջեւ ծառացած դժուարութեանց ու փորձութեանց պատճառով: Մեր հոգեւոր էութեան մէջ պիտի կրենք մեր նախնեաց տառապանքին ցաւը մշտապէս, առանց սակայն երկվայրկեանի մը համար զլանալու վերապրեցնել մեր արեան մէջ եռացող նոր կեանքի կանչը, ինչպէս կը պատգամէ մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակը. *«Ողբամ մեռելոց, կոչեմ ապրողաց»:*

Սուրբեր ու հերոսներ ծնած մեր ազգը ժողովուրդներու մեծ ընտանիքին մէջ իր կեանքով խաղաղութեան պատգամաբերն է եղած, առանց սակայն մոռացութեան տալու մեր արդար դատին գիտակցութիւնը:

Արդարեւ, մեր կոչումն է ապրիլ մեր կեանքը քրիստոնէայի նմանակցութեամբ եւ դառնալ արտացոլումը քրիստոնէութեան: Այս է եղած կեանքին ճանապարհը

մեր նախնեաց եւ հիմքը մեր ներկային ու պիտի դառնայ տեսիլքը՝ նոր արշալոյսին:

Հայուն ինքնութիւնը՝ Աստուծոյ միրով ու Քրիստոսի Աւետարաններէն ճառագայթող լոյսովն ու իմաստութեամբ է յագեցած: Ժամանցելի փորձութիւններէն վեր կը յառնենք, երբ մեզ առաջնորդող ոգին՝ քրիստոնէութիւնն է, որուն մէջ ալ բիրեղացած է մեր հայեցի նկարագիրը իր բոլոր յատկանիշներով, հայրենական կարօտով, ազգային անկոտորում կամքով, մեր սրբազան աւանդութիւններով: Ժամանակը անսահմանելի ճշմարտութիւնն է, եւ մենք գալիք ժամանակներուն համար պիտի ամրացնենք մեր մէջ քրիստոնէական սէրը, որմէ այլեւս ուժանալը պիտի մերժենք եւ ճշմարիտ հայրենասիրական ակունքներէն պիտի սնենք մեր հոգին, միտքն ու սիրտը, որպէսզի զգանք ու ապրինք մեր երիտասարդ հերոսներու արեան կոչն ու հրաւերը զգաստութեան: Մեր հաւատքը թոյլ չտար մեզ, որ հոգիներուն խորքին խեղդուի Տէր Զօրի անապատներուն մէջ տարագրուած մեր սուրբ նահատակներու արեան կանչը:

Մեր պատմութեան փորձաքարը դարձաւ Հայոց ցեղասպանութիւնը դեռեւս 106 տարիներ առաջ, Օսման թուրքին կանխամտածուած ցեղասպանութեամբ, եւ նոյնօրինակ դառն բաժակներէ ըմպեցինք տասնամեակներ շարունակ տառապանք ու ցաւ, բայց միշտ մերժեցինք սկարութիւնը. Տկարութիւնը մահուան տանող ճանապարհն է: Մեր տառապանաց ու ցաւին բալասանը Մէրն է: Ուրիշ ելք չունինք մենք: Մէկզմիւսի առջեւ պիտի խոնարհինք սիրով, գուրգուրանքով եւ միմեանց յարգենք խորագոյն հաւատքով ու երկիւղածութեամբ, որպէսզի մեր էութեանը մէջ զգանք Քրիստոսի Յարութեան խորհուրդը, վերածնունդը մեր ազգի: Ահա այս է

եղած տեսիլքը մեր ս. նահատակներուն, տեսիլքը՝ Արցախեան հերոս մեր նոր օրերու սուրբերուն:

Ինչպիսի՞ պատգամ կը հաղորդէ Ս. Նահատակաց յիշատակին ձօնուած այս երեկոյի Ս. Պատարագը: Հոգեւոր արթնութեան ու վերագարթօնքի ոգին կը ճառագէ այս երեկոյի պատարագը, քանզի ի Քրիստոս կը դառնանք նոր ժողովուրդ՝ կեանքն ապրելու համար յարութեան խորհրդով, ստեղծագործելու հզօր կամքով ու եռանդով, հայրենական տեսիլքով, մեր էութեան մէջ խեղդելով սկարութեան ցանկացած դրսեւորում եւ քաջ գիտակցելով, որ անժամանակին մէջ օր մը պիտի վեր յառնէ մեր նախնեաց ամբողջական Հայաստանը, պայմանով, որ այս տեսիլքով առաջնորդենք մեր գաւակունք այսօր, վաղը եւ յաւիտեան:

Երջանկայիշատակը Վազգէն Ա. Հայրապետը իր կեանքը արժեւորած է Յարութեան յոյսով: Մեծ հայրենասէրը Սարդարապատի հերոսամարտը սեպած է որպէս գրաւականը հաւանական բոլոր Հայաստաններու: Ան իր ժողովուրդի ցաւին ու տառապանքին մէջ ներդրած է Յարութեան շունչը այս բառերով. «Հսկեցէք եւ արթուն մնացէք, որ յարութեան յոյսը չմարի ձեր հոգիներէն ներս: Յաւէտ ապրելու տենչով է, որ մարդ կը գերազանցէ ինքն իրեն, կը դառնայ շինող, ստեղծագործող, կը դառնայ արարիչ, կը դառնայ անմահ: ...Առանց յաւէտ ապրելու յոյսին, մարդ կը մեռնի մահէն իսկ առաջ, այդ յոյսով, սակայն, ան կ'ապրի մահէն ալ անդին»:

Ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս աշխարհի ապրող մեր սուրբ եկեղեցոյ եւ ազգի գաւակունք կը գտնուին փորձութեանց առաջ գրեթէ ամենուրեք: Հայոց Յեղապանութեան ս. նահատակներու ոգին եւ նորօրեայ Արցախեան երիտասարդ ու քաջարի հերոսներու նահատակութիւնը յարգելու գործնական մէկ ճանապարհ

կայ մեր առջեւ՝ կեանքն ապրիլ յարութեան յոյսով ու շունչով, դառնալ միաբանուած ժողովուրդ, հայրենիքի վերակերտումի գիտակցութեամբ զօրանալ եւ զօրացնել մեզի վստահուած նուիրական արժէքները՝ հաւատքն ու լեզուն, հայրենական հողն ու պետականութիւնը, հայոց բանակը, մեր սրբազան ու արդար դատին պահանջը, եւ նաեւ հաւատարմութեամբ պահել այն բոլոր սրբութիւնները, որոնք աւանդուած են մեր նախնեաց կողմէ: Չմոռնանք երբէք, որ Տէր Չորի կիզող արեւին տակ, հայոց Մայրերը իրենց արեամբ սնուցին իրենց զաւակները, որպէս վրէժը՝ մեր դէմ գործուած ցեղասպանութեան:

Երեւանի սրտին վրայ նուիրականացած ու դէպի երկինք խոյացող Օիծեռնակաբերդը Թաբոր լեռն է մեր ազգին, որու բարձունքին բոլոր հայերը անխտիր հոգեւին կը միաձուլուին, կը պայծառակերպուին, իրենց վրայէն կը թօթափեն ամէն տեսակի տարբերութիւններ ու տարակարծութիւններ: Օիծեռնակաբերդի բարձունքին, մեր սրտերու համազարկ տրոփիւնով բոլորս կը դառնանք մէկ մարմին, մէկ կեանք, մէկ ճակատագիր:

Հայր իր կեանքը ապրած է համամարդկային արժէքներու գիտակցութեամբ, որուն մշտապէս հարազատ պիտի մնանք: Բայց չմոռնանք մեր հաւատամքը՝ հայութեան ոգին ներշնչելու մէկզմիւսին, ու մեր շրթներուն ամրագրենք միայն աղօթք, որպէսզի սրբուինք ու իրարմով զօրանանք:

Եկէ՛ք միասնաբար ուղղենք մեր հոգիին հայեացքը դէպի Օիծեռնակաբերդ, որուն երկնապլաց ներկայութիւնը մեր յարուցեալ ժողովուրդի խորհրդանիշն է: Այդ բարձունքին վրայ կը հատուին աշխարհասփիւռ հայութեան դէպի տուն տանող ուղիները: Հոն է, որ կը միատրուինք, իրարմով կը զօրանանք, զի մեր փրկութիւնը

միութեան մէջ է: Այս է խորհուրդը Օիժեռնակաբերդի եւ ոսկէ պատգամը՝ նորահաս սերունդներուն:

«Ձեռքին մի՛ շիջուցանէք»:

Արթուն պահենք հոգին, Աղօթքի մէջ մնանք, Հաւատքով ապրինք, Հայրենիք սիրենք:

Միմեանց սիրենք ու գուրգուրանք, մեր հաւատքն ու դպրութեան կենտրոնները պահպանենք նորոգեալ ուխտով, որպէսզի հոգին կերտենք ու դառնանք ժառանգը՝ գալիք սերունդներուն:

Մեր ս. նահատակաց փառապանձ յիշատակին առջեւ մշտական խոնարհումով՝ ականջալուր ըլլանք Արցախեան պատերազմի ընթացքին պատարագուած մեր նոր ժամանակներու քաջարի հերոսներու պատգամին. «Ես խոնարհուեցի Աստուծոյ ու հայրենիքի լոյս սրբութեան խորանին առջեւ»:

Որպէս արդար ժողովուրդի քրիստոնէայ գաւակները ա՛յս պիտի ըլլայ մեր հաւատամքը՝ այսօր եւ յաւիտեան:

## ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեր ս. եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ, եւ օրուայ Աւետարանը մեզի կը պատմէ Յիսուսի մուտքը Երուսաղէմ սուրբ քաղաք: Կարծէք երկրորդ անգամն ըլլալով՝ հրաւեր կը ստանանք բանալու մեր սրտերը, որպէսզի Քրիստոս մուտք գործէ մեր էութեանը մէջ եւ մեր կեանքի ճանապարհորդութիւնը շարունակուի Քրիստոսի հետ: Այսօրուան խորհուրդը մեզի կը ներկայանայ երկու գլխաւոր տօներու մէջ: Առաջինը Համբարձման տօնն է, որ օրեր առաջ տօնախմբեցինք, եւ երկրորդը՝ Հոգեգալուստի տօնն է, որը յառաջիկայ կիրակի կը տօնախմբէ եկեղեցին: Առաջինի պարագային՝ Համբարձման տօնին, մեզի տրուած պատգամը՝ հրաւերն է Աստուածորդու կողմէ, որպէսզի երթանք աշխարհի կեանքին մէջ, քարոզենք Քրիստոսի Աւետարանը, մկրտութիւններ կատարենք Սբ. Երրորդութեան անունով եւ կատարենք Աստուծոյ կամքը: Այս պատգամը մեզի կը տրուի Մատթէոսի Աւետարանով, որուն միտք բանին այն է, որ դառնանք Քրիստոսի Առաքեալ բոլորս ալ անխտիր: Իսկ երկրորդ տօնը՝ Հոգեգալուստը մեզ կը յիշեցնէ Առաքեալներու հաւաքի մասին Վերնատան մէջ, երբ Ս. Հոգին կ'իջնէ անոնց վրայ եւ կը զարդարէ անոնց հոգիները երկնատուր շնորհներով: Եկեղեցին կը հրաւիրէ մեզ միանալու առաքեալներուն Վերնատան մէջ, որպէսզի մենք ալ զգանք ս. Հոգւոյ շնորհաց առատացումը մեր հոգիներուն մէջ եւ անտես չառնենք ի վերուստ մեզի տրուած շնորհները, զանոնք օգտագործելու նաեւ մեր բովանդակ կեանքի մէջ: Հետեւաբար, Համբարձման տօնի խորհուրդով լեցուն եւ ընդառաջ հոգեգալստեան

տօնին՝ բանանք մեր հոգիները եւ սիրով ընդունինք Քրիստոսի մուտքը այնտեղէն ներս, որպէս Երուսաղէմ ս. քաղաքը: Կ'ապրինք շատ տարբեր աշխարհի մը մէջ, եւ Աստուած է մեր յոյսն ու ապաւէնը, որպէսզի խաւարի մէջ չկորսուինք եւ Աստուծոյ առաջնորդութեամբ քայլենք լոյսի մէջ:

Հաւատքով ապրող քրիստոնէայ մարդը, ինքզինք առաքեալի կոչումի մէջ պահող քրիստոնէայ մարդը, Ս. Հոգւոյ շնորհները անտես չառնող քրիստոնէայ մարդը կը տոկայ կեանքի բոլոր տեսակի փորձութեանց: Հետեւաբար, այսօր ս. եկեղեցի առաջնորդելով մեր քայլերը, հրաւեր կը ստանանք նորոգելու մեր քրիստոնէական կոչումը:

Ուրախ ենք, որ այս տօնական օրին, սուրբ պատարագի աւարտին պիտի ունենանք նոր կառոյցի մը հիմնարկէքը, որուն բարիքներէն պիտի օգտուի եւ՝ եկեղեցին, եւ՝ դպրոցը, ուր մեր մանուկներուն կը ջամբենք քրիստոնէական հաւատքի դասերը: Այս առիթով մեր շնորհատրանքները բոլորիդ, եւ ի մասնաւորի բարերարներ Ռիչարդ եւ Թոմաս Մուշիկեան եղբայրներուն, որոնք այս եկեղեցւոյ ծնունդէն մինչեւ այսօր մնացած են զօրավիզ սիւներ: Շարունակեցէ՛ք ձեր եկեղեցանուէր առաքելութիւնը ձեր սիրեցեալ հովիւի՝ Արժ. Տ. Սարգիս Աւ. Քինյ Փեթոյեանի գլխաւորութեամբ ի փառս Աստուծոյ:

*Մայիս 16, 2021*

## ՄԲ. ՂԵՒՈՆՂԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ՝ ՊՍԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի 10-ամեակը օրին չկարողացանք տօնախմբել ըստ արժանւոյն, քանզի քորոնավիրուսի հետեւանքով ողջ աշխարհը տեսակէտով մը իր հունէն դուրս եկաւ, եւ մարդկութիւնը առհասարակ իւրովի փորձառութիւն մը ապրեցաւ: Բայց մենք պիտի ուզենք ըսել՝ երանի բոլոր անոնց, ովքեր հաւատքի սպառազինութեամբ յաղթահարեցին համատարած ախտն ու անոր պատճառած հետեւանքները:

Թէեւ տարի մը ուշացումով, բայց կը տօնախմբենք Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի 10-ամեակը: Տասը տարիներ շարունակ նորակառոյց այս Տաճարը սերունդներու կեանքին մէջ դարձաւ աղօթքի հրաւիրող սրբազան տունը: Մայր Տաճարը համախմբեց մեր ժողովուրդի զաւկունք, որպէսզի դառնանք ամուր մեր տեսիլքին մէջ՝ պահելու մեր քրիստոնէական հաւատքը եւ ազգային ոգին: Մայր Տաճարը, առաջնորդարանի համալիրով դարձաւ մեղուաբոյն մը, ուրկէ ներս մտնողը վստահաբար հոգեւորապէս կը կերպարանափոխուի՝ իր կեանքը կապելով Աստուծոյ հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորհուրդի, Մայր Հայրենիքի եւ մեր սրբազան արժէքներու հետ: Այս բոլորը իր մէջ ամփոփող խորհրդանիշը իսպն է: Իսպշով ենք յաղթած կեանքի բոլոր փորձութիւնները, իսպշով զօրացած պատրաստ ենք դիմագրաւել նոր մարտահրաւերները:

Սիրելիներ՝ ի Քրիստոս, եկեղեցւոյ առաքելութիւնը կը պսակուի յաջողութեամբ, երբ միասնաբար աղօթենք, միասնաբար լծուինք աշխատանքի, այլապէս մեր ուսե-



քուն դրած եւ սպասուածը կը դժուարանանք կատարելապէս իրականացնել: Հոգեւորականներ եւ ծնողներ ձեռք-ձեռքի պիտի տանք եւ խաչին խորհուրդը պիտի փոխանցենք մեր զաւակաց, մանաւանդ այս դժուարին ժամանակներուն: Եւ այնպէս պիտի դաստիարակենք մեր զաւակները, որ խաչին խորհուրդով պարծենան, խաչին լոյսը կրեն իրենց սրտին վրայ, որպէսզի ս. խաչին զօրութեամբ մշտապէս քայլեն Աստուծոյ գծած ճանապարհէն: Տարեդարձները կ'իմաստաւորուին միայն այն ժամանակ, երբ մեր հոգեւոր էութեանը մէջ կ'ապրինք նոր կեանքին տեսիլքը: Եւ երբ կ'արտասանենք մեր հայրերու պատգամները, ապա այդ բոլորը պէտք է ապրինք այն գիտակցութեամբ, որ հրաւեր են կեանքը ապրելու նոր խոստումներով:

Մայր Տաճարի օծման 10-րդ տարեդարձը խթանն ու մոլիչ ոգին պիտի հանդիսանայ, որպէսզի առաւել ընդարձակենք մեր աշխատանքները: Առաքելութեան դաշտը անսահման է, եւ ամէն օր կը զգանք, որ դեռ ինչքա՛ն աւելի պիտի ծառայենք՝ մեր ս. եկեղեցւոյ հաւատացելոց հասնելու եւ յատկապէս մեր զաւակաց կեանքը լուսաւորելու համար քրիստոնէական հաւատքով ու խաչին խորհուրդով:

Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի օծման 10-ամեակի տօնախմբութեանն ընդառաջ առաջին հերթին փառք կու տանք Աստուծոյ, որ օրհնեց բոլորս եւ առաջնորդեց, որ հաւատքի գիտակցութեամբ ու առաջնորդութեամբ միասնաբար կառուցեինք Մայր Տաճարը, որպէս վկայութիւնը մեր քրիստոնէական հաւատքին: Մեր աղօթքներուն մէջ ի մասնաւորի կը յիշենք բոլոր այն ազնիւ հոգիները, ովքեր տեսիլքով ու խոր համոզումով որոշակի դերակատարութիւն ունեցան Մայր Տաճարի առա-

քելութեան իրականացման մէջ: Անոնք այսօր ֆիզիքապէս բաժնուած են այս կեանքէն, բայց իրենց հոգեւոր ժառանգով կը ներշնչեն մեզ:

Վերջապէս, մենք կ'աղօթենք առ Աստուած, որ զօրացնէ մեզ մեր նախնեաց հաւատքի մէջ եւ մշտապէս ամրացնէ մեր քրիստոնէական հաւատքը, որպէսզի մեր կեանքը շարունակենք ապրիլ Աստուծոյ հետ, իմաստուն արարումներով, եւ այս երկրի մէջ ապրելով որպէս օրինաւոր քաղաքացիներ, մեր Մայր Տաճարը պահենք որպէս փոքրիկ Հայաստան ու Ս. Էջմիածին, սրբութիւններ, որոնք այսօր առաւել քան բոլոր ժամանակներուն մեր հոգեւոր էութեան մէջ պէտք է պահենք անխախտ, որպէս պատկերը մեր ինքնութեան:

*Յունիս 1, 2021*

## ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ

Այսօր Տօնն է Ս. Գրիգոր Լուսավորչի Ելն ի Վիրապէն, եւ մեր ս. եկեղեցին իր հաւատացեալներով կը տօնախմբէ մեր հաւատքի հօր տեսիլքը:

Լուսավորիչ հայրապետի տեսիլքն էր՝ Հայաստանը դարձնել քրիստոնէայ, որպէսզի մեր ժողովուրդի կեանքն ուղեգծուէր Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբը, որ արտացոլումն է Քրիստոս Աստուածորդու կեանքին ու Անոր Աւետարանին: Դարեր շարունակ մեր նախնիք ապրեցան իրենց կեանքը քրիստոնէական հաւատքով: Եւ երբ կը բանանք մեր ժողովուրդի պատմութեան էջերը, յստակօրէն կը տեսնենք, որ քրիստոնէաշունչ է մեր պատմութիւնը եւ Տիրոջ պատգամները լոյսն են եղած՝ մեր կեանքն առաջնորդելու: Եւ Քրիստոսի սիրով իմաստաւորած ենք մեր կեանքը քայլ առ քայլ, հանգրուան առ հանգրուան: Քրիստոսի սիրով պարտութեան ենք մատնած ժամանակներու ընթացքին բոլոր տեսակի փորձութիւնները, եւ Յարութեան տեսիլքը եղած է եւ պիտի մնայ հաւատքի զգացողութիւնը մեր կեանքին:

Այսօր անուանակոչութիւնն է նաեւ այս սուրբ եկեղեցոյ: Հետեւաբար կը տօնախմբենք նաեւ Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայց. եկեղեցոյ առաքելանուէր կեանքը: Տասնեակ-տասնեակ տարիներ շարունակ աղօթքի այս տունը եղած է Աստուծոյ տունը մեր նախնեաց, ովքեր դեռեւս հայոց ցեղասպանութենէն առաջ եւ այնուհետեւ իրենց հաւատքի կեանքով սերունդներու կեանքն են ներշնչած Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամներով:

Հոգեպէս երջանիկ ենք, որ եկեղեցին կը շարունակէ իր հաւատքի կեանքը օրինակելի առաքելութեամբ: Մեր աղօթքը առ Աստուած բոլոր այն բարի հոգիներուն համար, ովքեր այս սուրբ եկեղեցոյ կեանքը զարդարած են իրենց հաւատքով ու ծառայութեամբ: Եւ այսօր մեր աղօթքն ու սրտաբուխ գնահատութիւնը անխտիր բոլորիդ, գլխաւորութեամբ Ծիսական Խորհուրդին եւ յարակից մարմիններուն, հոգածու առաջնորդութեամբ ձեր սիրեցեալ հովիւ՝ Արժ. Տ. Կոմիտասին, որուն սերը ձեր բոլորին նկատմամբ ակնյայտ է: Սիրելի Տէր Հայր, արդէն տարիէ մը աւելի է, որ ձեր հոգեւոր ծառայութիւնը կը բերէք Արեւմտեան թեմէն ներս, որպէս հովիւր այս եկեղեցոյ եւ համայնքին: Դուք Ս. Էջմիածնի լոյս հաւատքին հաղորդ կը դարձնէք մեր ժողովուրդը եւ անոր վառ վկայութիւններէն մէկն է այսօր դպրաց ու սարկաւագաց ձեռնադրութիւնը:

Սիրելիներ ի Քրիստոս, ուխտի օր է այսօր այս ծուխին համար: Եւ ինչպէս պիտի իմաստաւորենք այս տօնը: Մեր հաւատքին նորոգութեամբ եւ ծառայութեան նորովի մակարդակով: Եւ մենք ձեզմով զօրացած ենք այսօր: Օրհնուած էք, որովհետեւ հաւատքի կեանքով կ'ապրիք: Շարունակէ՛ք նոյն խանդավառութեամբ ծառայել եւ լուսաւորել այս եկեղեցին:

Եկեղեցին՝ հաւատացելոց կեանքը պայծառակերպող եւ դէպի Աստուած առաջնորդող ճանապարհն է: Աշխարհը դատարկ է առանց եկեղեցոյ ներկայութեան, ուր ներկայ է Աստուած:

*Յունիս 1, 2021*

## ԱՐԹՈՒՆ ՊԱՀՆԵՔ ՄԵՐ ՀՈԳԻՆ

Այսօրուայ Աւետարանը մեզ կը ներկայացնէ Քրիստոսի բերնով արտասանուած որոմներու Առակը, որուն բացատրութիւնը այնքան ալ բարդ ու դժուար չէ: Ամփոփ կերպով մեզի կը ներկայացուի պատկեր մը, թէ ինչպէս գիշերով թշնամին ցորենի դաշտ կը մտնէ եւ ցորենի հատիկներուն մէջ որոմ կը ցանէ: Բնականաբար մութին ու խաւարին մէջ թշնամիին արարքը ուրիշ բան չէ, եթէ ոչ չարութիւն: Եւ եթէ ճիշդ ժամանակին համապատասխան քայլերը չենք առներ, ապա ցորենին հետ միասին հասակ պիտի առնեն նաեւ որոմը, եւ պիտի խեղդուի նաեւ ցորենը:

Այս պատկերը բերենք մեր առօրեայ կեանքին մէջ եւ փորձենք բացատրել այն, թէ ե՞րբ է գիշերը կամ ինչպիսի՞ն է գիշերուան ու խաւարի փորձառութիւնը: Քրիստոսի կողմէ արտասանուած այս առակը յստակօրէն կը պատգամէ այն, որ մենք պարտ ենք արթուն մնալ եւ թոյլ չտալ, որ մեր հոգեւոր կեանքին մէջ տկարանալով՝ մեր ողջ էութիւնը լեցուի օտար խորհուրդներով, որոնք իրենց էութեամբ չար են եւ մեզ կը հեռացնեն Աստուծմէ:

Առակը մեզի կը ներկայացնէ եւ՝ անհատի մը կեանքը, եւ՝ այսօրուայ աշխարհի կեանքին պատկերը: Երկու պարագաներուն ալ, երբ մարդը աղօթքի մէջ չէ, ապա իր կեանքը կը տանէ դէպի խաւար, եւ իր մէջ տեղի կու տայ օտար խորհուրդներու: Մարդն իր անհատական կեանքով եւ նաեւ որպէս հաւաքականութիւն, մշտապէս աղօթքի կեանքի մէջ մնալով՝ կ'իրագործէ հաւատքի գործեր:

Յորենի դաշտն է նաև ընտանիքի կեանքը: Յորենի դաշտն է նաև եկեղեցին ու դպրոցը, եւ թոյլ չպիտի տանք, որ թշնամին մուտք գործէ այնտեղ, եւ մենք Կիրակին, որպէս Աստուծոյ նուիրուած օրը, պիտի արժեւորենք այնպէս, որ լեցնենք աղօթքով, լեցուինք Աւետարանէն ճառագայթող հոգեւոր հացով, որպէսզի ստեղծենք միայն օրինակելին, բարին ու քրիստոնէականը:

Դուք, սիրելիներ, այսօր եկեղեցի առաջնորդելով ձեր քայլերը, ս. պատարագի ներկայութեամբ գործնապէս քայլ մը կը վերցնէք՝ արթուն պահելու հոգին, որպէսզի հեռու պահենք մեզմէ խաւարը եւ Աստուծոյ խօսքով լուսաւորենք մեր հոգեւոր կեանքը:

Արթուն պահենք մեր հոգին: Սա է օրուայ Աւետարանի պատգամը: Օրերը դժուարին են եւ փորձութիւններով լեցուն, մանաւանդ դիմագրաւելով քորոնավիրուսի մեծ մարտահրաւէրը: Եւ մեզի համար այս ժամանակահատուածը միայն հրաւեր է՝ ապրելու աղօթքով ու հաւատքով եւ քայլելու Աստուծոյ ուղեգծած ճանապարհով, եւ ամէնէ կարեւորը՝ համախմբուած մնալու եկեղեցոյ մէջ: Այս մեծ աշխարհին մէջ մեր ս. եկեղեցին իր առաքելութիւնը պիտի շարունակէ առաւել ամուր ու հաստատ, որպէսզի մեր զաւակաց ու զալիք սերունդներուն փոխանցենք մեր նախնեաց հաւատքն ու սրբազան ասանդութիւնները: Հաւատքով առաջնորդուած կեանքը՝ հոգեւորապէս արթուն կեանքն է, լուսաւոր կեանքը եւ արտացոլումը աստուածային սիրոյ եւ իմաստութեան:

Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ իր հովանիին ներքոյ արթուն մնայ նաև մեր թեմի եկեղեցական կեանքը, որպէսզի խաւարը հեռու պահենք մեր հաւատացելոց կեանքէն, տեղի չտալով նաև, որ գիշերանց թշնամին գալով՝ ցորենի դաշտին մէջ որով չցանէ: Դուք

ցորենն էք հողին մէջ: Մենք ստեղծուած ենք Աստուծոյ պատկերին համաձայն եւ արդարեւ ունինք Աստուածայայտ իմաստութիւնը՝ մեր կեանքն ապրելու Աստուծոյ կամքին համաձայն

Մեր թեմական կեանքին մէջ հոգեւոր ցնծութիւն է այսօր, որովհետեւ աստուածային կոչումով, քրիստոնէավայել կեանքի ուղին որդեգրած Տէր եւ Տիկին Տերիք եւ Ատրինէ Ղուկասեաններու ընտանիքը, որպէս ցորենի դաշտը, իրենց հաւատքի ու աղօթքի կեանքով խաւարը հեռու կը պահեն իրենցմէ և այսօր մեզի կը ներկայանան որպէս օրինակելի քրիստոնէաներ, պսակը դառնալով նաեւ մեր թեմի հաւատացելոց: Ընտանիք, որ գիտէ ծառայել Աստուծոյ եւ իր ժողովուրդին, եւ այսօր արժանի կը դառնան Հայրապետական Սրբատառ Կոնդակին ու Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի շքանշանին:

*Յունիս 26, 2021*

## ՄԲ. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Համատարած ողջ հայութեան նուիրական հոգևոր կենտրոնը՝ մայրը մեր Ս. Եկեղեցւոյ զաւակաց, Ս. Էջմիածնի տաճարը այս օրերուն թէև իր դռները փակած է վերանորոգութեան անյետաձգելի աշխատանքներու բերումով, բայց անոր սիրտը կը բաբախէ և անընդհատ պատգամ կը յղէ իր զաւակաց, բոլորիս անխտիր, որպէսզի մեր հոգու պարտքը կատարենք:

Ս. Էջմիածնի խորհուրդին վրայ է ամրագրուած մեր հայրենիքը իր բոլոր սրբութիւններով: Պատմութիւն ուղեգծող աստուածային ոգեղէն ներկայութիւնն է Ս. Էջմիածինը, որուն ուղղելով մեր հոգու հայեացքը՝ կ'ապահովագրենք ոչ միայն մեր անձնական կեանքը, բայց մեր ողջ ազգին յաւիտենականութիւնը:

Մայր Հայրենիքի տեսիլքին ծնունդը և նոյն տեսիլքին զինուորագրեալ հերոսները՝ Վարդանանք և մինչև մեր օրերու նահատակները՝ Սարդարապատի սուրբերն ու Արցախեան քաջարի զինուորները, հաղորդուեցան Ս. Էջմիածնի կենարար սկիհէն և մնացին աւելի վեհ և վեր, քան հեռուները խեղթուող ծափահարութիւնները, որոնց հեղինակները ամբողջապէս չզգացին զոհաբերեալ կեանքին ճշմարիտ խորհուրդը:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը կը կանչէ ինձ և քեզ, բոլորիս անխտիր, որպէսզի անոր լուսեղէն պատկերին մէջ աղօթքի մրմունջ մը մենք դառնանք: Անցեալէն մեզի վստահուած, բայց միշտ ներկայ Ս. Էջմիածինը այսօր կը կանչէ իր զաւակները որպէս հոգևոր մագնիսը, որպէսզի հաւատքով, քաջ ու համարձակ մեր հոգու պարտքը տանք: Բանանք մեր հոգիները, միտքն ու սիրտը և այնտեղ պիտի գտնենք պատկերը Ս. Էջմիածնի: Ս.



Էջմիածնի խորհուրդին առաջ ծնրադրած են նոյնիսկ օտարազգիները և այն թարգմանած են որպէս հրաշքը մարդկութեան:

Բոլորով դառնանք հրաւերի կանչ, որպէսզի Ս. Էջմիածնի խորհուրդին մէջ մկրտենք կեանքերը մեր ազգի զաւակաց, որպէսզի բոլորով դառնանք մեր օրերու զինուորները Վարդանանց և Սարգսրապատին:

Անդադար միմեանց պատգամենք Ս. Էջմիածնի խորհուրդը և այն ժամանակ պիտի տեսնենք, որ ազգն ամբողջ կը վերածնի, կը դառնայ անլուելի կանչը մեր սուրբ նահատակներու:

Ս. Էջմիածինը դարերու ներկայութիւնն է այսօր և յաւիտեան, նոր կեանքին փարոսն է գալիք սերունդներու կեանքին մէջ: Իր մէջ է խտացած խորհուրդը Հայաստանի և ոգին ազատատենչ Արցախին, և յաւետ մայրական իր ներկայութեամբ ինչպէս իրարմէ անբաժան Մեծ ու Փոքր Սասիսները, ուր հանգչած է տապանը Նոյի: Ս. Էջմիածինը անկրկնելի խորհուրդն է հայութեան ինքնութեան: Ով կը խոնարհուի Ս. Էջմիածնի խորհուրդին առջև, կը բարձրանայ որպէս նոր մարդ:

## ՄԲ. ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ ՀԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԱԲԱԶԱՆԸ

Ս. Էջմիածին – այս անուանումը մեր ս. եկեղեցույ և ազգի կեանքին մեջ ունի իր խոր իմաստը: ԷջՄիածին – կը բացատրէ Աստուծոյ Միածին Որդւոյն երկինքէն երկիր այցը մեր հայրենական հողին վրայ, որուն տեսիլքն ունեցաւ Լուսաւորիչ հայրապետը, և նոյն տեսիլքին հաղորդակցութեամբ մեր ազգի զաւակունք Քրիստոսի ներկայութեամբ պայմանաւորեցին իրենց կեանքի նոր ընթացքը՝ ապրելու քրիստոնէական հաւատքով, որ կը թելադրէ Քրիստոս դարձնելու մտատիպարը մեր կեանքին, ու կեանքն առաջնորդելու Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամներով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա կաթողիկոս երբ կը խօսի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մասին, կը կատարէ հետևեալ հաստատումը.

*«Մեր հոգու առաջ կենդանանում է հայի հոգևոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր գործունէութեամբ և հետևանքներով: Նա անձեռագործ մի արձան կանգնեցրեց աւելի տևական ու աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց և այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը, սակայն, հայի վերածնութեան աւազանն է եղել դարէ ի դար»:*

Ս. Էջմիածինը՝ «Հայի վերածնութեան աւազանը»: Յովսէփեանց կաթողիկոս Ս. Էջմիածնի աստուածակերտ տաճարին մէջ կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը և Անով մեր ազգի կեանքին մէջ ուղեգծուած ճանապարհը նոր կեանքին: Հայոց քրիստոնէական հաւատքին մէջ ներթափանց կեանքով ապրած կաթողիկոսը մեզ

կը յիշեցնէ Տիրոջ խօսքը՝ այն դարձնելու համար էութիւնը մեր կեանքին, և նոյն խօսքով մեր կեանքը դարձնելու մանրակերտը Ս. Էջմիածնի. «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ»:

Այս խօսքի մէջ մենք կ'ըմբռնենք այն գերագոյն ճշմարտութիւնը, որ ի Քրիստոս մկրտութեամբ մենք կը դառնանք նոր: Քրիստոսի մէջ կը գտնենք ճշմարիտ կեանքի աղբիւրը, «մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ»:

Մեր խօսքը կ'ուզենք կառուցել մի քանի հիմնակա-ն խորհուրդներու վրայ: Առաջինը, Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքն ու առաքելութիւնն է: Այս ուղղու-թեամբ անփոխարինելի մտածումներ ու բացատրա-կաններ են հասած մեզի:

«Նա (Ս. Էջմիածինը) հիմնուած էր հոգևոր դաս-տիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բղխէին Աւետարանի լուսոյ ճառագայթները՝ հայութեան սրտի խորքերը լուսաւորելու» (Գարեգին Յովսէփեանց):

Հոգեւոյս Վազգէն Ա. Սրբազնագոյն կաթողիկոս ինք ևս կը շեշտէ Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքին վրայ հետևեալ բառերով. «Քրիստոնէական հաւատքի վաւերականութիւնը, պատմականութիւնը և կենդա-նութիւնը մեր ժողովուրդի գիտակցութեան մէջ երաշ-խաւորուած են ու խորհրդանշուած միմայն մեր ազգա-յին մայր եկեղեցիով և աստուածակառոյց Սուրբ Էջ-միածնով, Մայր Աթոռիս՝ մեր ս. եկեղեցու միւս երեք նուիրապետական-տեղական Աթոռների հետ միութեան, հաղորդակցութեան և եղբայրական գործակցութեան պայմաններում»:

«Մեր եկեղեցու և ազգի պատմութեան վերջին մօտ երկու հազար տարիների ընթացքում, սուրբ Աւետա-րանի լոյսի ճառագայթումը ու արտայայտութեանց բո-

լոր ձևերը եղել են ու մնացել ստեղծագործորեն ինքնուրույն: Հայ գիրն ու լեզուն, հայ հոգևոր գրականությունն ու բանաստեղծությունը, միջնադարեան նկարչությունն ու երաժշտությունը շաղախուած են Քրիստոսի Աւետարանի լոյսով ու հանդիսանում են նոյնքան վաւերականօրէն ազգային արժէքներ, ինչքան քրիստոնէական: Հայաստանեայց Առաքելական եկեղեցին՝ սուրբ Աւետարանի ոգին ու քրիստոնէական մտածողութիւնն ու զգայնութիւնը վաւերականօրէն արտայայտող ինքնատիպ ոճերից մէկն է համաքրիստոնէական պատմութեան հորիզոնի վրայ: Այս ժառանգութիւնը մենք պէտք է պահպանենք և պիտի պահպանենք, որովհետև առանց դրան՝ քրիստոնէութիւնը պիտի դառնար նուազ հարագատ հայոց հոգիներին»:

Ս. Էջմիածինը ծննդավայրն է մեր ս. եկեղեցւոյ: Ս. Էջմիածինը աստուածադրոշմ այն ներկայութիւնն է, որն ամենալայն ու ամենէն ամբողջական իմաստով իր մէջ կը բովանդակէ ազգի մը վաւերականութիւնը, ամենէն էական որոշիչները՝ հաւատքին ճառագայթումը, հայրենական գիտակցութիւնը, մշակոյթի ըմբոնողութիւնը: Հայց. Եկեղեցւոյ սիրտն է Ս. Էջմիածինը և Յովսէփեանց կաթողիկոսի բառերով՝ «Հայի վերածնութեան աւազանը»:

Ս. Էջմիածինը կը բացատրէ Աստուծոյ այցը մեր մայր հողի վրայ, և Անոր ներգործութիւնը մեր ազգի կեանքին մէջ: Մենք պիտի գորգուրանք Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ պարգևին՝ Ս. Էջմիածնին, որը մեր առջև կը բանայ ճանապարհը յաւերժութեան:

Ժամանակներու հոլովոյթին մէջ նոր պատգամ կը հաղորդէ Ս. Էջմիածինը մեր ազգի զաւակաց, մանաւանդ այսօր, երբ ամէն վայրկեան վտանգ կը սպառնայ մեր երկրին և ժողովուրդի գոյութենականութեան:

Պատմութեան ամբողջ ընթացքին և այսուհետև Ս. Էջմիածինը մեր կեանքը ապահովագրող աստուա-ծային ներկայութիւնը կը շարունակէ մնալ:

Ս. Էջմիածնի յաւերժականութիւնը խորապէս զգացած են մեր նախնիք, և այդ այնքա՛ն գեղեցկապէս արտայայտուած է Հայց. եկեղեցւոյ և մեր ազգի մեծանուն կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեան՝ Հայոց Հայրիկը իր «Հրաւիրակ Երկրին Արարատեան»-ի նուազ երրորդին մէջ.

*«Ահա զոր անդ խոստացայ, աստ կատարեմ սիրողապէս, առեալ զձեզ, ո՛վ մանկտիք, տանիմ անդրէն՝ Վաղարշապատ Ի տաճարն աստուածակերտ, ի Մայրն մեր ամենածին, Ի վեհ և գերապանծ Աթոռ Հայոց Լուսաւորչին: Աստանօր ցուցաւ ահա տեսիլն այն մեծ զարմանասքանչ հսկողին գիշերաժամ առ փրկութեան գերեալն ոգւոյս, բացումն խորանաշէն երկնից յարկին հաստատութեանն, իջանել լուսաւոր առն ուռն ի ձեռին ոսկիաձոյլ, որ բախեալ զյատակ երկիս հնչեաց թնդիւն ի խոր անդունդս»:*

Իր խօսքին մէջ Խրիմեան Հայրիկ կը մարգարէանայ՝ Ս. Էջմիածնի մէջ տեսնելով յաւերժականութիւնը մեր ազգին, քանզի անդ Աստուած ներկայ է.

*«Ձի սա է լեառն ընդ որում Տեառն հաճեալ յերկնուստ անտի, էջ բոլոր աստուածութեամբն և բնակեցաւ ի սմա ի սպառ, խոստացաւ այլ ևս աստէն ոչ բաժանուիլ ի յաւիտեան»:*

## ՄՐՏԻ ԽՕՍՔ

### “Փոքրիկ Հրեշտակներ” շաբաթօրեայ վարժարանի աշակերտներուն

Միրելի աշակերտներ, ձեր կեանքի մէջ քիչ անգամներ կը պատահի, որ շրջանաւարտները իրենց վկայականները ստանան Ս. Էջմիածնի տօնի օրը, եւ այսօր ներկայութեամբ մեր հոգեւոր դասի, առատ մաղթանք եւ բիրտ օրհնութիւն պիտի բաշխենք ձեզ, որպէսզի ձեր կեանքին մէջ մշտապէս լաւագոյնին եւ կատարեալին ձգտէք, քանզի որպէս պատանի, երիտասարդ աշակերտներ այսօր ձեր առաջին քայլերը կը կատարէք եւ դեռ շատ ճանապարհներ եւ ուղիներ ունիք անցնելու եւ սովորելի, եւ ինչպէս Ս. Մեսրոպ Մաշտոց կը հաստատէ. «Յամենայն ժամ ուսանիմ եւ ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեմ», այս խօսքերը մեզի կը ստիպեն մտածելու, որ մարդ էակը եւ մենք բոլորս՝ մեծ թէ փոքր, դեռ ինչքա՞ն բան ունինք սովորելիք այս կեանքում, դեռ ինչքա՞ն գիտելիքներ պիտի ամբարենք: Մակայն իմ շատ սիրելի աշակերտներ, դուք մանաւանդ այստեղ՝ Հայաստանէն շատ հեռու գտնուելով՝ Հայաստանը միշտ ձեր սրտին մէջ պէտք է ունենաք, ուխտելով՝ մշտապէս մնալու հայ քրիստոնեայ, սիրելու մեր Հայրենքը՝ Հայաստանը, սիրելու Հայոց լեզուն, Հայոց Պատմութիւնը, դառնալու մեր ազգին պատիւ եւ պարծանք բերող զաւակներ: Հետեւաբար այսօր այս տօնական եւ նշանակալի օրուան առիթով մենք Սրբազաններով եւ Քահանայ հայրերով, տնօրէնով, ուսուցիչներով, ձեր ծնողներով եւ ներկայ ժողովուրդի հետ միասին կը շնորհաւորենք ձեզ, ձեր ուսերուն դնելով նաեւ նոր

պարտականութիւններ, որպէսզի առանց տկարանալու շարունակէք քայլել մեր հայրերու հաւատքի կեանքով՝ մշտապէս ձեր կեանքէն ներս ունենալով յոյսի եւ լոյսի ներկայութիւնը:

## Մրտաբուխ Աղօթք

*Աստուած իմ, օրհնէ մեզ, Առաջնորդէ մեզ, որպէսզի ապրենք Քրիստոնէական հաւատքով, մեր Հայրերու սիրով, Հայրենական շնչով, սիրելու համար մեր Հայոց Լեզուն, Հայոց Պատմութիւնը, պահել պահպանելու համար մեր ազգի սուրբ ասանդոյթները:*

*Մենք խոստանում եւ ուխտ ենք կատարում, որ մեր բովանդակ կեանքով պիտի դառնանք օրինակելի հայ երիտասարդներ, եւ ինչպէս մեր ծնողները մենք եւս Աստոյ կամօք ընտանիքներ կազմելով, մեր զաւակներուն պիտի փոխանցենք մեր նախնեաց հաւատքի կեանքի օրինակը, հայրենասիրութիւնը եւ նաեւ ազգին նուիրումը:*

*Այսօր՝ Մբ. Էջմիածնի տօնին մեր հոգիները կը բանանք, որպէսզի Լուսաւորչի հաւատքով եւ տեսիլքով, դառնանք նոր մարդ եւ նուիրում հայ:*

*Օրհնէ մեզ, օրհնէ մեր ծնողները, մեր տնօրէնութիւնը, մեր ուսուցիչները, մեր սիրելի Հայրենիք՝ Հայաստան Աշխարհը եւ Սրբութիւն Սրբոց՝ Ս. Էջմիածինը: Ամէն:*

## ԱՂՕԹՔ ՀԱՆԴԵՐՉ ԾՆՐԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՉՏԷՐ ԱՂԱԶՆԵՍՑՈՒՔ

Աղօթքը մեր սրտի խորերէն առ Աստուած ուղղուած բառերն են, որոնք անկասկած կ'արտացոլեն մեր ներաշխարհի ապրումները: Աղօթքի կեանքին առաջնորդողը Քրիստոս Աստուածորդին է, որ իր երկրաւոր կեանքի օրերուն իր աշակերտներուն բացատրեց աղօթքին իմաստն ու նպատակը: Բաւական է, որ հետեւինք Քրիստոսի օրինակին, եւ մեր հոգեւոր ներաշխարհին մէջ պիտի տարածուի Աստուծոյ լոյսն ու իմաստութիւնը:

Աղօթքը՝ հետեւաբար, մեզ կը կապէ Աստուծոյ հետ, որպէսզի Անոր առաջնորդութիւնն ապահովենք մեր կեանքին մէջ:

Ինչքա՛ն հոգեւին ուրախ եմ, որ մանկութեանս տարիներուն իմ ներաշխարհին մէջ ամրագրուեցաւ աղօթքի կեանքով ապրելու գիտակցութիւնը: Այսօրուայ նման կը յիշեմ իմ առաջին քայլերը դէպի աղօթքի կեանք, որն առ այսօր եւ Աստուծոյ կամօք պիտի շարունակուի իմ հոգեւոր կեանքի ճանապարհորդութեանը ընթացքին:

Աղօթքը՝ հոգեւոր հացն է, որուն կարօտը պիտի զգանք, որովհետեւ աղօթելու ներքին զգացողութիւնը արդէն սկիզբն է աղօթքին, որուն մէջ մկրտուած կեանքերը լուսաւոր են եւ նպատակամղուած՝ կատարելու համար Աստուծոյ կամքը:

Երբ աղօթքի կը կանգնինք, ապա մեր շրթներուն վրայ դրուած առաջին բառերը պիտի արտացոլեն մեր երախտագիտութիւնը Աստուծոյ հանդէպ: Փառք պիտի յայտնենք Աստուծոյ՝ մեզի տրուած պարգէներուն համար ու միաժամանակ խոստումը պիտի կատարենք պահելու Աստուծոյ տուածը:

«Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:



Ինչքան կը կրկնենք սաղմոսին այս մաղթանք-աղօթքը, այնքան հաստատ ենք մեր քրիտոնէական կոչմանը մէջ: Պիտի զգանք սաղմոսերգողի հոգիին թռիչքն ու թրթռացումը:

Այսօր Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցի համաձայն Քրիստոսի Պայծառակերպութեան Տօնն է. աղօթքի օրն է բոլորիս համար: Քրիստոս բարձրացաւ Թափօր լեռ եւ աղօթքի մէջ պայծառակերպ իր ներկայութեամբ բոլորս կը հրաւիրէ աղօթքի: Եւ ի տես Տիրոջ պայծառակերպութեան Պետրոս Առաքեալ կը բացականչէ ըսելով. «Տէ՛ր, բարօք է մեզ աստ լինել»: Ուրեմն, քաջ ու համարձակ պատասխանենք Քրիստոսի կանչին ու հրաւերին, որպէսզի իրեն հետ միասին մնանք աղօթքի մէջ:

Պայծառակերպութեան Տօնը անձնապէս ինձ համար յատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ աւելի քան քառասուն տարիներ առաջ, Կիրակի, 10 Յուլիսին, 1980 թ. Պայծառակերպութեան Տօնին մատուցեցի իմ անդրանիկ ս. պատարագը Միածնաէջ Ս. Սեղանի վրայ, ի ներկայութեան հոգելոյս Տ. Վազգէն սրբազնագոյն կաթողիկոսին: Քառասուն եւ մէկ տարիներ յետոյ կը յիշեմ այդ օրը, որով եւ իմ կեանքն ապրեց նշանակալից հանգրուանը քայլելու համար Աստուծոյ ուղեգծած ճանապարհէն:

Այսօր, իմ աղօթքի մէջ փառք կու տամ Աստուծոյ, որ օրինեց իմ կեանքը քահանայի կոչումով: Ուրեմն, այս օրը իմ կեանքի մէջ քահանայական իմ ուխտը նորոգելու օրն է: Կրկին հրաւեր կը ստանամ Աստուծմէ՝ առաւել ամրագրելու համար քահանայութեան կոչումը, իմ մէջ նորոգելու համար ծառայութեան ոգին ու գիտակցութիւնը:

*Յուլիս 11, 2021*

## ԱՐԴԱՐ ՄՊԱՍՈՒՄ ՄԸ

«Տուն բաժանեալ յանձն իւր աւերի» (Մատթ. 12:25)

Եկեղեցին մեր տունն է: Եկեղեցւոյ առաքելութիւնը ամբողջական է, երբ հոգեւոր դասը լիովին կը կատարէ իրեն վստահուած հոգեւոր աւանդը, որը դարերու նուիրականութիւն ունի: Վերջին աւելի քան վեց տասնամեակներուն մեր տունը երկփեղկուեցաւ, եւ որուն որպէս հետեւանք սկարացաւ Հայց. Եկեղեցին, մանաւանդ անզօր դառնալով դիմակայել միասնական ոյժերով մեր հայրենիքի ու ազգին դէմ ծառայած դժուարութիւններն ու փորձութիւնները:

Վերջերս հրապարակուած «Հայ եկեղեցին ու քաղաքականութիւնը» վերնագրուած գիրք ի շարք բազում այլ հարցերու ի մասնաւորի շեշտը կը դնէ Հայց. Առաքելական եկեղեցւոյ նուիրապետական արձոյններու միջեւ գոյացած բաժանումին, որը կարելի է բնորոշել ու սահմանել 20-րդ դարու երկրորդ կեսին կերպարանաւորուած մեծագոյն աղետը մեր ազգի կեանքին մէջ: Յօդուածին հեղինակը ճիշդ կը բնորոշէ անոր հետեւանքները, եւ այդ հիման վրայ ալ կ'ուզենք հաստատապէս ամրագրել մեր մտածումը, որ այլեւս արդարացուցիչ ոչ մէկ բացատրութիւն ընդունելի է: Գէթ մեր հայրենիքի այս ծանրագոյն օրերուն, չըսելու համար օրհասական պահին մոռցուած է ե՛ւ հայրենի պետականութեան գոյութեան հրամայականը, ե՛ւ եկեղեցին արմատապէս իր միութեան մէջ հաստատելու տեսլականը: Եթէ կան սեւ մութ ուժեր, որոնք կը ջլատեն մեզ, ապա հարկ է արթննալ եւ եկեղեցւոյ ներքին միութիւնն

ապահովելով զօրացնել մեր նախնեաց հաւատքով ամրագրուած քրիստոսաւանդ եկեղեցին: Իսկ եթէ քաջատեղեակ ենք պատմութեան բոլոր ծայքերուն, որոնք արդէն դարձած են ժամանակավրէպ, ապա ինչպէս Քրիստոս խարազանելով Տաճարէն դուրս մղեց լումայափոխները, ապա հաւատքի քաջութեամբ պարտ ենք մեր մէջ կոխկոտել «ես»-ը եւ այնպէս ընել, որ այս աշխարհէն բաժնուինք մեր ժողովուրդի մեծ երազը՝ եկեղեցոյ միութիւնը իրականացած տեսնելով:

Նորահաս մեր երիտասարդներուն ոչ մէկ տրամաբանական բացատրութիւն չունինք այլեւս: Չկան խորհրդային տարիներ եւ ժամանակն է, որ նուիրապետական մեր բոլոր աթոռներու միջեւ հաստատուի բաղձալի միութիւն ու երբայրսիրութիւն: Եւ ինչպէս անցեալին, այսօր եւս ժամանակն է, որ վերանան թեմական կառոյցներու բաժանումը, եւ թեմակալի պաշտօնին մէջ կամ թեմէն ներս ծառայութեան կոչուին բոլոր նուիրապետութիւններէն ամենայարմարագոյն թեկնածուները, ապահովելու համար եկեղեցոյ զօրութիւնը:

Հայց. Առաքելական եկեղեցոյ նուիրապետական աթոռներու միջեւ առկայ բաժանումը որոշապէս կը սկարացնէ բոլորիս մէջ հզօր եկեղեցոյ տեսիլքը՝ իր առաքելութեամբ արդարացուած: Բաժանումը միայն արհեստական է եւ անյապաղ պետք է ձեռնարկուին միջոցները՝ վերադառնալու հին օրերու պատկերին, երբ գահակալներու եղբայրական սիրոյ ոգին կը պարտաւորեցնէր բոլորին մնալու միաբանեալ:

Այսօր, բարեբախտութիւն է, որ մեր ժողովուրդը յանձնառութիւն է վերցուցած ապահովելու ներքին միաբանութիւնը եկեղեցոյ զաւակաց միջեւ, որը պետք է բարոյական ճնշում գործէ բոլորիս վրայ՝ արագացնելու դէպի միութիւն տանող գործընթացը: Հազար անգամ

պիտի կրկնենք, որ եկեղեցին պետք է զերծ մնայ եւ հեռու պահենք քաղաքական ներազդեցութիւնները, որպէսզի արմատապէս բարեկանզենք ու զօրացնենք եկեղեցին: Այլապէս, երբէք չզարմանանք ականատես դառնալով այն իրավիճակին, որ այսօր ե՛ւ ի Հայաստան ե՛ւ յարտասահման մեր ազգը կը հօշոտուի կրօնական զանազան հոսանքներէն:

Իրավիճակը սրբագրելու մէկ հիմնական մօտեցում կայ, զոր պետք է դարձնենք տեսանելի ու շօշափելի, եւ այն ալ քրիստոնէական սիրով խոնարհելու մէկզմիւսին առջեւ եւ միասին վերցնելու մեր ուսերուն հայ եկեղեցոյ առաքելութեան տեսիլքն ու խաչը:

Իսկ եթէ թերանանք այս քայլին մէջ, ապա մեր ներքին ամրութիւնը կը փլի ու նոյն եկեղեցոյ զաւակներ կ'օտարանան իրարմէ:

Հայ եկեղեցոյ առաքելութեան դաշտը կը սպասէ իր հոգեւոր դասին նորովի եռանդով, հաւատքի արդար զգացողութեամբ: Գեթ այս մօտեցումով փորձութիւններն ու ժամանակի դժուարութիւնները կը նուազեցնենք՝ դէպի իր հօտը վերադարձնելու համար կորուսեալ մէկ ոչխարը:

Մեր խօսքի աւարտին կ'ուզենք անգամ մը եւս յիշեցուցանել մեր Տիրոջ պատգամը. «Տուն բաժանեալ յանձն իւր աւերի»: (Մատթ. 12:25)

*Յուլիս 21, 2021*

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԻՐ

«Տո՛ւր զհաշիւ տնտեսութեան քո»: (Դուկ. 16:2)

Վարդապետին խօսքն է սա՛ն ուղղեալ անիրաւ տնտեսին, որը նոյնքան ուժականութեամբ ուղղուած է բոլորիս անխտիր, անկախ այն հանգամանքէն, թէ ով ինչպիսի դիրքի վրայ կը գտնուի: Եւ երբ աղօթքի մէջ է մարդը, ապա այս նոյն հարցադրումին անտարակոյս պիտի պատասխանէ առաւել պատասխանատուութեամբ եւ կեանքի նկատմամբ նոր տեսլականով մը:

«Տո՛ւր զհաշիւ տնտեսութեան քո»:

Երբ այս խօսքը կ'ուղղուի իւրաքանչիւրիս, ապա առաջին մտածումը, որը կ'արթննայ մեր մէջ, այն է, որ ունենանք գիտակցութիւնը այն մասին, որ կեանքը Աստուծոյ պարգէն է՝ տրուած ողջ մարդկութեան, եւ որոշապէս պատասխանատուութիւն ունինք տրուած մեծ նուէրին համար: Ուրեմն, առաջին հերթին պիտի ունենանք երախտագէտ սրտի զգացումներն ու գիտակցութիւնը Աստուծոյ հանդէպ:

Երկրորդ մտածումը, որ իւրաքանչիւրս ունինք, այն է, որ Տիրոջ խօսքը մեր էութեանը մէջ պիտի դարձնենք մնայուն արձագանք մը, որ մեզ պիտի առաջնորդէ արթնութեան եւ հաշուետու ըլլալու գիտակցութեան: Առանց այս հարցադրումին մեր մէջ կը մարի հաշուետու ըլլալու հանգամանքը եւ անկասկած տեղիք կու տանք թերութեանց ու սխալներու:

Վերջապէս, Տիրոջ կողմէ տրուած այս խիստ հարցադրումը կը պարտաւորեցնէ, որ մեր կեանքով դառնանք պատասխանատու եւ ի մասնաւորի իր կամակատարը:

**«Տո՛ւր զհաշիւ տնտեսութեան քո»:**

Վարդապետին այս խօսքը ինչքա՛ն պարտաւորեցնող է նաեւ հայ հոգեւորականութեան համար: Այս նոյն խօսքին մէջ կը լսենք մեր կոչումին հրաւերը, թէ ինչքանով կը մնանք հարազատ Աստուծոյ կամքը իրագործելու առաքելութեանը մէջ: Հայ հոգեւորականը իր կեանքին, իր ծառայութեանը պիտի նայի որպէս տնտեսութիւն: Նոյն այս պատգամը պիտի դարձնենք նաեւ հայելին մեր ներաշխարհին, ուրկէ մեզի պիտի հասնի նաեւ զգաստութեան կոչը: Հայ հոգեւորականը իր ծառայութեանը ընթացքին ֆիզիքապէս իր կողքին գտնուող վերակացու հսկիչի պէտքը չունի, քանզի Աստուած ինք կը քննէ մեր սրտին խորքերը եւ կ'առաջնորդէ մեզ քայլելու ուղիդ ու արդար ճանապարհէն:

Տիրոջ այս խօսքին պատասխանենք աղօթքով ու հաւատքով: Տիրոջ այս խօսքին ընդառաջ կերպարանափոխենք մեր կեանքը, որպէսզի մեր քահանայութիւնը դրսեւորենք հաւաքաբար որպէս հովուական ծառայութիւն:

Հայց. Առաքելական եկեղեցին այսօր, աւելի քան բոլոր ժամանակներուն, պէտքը ունի ինքզինք բարձրացնելու ծառայութեան նոր մակարդակի մը վրայ հոգեւոր ու աշխարհիկ սպասաւորներով: Աստուած բոլորին է շնորհած պարգեւներ, եւ պարտ ենք ունենալ տեսիլքը մեր նախնեաց, հաւատքի գիտակցութիւնը՝ ս. մկրտութեամբ ընդունած, որպէսզի կատարենք Աստուծոյ

կամքը եւ ապահովագրենք Քրիստոսի եկեղեցւոյ կենսունակութիւնը: Հոգեւորականութիւնը իր կեանքով պիտի դառնայ ոսկէ կամուրջը իր ժողովուրդը բարձրացնելու առ Աստուած:

Մեր աղօթքն է առ Աստուած, որ այս օրերուն լիովին մեր աղօթքը կենտրոնացնենք մեր կոչմանը վրայ, որպէսզի հոգեւորապէս ամրացած մեր մէջ խորացնենք նաեւ ծառայութեան իմաստութիւնն ու զօրութիւնը որպէս խոնարհութեան գործնական պատգամ՝ հանդէպ մեր ժողովուրդը:

*Յուլիս 24, 2021*

## ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅԻՐ

Աստուածամօր Վերափոխման Տօնը Հայց. Առաքելական եկեղեցւոյ կարեւորագոյն եւ նուիրական տօներէն մէկն է: Տօնին խորհուրդը եւ իմաստը կը հրաւիրէ հաւատացեալ քրիստոնէան՝ խոնարհումով ընկալելու Աստուածամօր կերպարի մէջէն ճառագայթող մօր առաքելութիւնն ու կոչումը հայ ընտանիքէն ներս եւ առհասարակ համայնքի կեանքի բոլոր ոլորտներուն մէջ: Ո՞վ էր Աստուածամայրը՝ Ս. Կոյս Մարիամ. Խոնարհագոյն անձին ներկայութիւնը, որ սիրով ու հաւատարմութեամբ պատասխանեց Աստուծոյ կանչին, որպէսզի իր մէջ կրէր Աստուածորդին որպէս «Մափոր ոսկեղէն»: Ան իր մայրութիւնը դարձուց ներշնչման աղբիւրը աշխարհի բոլոր մայրերուն համար: Դարձաւ բոլորանուէր ու պատարագեալ Մայրը մանուկ Յիսուսի համար եւ հետեւեցաւ անոր քայլերուն մինչեւ խաչելութիւն:

Իր մայրական անգուգական կենցաղով Աստուածամայրը դարձաւ հաւասար բոլոր մայրերուն եւ իր հաւատարմութեամբը մայրութիւնը բարձրացուց ծառայութեան նոր մակարդակի մը: Ան իր որդու մէջ տեսաւ աստուածային զօրութիւնը, եւ երբ Կանայի հարսանեաց արարողութեան ներկայ գտնուեցաւ, յիշեցուց իր որդուն՝ իրեն մէջ ամփոփուած աստուածային հրաշագործ զօրութեանը մասին, որպէսզի ջուրը փոխէր գինիի: Մէկ խօսքով՝ Աստուածամայրը դարձաւ իրօք ճանապարհորդակից Յիսուսին, եւ ինչպէս բոլոր մայրերը, ինք իր որդու մէջ տեսաւ փրկագործութեան խորհուրդը մարմնաւորող Գառն Աստուծոյ:



Աստուածամայրը իր մաքրամաքուր ու անբասիր կենցաղով դարձաւ առաջին սուրբը՝ սրբոց ընտանիքին մէջ: Ահա թէ ինչու՞ մեր ս. Եկեղեցին իր Աւագ խորանին է վերապահած Աստուածամօր պատկերը՝ իր գրկին Յիսուս մանուկը: Հաւատքի բարձրակէտին կանգնած քրիստոնէան խորութեամբ կ'ըմբռնէ ս. խորանէն մեզի հետ հաղորդակցուող Աստուածամօր անձին ընդմէջէն լոյսին հեղումը: Նոյն Աստուածամօր պատկերին մէջ քրիստոնէայ հաւատացեալը կը գտնէ նաեւ պատարագուող իր մօր պատկերը կենսատու: Ուրեմն, Աստուածամայրը մեզի կը ներկայանայ նաեւ որպէս մայրութեան խորհրդանիշը, որուն առջեւ կը խոնարհին մայրերը եւ բոլորս անխտիր:

Ինչպէ՞ս պիտի իմաստաւորենք Աստուածամօր Վերափոխման տօնախմբութիւնը: Առաջին հերթին մեր էութեանը մինչեւ խորքին պիտի զգանք կոչումը՝ ծառայութիւն ունենալով որպէս մայր, ծնողական գործվագութ մեր սէրը բաշխելով մեր զաւակաց, որպէս օրինակ ունենալով Աստուածամօր կերպարը: Այլ խօսքով, ընդառաջ Աստուծոյ կանչին, մեր կոչումը պիտի դարձնենք հաւատարմութեան ծառայութիւնը: Եւ երկրորդը՝ բոլորս մեր ս. Եկեղեցին պիտի ընդունինք որպէս մեր դարաւոր մայրը: Ուրեմն, ինչպէս մայրը իր որդուն կատմամբ, այդպէս ալ մենք որդիական մեր պարտքն ու առաքելութիւնը պիտի կատարենք Հայաստանեայց Արաքելական մեր Մայր ս. Եկեղեցոյ հանդէպ: Եւ որպիսի՞ն պիտի ըլլայ մեր պարտքն ու առաքելութիւնը մեր մօր հանդէպ. ճանչնալու անոր տրուած Աստուածադրոշմ կոչումն ու սպասաւորութեան հրաւերը: Եւ ճանչնալ Հայաստանեայց Եկեղեցին, որ կը պարտաւորեցնէ, որպէսզի մենք մեզ որդեգրութեան չտանք, այլ վերադառնանք մեզ լոյս աշխարհ բերող մօր գիրկը:

Մայրը՝ որ իր զաւակաց շնորհեց Աստուածաշունչ մատեանին խօսքը Մեսրոպաշունչ Այբուբենով, հաւատքը՝ ընդդէմ օտար խորհուրդներու, տեսիլքը՝ հայ քրիստոնէայի ընտանիքին, խոնարհումի ոգին՝ հայրենի ժառանգին առաջ, հոգեւոր ու բարոյական սկզբունքներով շաղախուած կեանքին զգացողութիւնը, բայց տակաւին աւելին՝ իր արեան մինչեւ վերջին կաթիլը պատարագող մօր պատկերը, որուն հայելին դարձաւ Տէր Զօրը, նոյն ժամայն, սակայն նոյն հողին մէջ տառապանքէն դէպի յարութիւն տանող ճանապարհը:

Միբելի մայրեր եւ հաւատացեալներ, Աստուածամօր Տօնին խորհուրդին ընդառաջ թող մեր մէջ իր նոր ծնունդը ապրի Աստուածամայրը՝ իր Յիսուս մանուկով, որպէսզի կեանքն ապրինք քրիստոնէական հաւատքով, այն հաւատքով, որ այսօր աւելի քան բոլոր ժամանակները իր զօրութեամբը պիտի պարտաւորեցնէ մեզ՝ դառնալու համար սիրոյ ու համբերութեան ներշնչութեան աղբիւր ամենուրեք: Ահա այս է խորհուրդը Աստուածամօր կեանքի ու կոչման առաքելութեան, որուն հրաւերը կ'ուղղուի նաեւ նորահաս սերունդներուն:

Այսօր մեր ս. եկեղեցւոյ ու ազգի կեանքին մէջ Աստուածամօր կերպարին ու օրինակին հետեւելով պիտի ապրի հայ մարդը, որպէսզի մեր զաւակները դաստիարակենք որպէս բարի քրիստոնէայ, ազնիւ ու աւանդապահ հայ: Մենք մեր հովուական կեանքի փորձով կը տեսնենք տարբերութիւնը ընտանիքէ – ընտանիք: Աստուածամայրը իր Որդու նկատմամբ ցուցաբերեց բացառիկ հոգածութիւն: Ահա նոյնը կը սպասուի նոր օրերու մայրերէն: Եւ երբ կը խօսինք հոգածութեան մասին, մեր խօսքը չի վերաբերիր նիւթականին, այլեւ առաւելաբար հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան: Խօսեցէք ու պահանջող եղէք ձեր զաւակներէն, որպէսզի

վերադառնանք դեպի սրբություն: Մեր պատգամը կ'ա-  
ւարտենք Յովսեփեանց կաթողիկոսի հետեւեալ խօսքով.  
«Եթէ ընտանիքը Աստուծոյ տունն է, ապա մայրը նոյն  
տան մէջ քահանան է»: Ուրեմն տեսէք, թէ ինչպիսի  
նուիրական պարտականութիւն է վստահուած մայրե-  
րուն: Միրելի մայրեր, Աստուածամօր նման դուք եւս  
դարձէք «սափոր ոսկեղէն»:

*Յուլիս 25, 2021*

## ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻ ԲԺՇԿՈՒՄԸ

Աւետարաններուն մէջ կը կարդանք այսօրուան դասը, որը մեզի կը պատմէ Քրիստոսի կողմէ կատարուած անդամալոյծի բժշկումը: Եւ ինչքա՛ն դասեր ունինք քաղելիք այսօրուայ ավետարանական ընթերցումէն:

Առաջին դասը այն է, որ մենք պարտ ենք տեսնել խումբ մը հաւատացեալներու հաստատ ու խոր հաւատքը, որոնք ամէն միջոցի դիմեցին՝ իրենց բարեկամը հասցնելու Յիսուսի մօտ, որպէսզի ան բժշկութիւն ստանար:

Երկրորդ դասը այն է, որ անդամալոյծին բարեկամները կարեկցութիւն ցոյց տուին իրենց ընկերոջ նկատմամբ, եւ անով իսկ մեզի կը տրուի նոյն պատգամը, որպէսզի կէանքի մէջ մենք եւս միմեանց նկատմամբ ունենանք հոգատարութիւն, որն արդէն իսկ հաւատքի արտայայտութիւնն է:

Երրորդ դասը, որ մեր այսօրուայ բժշկութեան պատմութենէն մեզի կը տրուի, այն է, որ Աստուածորդին ոչ միայն հրաշագործեց, այլեւ՝ նոյնով իսկ ցոյց տուաւ Իր ներողամտութիւնն ու սիրոյ անսահմանելիութիւնը մարդկութեան նկատմամբ: Սա նոյնն է, ինչ որ տեսանք Անառակի առակով մեզի տրուած պատգամին մէջ: Այստեղ Յիսուս տեսնելով անդամալոյծի բարեկամներու հաւատքը, դարձաւ անդամալոյծին ու ըսաւ. «Որդեա՛կ, քո մեղքերը քեզ ներուած են»:

Անշուշտ, Յիսուս իր այս առակով ողջ մարդկութեան առջեւ բացաւ վերստին ծննդեան խորհուրդով իրականացուող կէանքին ճանապարհը: Նոյն պատմութեան մէջ, սակայն, կը տեսնենք նաեւ օրէնքի մարդկանց բարկութիւնը՝ կատարուածին ու խօսքերուն համար:

Ահաւասիկ այստեղ է, որ Յիսուս բոլորին կը պատասխանէ՝ ըսելով. Մարդու որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքեր ներելու:

Մենք պիտի լսենք սիրող ու ներողամիտ Աստուծոյ խօսքը եւ մեր հաւատքով ու բարի գործերով նոր կեանքին ճարտարապետը դառնանք: Եւ եթէ այս է պատգամը Քրիստոսի Աւետարաններուն, ապա ճշմարտապէս Աւետարաններուն ուղղենք մեր հայեացքը որպէս կեանքի գիրքը, հայելին մեր կեանքին եւ կեանքը՝ դէպի Աստուած առաջնորդող ճշմարիտ ուղեցոյցը: Այս օրերուն մանաւանդ, երբ կը կարդանք անդամալոյծին բժշկութիւնը, հոն մենք մեզ կը տեսնենք երեք տեսակի դերակատարութեանց մէկուն կամ միւսին մէջ. կամ անդամալոյծն ենք, կամ օրէնքի ուսուցիչները, կամ անդամալոյծին բարեկամները: Եւ անշուշտ պիտի ուզենք մենք մեզ տեսնել առաջին հերթին Անդամալոյծի բարեկամներու դերին մէջ: Եւ եթէ այդպիսին է արդէն մեր կեանքի ընթացքը, ուրեմն աւելիով պիտի հաստատենք մեր մէջ խոստումը՝ հաւատքով ապրելու: Ուրեմն, թող այսօրուայ անդամալոյծին բժշկումը դառնայ սնունդը ձեր հոգեւոր կեանքին:

*Օգոստոս 7, 2021*

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

«Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործքն նորա, թէ Աստուծով գործեցան» (Յովհ. Գ.21):

Օրուայ Աւետարանական դասը կը քաղենք Յովհաննու Աւետարանի 3-րդ գլուխէն, որ մեզի կը պատմէ խաչի խորհուրդի մասին: Խաչը՝ որուն վրայ իր կեանքը պատարագեց Քրիստոս Աստուածորդին՝ իր խաչելութեամբ յեղաշրջելու համար մարդուն կեանքը դէպի յաւիտենականութիւն, որովհետեւ մինչեւ Քրիստոս խաչը գործիք էր մահապարտներու համար, այլ խօսքով՝ պատիժի միջոցն էր այդ:

Աւետարանիչը մեզի կը խօսի փրկագործութեան խորհուրդի մասին, որուն մէջ է ամփոփուած Աստուծոյ սէրը մարդկութեան նկատմամբ: Ահա այս ճշմարտութիւնը ընկալող մարդը իր կեանքը կ'առաջնորդէ դէպի լոյսը, որուն հետ հաղորդակցութեան մէջ գտնուող մարդը կը գործէ Աստուծոյ կամքին համաձայն:

Մարդուն կեանքը պիտի ըլլայ ճանապարհորդութիւն Աստուծոյ հետ եւ դէպի Աստուած: Մարդուն կեանքը պիտի արտացոլէ Աւետարանի պատգամները, որուն աղբիւրն է Քրիստոս Աստուածորդին: Ահա թէ ինչու այս հաւատքով իր կեանքը ուղեգծող Պօղոս Առաքեալ կը կատարէ նաեւ հաստատումը, թէ խաչին խորհուրդովը կը պարծենայ:

Եւ այսօր, Խաչվերացի Տօնն ըլլալով, կ'ուզենք ընդգծել այն կարեւոր իրատը, որը նուիրագործուած է նաեւ դարերով մեր նախնեաց կեանքով: Խաչապաշտ ազգի

մը զաւակներն ենք. իսաչին խորհուրդն ենք ժառանգած եւ նոյն իսաչին առջեւ խոնարհումով կը շարունակենք մեր կեանքը: Եւ երբ կը իսաչակնքենք, ապա ընդառաջ կը քայլենք դէպի ճշմարտութիւնը, որ Աստուածորդու այցն է աշխարհի մարդկանց կեանքին մէջ, եւ ապա խոստումը կը կատարենք՝ ապրելու կեանքը ծայրէ ի ծայր Քրիստոսի իսաչէն ճառագայթող պատգամներով:

Խաչվերացի Տօնը հաստատուած է անշուշտ պատմական իրողութեան մը վրայ, թէ ինչպէս քրիստոնեաներ իսաչը կը փրկեն գերութենէ: Բայց այս տօնը կը թելադրէ այն, որ եթէ կը դադրինք ըլլալէ իսաչապաշտ եւ կը թերանանք մեր զաւակաց սորվեցնել իսաչակնքումը, ապա նոյն իսաչը մեր էութեան մէջ գերութեան կը մատնենք:

Խաչը՝ հրաւերն է նոր կեանքին: Խաչը՝ կոչն է աղօթքին: Խաչին խորհուրդը ճշմարտութիւնն է մեր կեանքին, որպէսզի ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ, որպէսզի մեր խօսքն ու գործքը ըլլան բարի ու լոյս սփռող:

Խաչվերացի Տօնին կը համընկնի նաեւ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի օծման տարեդարձը: Անցեալ Մեպտեմբերին համաճարակի պատճառով հետաձգեցինք մեր Մայր Տաճարի օծման 10-ամեակը: Այսօր կը տօնախմբենք Մայր Տաճարի 10-ամեակը եւ յուսադրող տրամադրութիւններով կը նայինք գալիք տարեդարձներուն:

Միրելիներ ը ի Քրիստոս, Խաչվերացի Տօնը իմաստաւորած ենք Մայր Տաճարի կառուցումով, եւ տօնին խորհուրդը կը հրաւիրէ մեզ, որ աղօթքի այս տունը դարձնենք լոյսին աղբիւրը բոլորիս համար: Տասնամեակ մը առաջ այս նոյն աղօթքի տունը չունէինք: Մեր բոլորի աղօթքով ու հաւատքի գիտակցութեամբ կառուցուեց Մայր Տաճարը եւ այստեղ մատուցուեցան ս. Պատարագներ, տեղի ունեցան նորածին մանուկներու

քառասնօրեայ տաճարին ընծայման արարողութիւններ, ւ. Մկրտութիւններ, ւ. Պսակներ, մէկ խօսքով՝ այս սրբազան վայրը դարձաւ ոսկէ կամուրջը՝ մեզ դէպի Աստուած առաջնորդող:

Մեր մաղթանքն ու աղօթքն է առ Աստուած, որ դուք շարունակէք տէրն ու պաշտպանը դառնալ Մայր Տաճարին եւ ամէն ուխտագնացութենէ յետոյ, լուսաւորեալ կեանքով, Աստուծոյ սէրը տանիք ձեր ընտանիքներէն ներս:

Մեր մաղթանքն ու աղօթքն է առ Աստուած, որ ւ. խաչը ամուր բռնէք ձեր սրտին եւ գործնապէս ապրիք քրիստոնէութիւնը: Գալիք օրերուն անընդհատ պիտի հրաւիրենք մեր թեմի հաւատացեալները՝ մօտենալ Աստուծոյ, խաչի խորհուրդով ապրիլ մեր կեանքը, որպէսզի նոյն խաչին խորհուրդով ու զօրութեամբ մեր մէջ փարատենք սկարութիւնները եւ ի Քրիստոս կերտենք խաչաբոյր կեանք:

Խաչվերացի Տօնին կը վերանորոգենք մեր մէջ խաչին տեսիլքը եւ այսօր մեր աղօթքներուն մէջ կը յիշենք երախտագէտ սրտով բոլոր անոնք, որոնք խաչին սիրովը իրենց հոգին դրին Մայր Տաճարի կառուցման եւ այս Մայր Տաճարը դարձուցին ե՛ւ իրենց, ե՛ւ մեզի համար հաւատքի վկայարանը:

Խաչվերացի Տօնը իմաստաւորելու միակ ճանապարհը՝ մեր նորահաս սերունդներու քրիստոնէական դաստիարակութիւնն է: Այսօր եւ ամէն Կիրակի Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճար աղօթքի ու ուխտի եկող հաւատացեալներս պարտք ենք մեր տուներէն ներս դառնալ ւ. խաչը քարոզող առաքեալներ, որովհետեւ եթէ ամուր չպահենք այս գիտակցութիւնը եւ թերանանք նորահաս սերունդներու դաստիարակութեան առաքելութեան մէջ, ապա մեր զաւակները հոգեւոր կեանքի



տեսանկիւնէն բոլորիկ պիտի մնան: Ս. Խաչով պիտի պարծենանք ու պահպանենք մեր ներքին միութիւնն ու զօրութիւնը, մանաւանդ այսօր ե՛ւ ի Հայաստան, ե՛ւ ի սփիւռս աշխարհի, որպէսզի ժամանակներու փոփոխութիւններն ու դժուարութիւնները, հայրենիքին սպառնացող վտանգները հեռու պահենք մեզմէ: Ինչքա՛ն խաչի խորհուրդով առաջնորդուինք եւ դառնանք անքակտելի, այնքա՛ն ամուր կը պահենք մեր տուները եւ ի մասնաւորի՝ Աստուծոյ մեծ պարգեւները՝ տրուած մեր ազգին, Հայրենիքն ու Ս. Էջմիածինը:

*Օգոստոս 20, 2021*

## ՄԲ. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, ... զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս» (Գաղատացիս, 3:24-29):

Պօղոս Առաքեալի նամակներէն քաղուած այս խօսքը կը վերաբերի մկրտութեան խորհուրդին: Քրիստոս Աստուածորդին մկրտուեցաւ Յորդանան գետի մէջ եւ իր մկրտութեամբ մեր առջեւ բացաւ ճանապարհն առ Աստուած, քանզի հետեւելով իր օրինակին՝ բոլորս ալ մկրտութեամբ կը դառնանք որդեգիր Աստուծոյ:

Քրիստոնէական մեր կոչումը կը ստանանք ս. Եկեղեցոյ աւագանէն մկրտութեամբ, որմէ անմիջապէս յետոյ սրբալոյս միւռոնի օծումով մեր էութեան մէջ կ'ընդունինք նաեւ ս. հոգւոյ շնորհները եւ կը դառնանք նոր, հոգեւոր վերածնունդով: Հետեւաբար ս. մկրտութեամբ ու սրբալոյս միւռոնի օծումով մեր մէջ կը բացուի Նոր կեանքի ճանապարհորդութիւնը, որը պարզ բառերով եթէ ուզենք բացատրել, ապա՝ այդ Քրիստոսի նմանակցութեամբ ապրուած կեանքն է: Իսկ Քրիստոսի նմանակցութեամբ ապրելու համար պարտ ենք գործադրել աւետարանական պատգամները, որոնք կը լուսաւորեն մեր հոգեւոր կեանքը:

Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, որ ամէն վայրկեան սայթաքումի վտանգին առջեւ կը գտնուինք: Եւ ինչքան մեր կեանքով Աւետարանը գործնական դարձնենք, ապա այնքան կը մօտենանք Աստուծոյ: Եւ ի՞նչ կը պատգամէ մեզի Քրիստոսի Աւետարանը. միայն կեանքն իմաստուն կերպով ապրելու խորհուրդներ:

Բացէ՛ք Աւետարանները եւ այնտեղէն քաղեցէ՛ք սիրոյ պատգամը, որուն լրումը կը գտնենք Քրիստոսի կեանքին մէջ:

«Պիտի սիրես քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտով ու հոգու զօրութեամբ: ...Պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս» (Ղուկաս 10:27):

Սիրոյ այս պատգամը օրուայ հացի ու ջրի պէս պէտք ունինք յատկապէս այս օրերուն ե՛ւ մեր հայրենական կեանքէն ներս, ե՛ւ մեր համայնական կեանքի մէջ, ե՛ւ ի մասնաւորի մեր ընտանիքներէն ներս: Քրիստոնէական սէրէն պարպուած ըլլալով՝ մենք մեզ կ'առաջնորդենք հոգեւոր կեանքի պարտութեան:

Բացէ՛ք Աւետարանները եւ այնտեղէն պիտի քաղենք ոգին ներողամտութեան: Այս ոգու բացակայութիւնը կ'օտարացնէ մեզ մէկզմիւսէն: Կարդացէ՛ք Անառակ Որդու առակը եւ այնտեղ պիտի հանդիպիք ներողամիտ ու գորովագութիւթ հօր կերպարին, որ զղջացող իր որդուն տուն վերադարձը ընդունեց գրկաբաց: Ձեզի կը թողունք մեկնաբանութիւնը եւ կը թելադրենք, որ բոլորս միմեանց հանդէպ ըլլանք ներողամիտ:

Բացէ՛ք Աւետարանները եւ այնտեղ պիտի տեսնէք Յիսուսի աղօթող ներկայութիւնը, որ մեզի կը պատգամէ. «Պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ եւ մի՛ ձանձրանալ» (Ղուկ. 18:1): Քրիստոս աղօթեց մշտապէս, որպէսզի ոչ միայն երկիւղած հետեւինք իր պատկերին, այլեւ՝ գործնապէս աղօթենք տիւ ու գիշեր:

Եւ այսպէս ողջ Աւետարանը մեզի կը հրամցնէ անթիւ դասեր, որոնք մեր մէջ կը մշակեն Քրիստոսի ներկայութեամբ ու Անոր նմանակցութեամբ ապրելու խորհուրդը:

Սիրելի հաւատաւոր ժողովուրդ, ճիշդ է, որ մեր ազգը եղած է առաջինը՝ քրիստոնէութիւնը ընդունելով

որպէս պետական կրօն, բայց ճշմարտութիւնն այն է, որ հետզհետէ հեռացած ենք ամբողջապէս քրիստոնէական հաւատքով ապրելու ճանապարհէն:

Ժամանակները կը թելադրեն, որ վերադառնանք մեր հաւատքի ակունքներուն եւ մեր մէջ վերապրեցնենք քրիստոնէական հաւատքը՝ կեանքի կոչելով անտարանական պատգամները: Բաւական չէ, որ յաշս ժողովուրդներու յայտարարենք մեր քրիստոնէական նկարագիրը կամ կոչումը: Քրիստոնէութիւնը մեր վրայ կը դնէ պարտաւորութիւններ: Եւ Պօղոս Առաքեալ իր օրին Գաղատացոց համայնքին ուղղելով իր խօսքը՝ նոյնին հրաւիրը կու տայ նաեւ մեզի. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, ... զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս»:

Մեր այսօրուայ պատգամով կ'ուզենք հրաւիր ուղղել նաեւ մեր ազգի բոլոր զաւակաց, որ նորոգէք ձեր մէջ քրիստոնէական հաւատքը: Մենք սրտազին պատգամը կը յղենք նաեւ այս թեմէն ներս ապրող բոլոր անոնց, ովքեր առ այսօր մկրտուած չեն եւ ոչ ալ ս. միութնով դրոշմուած. անպայման ու քաջօրէն մօտենան մեզ՝ ստանալու համար ս. մկրտութիւն եւ դրոշմ:

Այս պատգամով կ'ուզենք յայտնել բոլորիդ, որ ի մօտոյ պիտի կազմակերպենք յատուկ հանդիպումներ՝ բոլորին անխտիր եւ ի մասնաւորի դեռ չմկրտուածներուն բացատրելու ս. մկրտութեան ու դրոշմին իմաստը, որպէսզի այնուհետեւ քայլ առնենք մկրտութեան եւ մեր ազգի զաւակները լուսաւորենք մեր նախնեաց հաւատքով: Մկրտութեան խորհուրդին ու ս. Դրոշմի խորհուրդին ընկալումով մենք պիտի դառնանք զինուորագրեալ զաւակները մեր ս. Եկեղեցոյ եւ ուխտ պիտի կատարենք՝ միասնաբար զօրեղ դարձնել Քրիստոսի եկեղեցին ու Հայց. Առաքելական ս. Եկեղեցոյ առաքելութիւնը:

Այս է օրուան Աւետարանական դասը, հոգեւոր հացին խորհուրդը, որը հրաւեր կու տայ բոլորիս՝ մեզի տրուած կեանքը ենթարկելու ինքնաճանաչման, քննելու մեր անձերը, իջնելու մեր հոգու խորքը եւ վստահ ըլլալու, որ մեր էութեանը մէջ ներկայութիւն կը դարձնենք Աստուծոյ սէրը:

*Օգոստոս 20, 2021*

## «ԴՈՒՔ ՏՈՒՔ ՆՈՑԱ ՈՒՏԵԼ»

(Մարկոս 7:37)

Քրիստոսի շրթներով արտասանուած այս խօսքերը ուղղուած էին իր առաքեալներուն: Մարկոսի Աւետարանէն կը քաղենք հինգ հազարին կերակրումի պատմութիւնը: «Իրիկունը իր աշակերտները եկան եւ ըսին. «Հոս անապատ տեղ մըն է, եւ ժամանակը ուշացած է, արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի գիւղերը երթան ու իրենց կերակուր գնեն»: Յիսուս անոնց ըսաւ. «Հարկ չէ, որ ատոնք երթան, դուք տուէք անոնց, որ ուտեն»: Եւ նոյն պատմութեան մէջէն կը քաղենք երկու հիմնական ու կարեւոր դասեր:

Առաջին հերթին կը տեսնենք Տիրոջ գութը ժողովուրդին հանդէպ, եւ երկրորդ ամենակարեւորը այն է, որ Քրիստոս գրեթէ յանդիմանական ոճով մը կը յիշեցնէ իր առաքեալներուն՝ իրենց վստահուած պարտականութեան մասին:

Այս պատմութիւնը կ'արտացոլէ հրաշագործութիւնը Քրիստոսի կողմէ: Բայց խորքին մէջ խորհուրդը միայն հացի բազմացումին մէջ չենք տեսներ, այլեւ՝ Քրիստոսի խօսքերուն յաւերժականութեանը մէջ: Քրիստոս կը քարոզէր կեանքի ճշմարիտ ճանապարհը, որուն արդէն հաղորդակից էին աշակերտները եւ պարտ էին դառնալ բառին լման առումով առաքեալներ աշխարհի մարդկանց կեանքին մէջ:

«Դուք տուք նոցա ուտել»:

Միբելի հաւատացեալներ, մեր հրաւերն է ձեզի, որպէս ծնողներ առաւել չափով յագեցնէք ձեր զաւակաց քաղցն ու ծարաւը Աստուծոյ խօսքով:

Յիշեցեք, որ ձեզմե ամեն մեկուն տունը եկեղեցի մըն է, եւ այնտեղ դուք պիտի ձեր մէջ գտնէք կոչումը ձեր զաւակաց ներկայանանալու որպէս Աստուծոյ ներկայացուցիչը: Մեր ս. Եկեղեցոյ առաքելութիւնն է քարոզել Աստուծոյ խօսքը ձեզի հետ միասնաբար: Այլապէս կը թերանանք մեր սրբազան պարտականութեան մէջ:

Ժամանակն է, որ մեր մէջ արթննայ հաւատքի կեանքի կոչումն ու գիտակցութիւնը: Մեր քրիստոնէական հաւատքը անկորնչելի հոգեւոր հացն է, որ պիտի յագեցնէ մեր քաղցը:

**«Դուք տուք նոցա ուտել»:**

Այո, դուք ունիք ձեր մէջ ե՛ւ կոչումը, ե՛ւ գիտակցութիւնը: Մենք չենք ըսեր, թէ մեր մէջ մեռած է հաւատքը: Բայց հաստատապէս տկարացած է մեր մէջ հաւատքը: Ուրեմն, թող եռայ մեր մէջ հաւատքի գիտակցութիւնը, որպէսզի դառնանք ճշմարիտ առաքեալները Քրիստոսի:

*Օգոստոս 20, 2021*

## ՄԵՉ ԸՆՏՐՈՂԸ ԱՍՏՈՒԱԾ ԻՆՔ Է

«Ձի ոչ եթէ որ գանձն իւր ընծայեցուցանէ, նա ընտրեալ է, այլ՝ զոր Տէրն ընծայեցուցանէ»:

(Բ Կորնթացիս 10:48)

«Ձի գոյ յիս ճշմարտութիւն Քրիստոսի»:

(Բ Կորնթացիս 11:10)

Պօղոս Առաքեալի այս պատգամը չափազանց դիպուկ է հասկնալու համար այն, որ մեզ ընտրողը Աստուած ինք է: Եւ ինչու՞ այս է ընկալումը Առաքեալին մօտ, որովհետեւ Աստուած ինք կը կարդայ մեր սիրտն ու հոգին եւ ապա կը կոչէ մեզ, որպէսզի կատարենք մեզի վստահուած առաքելութիւնը: Այս պատգամը կը յիշեցնէ մեզ նաեւ Քրիստոսի խօսքը. «Ձի ոչ եթէ որ գանձն իւր ընծայեցուցանէ, նա ընտրեալ է, այլ՝ զոր Տէրն ընծայեցուցանէ» (2 Կորնթացիս 10:48):

Մեզ կանչողն ու բարձրացնողը Աստուած է, եւ երկու պարագաներն ալ հասկնալը չափազանց կարեւոր է:

Վերցնենք այս երկու պատգամները եւ փորձենք կապել մեր առօրեայ կեանքին: Եթէ ընծայումի ու նուիրումի զգացումը կ'ունենանք, ապա այդ չվերագրենք մեր «Ես»-ին, այլ ընդունինք որպէս աստուածային հրաւեր՝ պատարագելու մեր անձերը ս. Եկեղեցոյ: Եւ նոյնն է պարագան Քրիստոսի պատգամին. չփորձենք ի գուր մեր անձերուն վերագրումներ կատարել եւ մարդկանց վրայ պարտադրանք դնել, որ յարգեն մեզ: Թողնենք, որ ի պատասխան մեր խոնարհ ծառայութեան Աստուած ինք բարձրացնէ մեզ:



Նայեցէ՛ք այսօր կեանքին, եւ պիտի տեսնէք, որ մարդիկ հեռացած են Աւետարանի ոգիէն, որն ուրիշ քան չէ, եթէ ոչ «Ես»-ին տիրապետութիւնը: Ահաւասիկ այս նոյն պատճառով այլ անհատ մարդիկ իրօք կը ձախողին, որովհետեւ իրենց յոյսը կը դնեն մարդկանց վրայ եւ ոչ թէ Աստուծոյ, որ Ամենակարողն ու Ամենատեսն է:

Միրելի՛նէ՛ք, Աւետարանէն ճառագայթող պատգամները անընդհատ պարտ ենք կարդալ եւ ըմբռնել անոնց խորքը: Անոնցմէ իւրաքանչիւրը կը մշակէ մեր հոգին, որպէսզի դառնանք բառին լման առումով քրիստոնէայ: Այլ խօսքով՝ մեր մէջ ապրեցնենք Աւետարանի ճշմարտութիւնը: Եւ ո՞րն է նաեւ Աւետարանի ճշմարտութիւնը, եթէ ոչ մեր ներքին էութեանը մէջ ճշմարտութիւնը:

Մենք պարտ ենք նորոգել մեր հաւատքի կեանքը: Պարտ ենք վերյիշել Քրիստոսի աւագանէն մկրտուած ըլլալու պարագան եւ անոր հետ մեզի հասանելի պատգամները կեանքի կոչել:

Մեր հովուական այցով կ'ուզենք ձեզի հաղորդել մեր սէրն ու օրհնութիւնը եւ միաժամանակ մեր երախտագիտութիւնը, որ հակառակ անցնող արդէն աւելի քան մէկ տարուայ համաճարակի ժամանակահատուածի ընթացքին՝ դուք մնացիք հաստատ ձեր հաւատքի մէջ, եւ այսօր վերադարձած էք ձեր աղօթքի տունը՝ շարունակելու համար եկեղեցւոյ առաքելութիւնը, որը կը միտի տարածել Աստուծոյ խօսքը եւ հաւատացելոց կեանքը ի Քրիստոս մէկտեղելով՝ վերածելու եկեղեցին: Ահաւասիկ այս պահուն է, որ բոլորս ալ պիտի զգանք, որ մեզ հրաւիրողը Աստուած ինք է, որ կը կանչէ եւ կը վստահի իր սուրբ գործը: Պատասխանը կը մնայ մեզի, որ խոնարհումով ընդունինք աստուածային կոչումը եւ Քրիստոսի Աւետարանը դարձնենք ուղեգիծը մեր կեանքին:

## ՅԱԿԻՏԵՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

«Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն»:  
(Մատթ. 24:36)

«Այլ զբարիս գործել մի՛ ձանձրացուք, ... Մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեւեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատող»:

(Գաղատացիս 6:9-10)

Օրուայ Աւետարանական պատգամները իրապէս կը խօսին ե՛ւ Աստուծոյ ճշմարտութեանը մասին, ե՛ւ քրիստոնէական հաւատքի ժառանգի մասին:

Ճշմարիտ է Աստուած, եւ իր խօսքը իր մէջ կը կրէ յաւիտենական ճշմարտութիւն: Եւ ինչքա՛ն պատմութիւնը կը սերտենք, այնքան եւս յստակ կը դառնայ բոլորիս համար, որ ժամանակներու հոլովոյթին մէջ Աստուծոյ ճշմարտութիւնը միշտ մնաց հաստատ: Գուցէ ժամանակ առ ժամանակ մարդիկ շփոթուեցան, բայց միշտ ալ դէպի Աստուած եւ Աստուծոյ մէջ գտան գերագոյն ճշմարտութիւնը: Ահա նաեւ այս իսկ պատճառով ալ Աստուծոյ խօսքը իր մէջ ամփոփած Աստուածաշունչը մեզի կը ներկայանայ որպէս կեանքի գիրքը:

Օրուայ Աւետարանական երկրորդ դասը կը քաղենք Պօղոս Առաքեալի՝ Գաղատացոց ուղղուած նամակէն. «Այլ զբարիս գործել մի՛ ձանձրացուք...»: Խրատական մըն է՝ ուղղուած ողջ մարդկութեան բոլոր ժամանակներուն:

Բարիք գործելով գործնականօրէն մեր հաւատքը կեանքի կոչած կ'ըլլանք: Բարեգործութիւնը պէտք է սակայն ըլլայ մնայուն տրամադրութիւն մեր մէջ եւ երբէք չպէտք է դադարի մեր մէջ որպէս ձանձրոյթի ար-

տայայտութիւն: Եւ այս գեղեցիկ երեւոյթը պէտք է արտայայտուի ե՛ւ մեր անձնական, ե՛ւ մեր հաւաքական կեանքի մէջ:

Քրիստոս Աստուածորդին բարութեան սերմեր նետեց մարդկութեան սրտերուն մէջ, որպէսզի մեր հոգեւոր պատկերով մեր մէջ կրենք Աստուծոյ սէրը: Արդարեւ, իր բոլոր արարքները, արտասանած պատգամներն ու հրաշքները անտարակոյս բարութիւն կ'արտացոլեն եւ փաստօրէն հրաւեր են նաեւ ուղղուած մեզի, որպէսզի կեանքն ապրինք վարդապետին նմանակցութեամբ:

Օրուայ Աւետարանական երկու պատգամներուն հացի ու ջրի պէս կարօտ է մարդկութիւնը: Բաւական է, որ բանանք մեր հոգու դռները՝ տեսնելու համար Աստուծոյ ճշմարտութիւնը եւ աղօթքով ընդունելու Քրիստոսի պատգամները, ապրելու համար իմաստաւորեալ կեանք մը: Ներկայ աշխարհը նման է ալեկոծեալ ծովի մը, եւ ժողովուրդը տարուբերուող նաւին վրայ շփոթի է մատնուած: Եւ ինչպէս առաքեալները վարդապետին մօտեցան երկիւղած եւ ստացան արդար պատասխանը՝ «Միթէ կը վախնա՞ք, արդեօք հաւատք չունի՞ք», ապա մենք եւս պարտ ենք սթափուիլ եւ մեր կեանքին նաւը ուղղել դէպի Աստուած եւ Քրիստոսի ուղեգծած կեանքի ճանապարհը: Նոյն վիճակի մէջ է նաեւ մեր հայրենական կեանքը, միայն այն պատճառին համար, որ հաւատքը իր համապատասխան տարողութեամբ չի գործեր: Հետեւաբար, քանի որ մարդը կատարելատիպն է Աստուծոյ ստեղծագործութեան, ուրեմն մեր մէջ կայ նաեւ հոգեւոր ուժն ու իմաստութիւնը՝ կատարելու Աստուծոյ կամքը:

## ԵՐԵՔ ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի հովանիին տակ այս երեք խաչքարերը նուիրական այս աղօթավայրին մէջ մեր հաւատքի վկայութիւնը կը խորհրդանշեն: Իւրաքանչիւրը իր հայկականութեամբ մեզ կը կապէ մեր անցեալ պատմութեան ու գալիքին յոյսը կը ճառագայթէ: Արդարեւ, իւրաքանչիւր խաչքար իր մէջ կը խտացնէ նաեւ Մայր Հայաստանն ու Ս. Էջմիածինը, մեր պատմութիւնն ու հոգեւոր – բարոյական արժեքներու տեսիլքը:

Մեր առջեւ իրենց սլացիկ տեսքով ու ներկայութեամբ կանգնած երեք խաչքարերը ունին իրենց նպատակը: Առաջինը ձօնուած է Սուրիկ Սողոմոնեանի յիշատակին, այն բարի անձին, որուն բաժանումը այս կեանքէն ու ընտանիքէն մեծ ցաւ ու տառապանք պատճառեց: Իրեն ձօնուած խաչքարը հրաւեր է աղօթքի, որպէսզի բոլորս մեր հոգիներու խորքին արթուն պահենք իր յուշերը:

Երկրորդ խաչքարը ձօնուած է Պալեան եւ Աղա-Մարգիսեան ընտանիքներուն: Բոլորիս ծանօթ է, թէ Կ. Պոլսոյ մէջ ինչպիսի հոգեւոր ժառանգ են թողած Պալեան գերդաստանի անդամները: Անոնց արուեստը ոչ միայն մեր ազգին պատիւ կը բերէ, այլեւ՝ ժողովուրդներու արուեստի պատմութեան մէջ է արձանագրուած: Իսկ Աղա-Մարգիսեան գերդաստանը իր բոլոր անդամներով օրհնութիւն են մեր սուրբ եկեղեցւոյ համար:

Վերջապէս երրորդ խաչքարը ձօնուած է Արցախեան հերոսամարտի քաջարի զինուորներու յիշատակին, այն երիտասարդներուն, ովքեր իրենց կեանքը գոհաբերեցին յանուն հայրենիքի եւ յանուն հաւատքի:

Անոնք մերժեցին տկարութիւնը, եւ իրենց արեան կանչը լսելի կը դառնայ մեզի այս խաչքարին ընդմէջէն:

Մեր խորին երախտիքը առաջին հերթին Սողոմոնեան, Պալեան ու Աղա-Սարգիսեան ընտանիքներուն, որոնց բարերարութեամբ կարելի դարձաւ ստեղծել այս հոյակերպ խաչքարերու սիմֆոնիան: Թող Աստուած ի կատար ածէ ձեր բոլոր երազանքները, որպէսզի հաւատքի սպառազինութեամբ դուք ձեր կեանքը շարունակէք ընծայաբերել ազգին ու եկեղեցւոյն:

Մեր ուրախութիւնն է այստեղ ողջունել ներկայութիւնը մեր սրբազան եղբայրներուն, որոնք այս մասնաւոր առիթով յարգեցին յիշատակը երեք ընտանիքներու կեանքէն բաժնուած սիրելիներուն ու Արցախեան նահատակներուն:

Թող կենարար խաչին լոյսովը առաջնորդէ ձեզ Աստուած, որպէսզի դուք ձեր կեանքով դառնաք օրհնութիւնն ու մխիթարութիւնը մեր ազգի. ամէն:

*Օգոստոս 30, 2021*

## ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ ՄԵՐ ՄԲ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՒ ԱԶԳԻ ԶԱՒԱԿԱՑ

ԲԱՆԱՆՔ ՄԵՐ ՍԻՐՏԸ ՈՒ ԶՕՐԱԿՑԻՆՔ  
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Սիրելի եւ հաւատաւոր ժողովուրդ,

Մեր պատմութեան մէջ կ'արձանագրուին այնպիսի հանգրուաններ, երբ պարտ ենք մեր հաւատքի ամբողջ տարողութեամբ ձեռք երկարելու մեր եղբայրներուն ու քոյրերուն:

Հիմա պահն է, որ քանակ մեր սիրտը, եւ մեր քրիստոնէական սիրովը առաջնորդուած՝ զօրակցինք Լիբանանահայութեան: Լիբանանահայութիւնը կ'ապրի իր ամենադժուարին ժամանակները, եւ մեր բոլորի սեպուհ պարտքը պիտի ըլլայ միասնական ուժերով մեր կարելին ի գործ դնելու՝ շօշափելի աջակցութիւն ցուցաբերելու համար Լիբանանահայութեան:

Որպէս հոգեւոր Առաջնորդը Արեւմտեան թեմի հայութեան, մենք անձնապէս, մեր հոգեւոր եղբայրներով կը մասնակցինք ու կոչ կ'ուղղենք համայն ժողովուրդը՝ անվերապահ մասնակցութեամբ կատարելու հոգու պարտքը: Այսօր Լիբանանահայութիւնը գրկուած է կենսական բոլոր պայմաններէն: Մեր մասնակցութեամբ ոչինչ պիտի նուազի մեր ունեցածէն: Փոխարէնը մեր հոգիները պիտի լեցուին լիբանանահայ մեր եղբայրներու ու քոյրերու աղօթքով:

Արդ, անգամ մը եւս կոչ կը յղենք մեր թեմի բոլոր եկեղեցիներուն, գլխաւորութեամբ հոգեւոր հովիւներուն ու Ծխական խորհուրդներուն, պատկան մար-

միններուն եւ անխտիր բոլորին, որ միասնաբար կատարենք մեր հոգու պարտքը:

Թող Ամենակարողն Աստուած օրհնէ Լիբանանահայութիւնը եւ անսասան պահէ մեր ս. Եկեղեցոյ ու ազգի զաւակունք:

*Օգոստոս 20, 2021*

## ՊԱՏԳԱՍ ՍԲ. ՆԵՐՍԷՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

«Զի ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին»:

(Մատթ. 6:21)

Հիւսիսային Ամերիկայի մէջ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ գանձը՝ Ս. Ներսէս Ընծայարանն է, եւ մեր սիրտերը իրենց սլաքը պիտի ուղղեն այնտեղ, ուր նորահաս սերունդները իրենց հոգեւոր կոչումը եւ քահանայական նախանձնախնդիր պատրաստութեան շրջանը պիտի ունենան:

Այսօր պահն է, որ այս հեռուոր ասիերուն Ս. Էջմիածնի տեսիլքը ունենայ իր նոր ծննդավայրը մեր երիտասարդներու էութեանը մինչեւ խորքերը: Այս առաքելութիւնը պիտի իրականացնենք անվերապահ նուիրումով, որպէսզի մեր ձեռքերով կերտենք հոգեւոր վերածնունդը՝ Ս. Ներսէս Ընծայարանը դարձնելով հաւատքի դարբնոցը: Հետեւաբար, մնանք աղօթքի մէջ եւ փառք տանք Աստուծոյ, որ տասնամեակներ առաջ տեսլապաշտ մեծ Առաջնորդը՝ յանձին հոգելոյս Տիրան Արքեպիսկոպոսի, իր մէջ գտաւ ճանապարհը՝ հորիզոնէն անդին տեսնելով Հայց. Առաքելական եկեղեցւոյ նոր արշալոյսը:

Ս. Ներսէս Ընծայարանը պիտի ծաղկեցնենք մեր բոլորի հաւաքական ծառայութեամբ: Պիտի հաւատանք անոր առաքելութեան, եւ մեր շուրջ գտնուող երիտասարդները առաջնորդենք հաւատքի այն դարբնոցը, ուր պիտի պատրաստենք հոգեւոր սպասաւորներու փառանգը: Ս. Ներսէս Ընծայարանը Ս. Էջմիածնի իջման Ս. Սեղանի լոյսովն է հաստատուած: Մեր գանձն է Ս.



Ներսէս Ընծայարանը եւ այնտեղ պիտի տեսնենք մեր սիրտը:

Աստուած անասան թող պահէ Ս. Ներսէս Ընծայարանը, որպէսզի սերունդները նուիրական նոյն այս հաստատութեան մէջ սորվին ապրիլ Քրիստոսի Աւետարանով եւ Ս. Աւետարանէն ճառագայթող լոյսովը ու հաւատքովը մեր նախնեաց եւ լուսաւորեն մեր հաւատացելոց կեանքը Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ:

*Մեպտեմբեր 1, 2021*

## ՄԵՐ ՀԱԲԱՏՔՈՎ ՊԱՐՏ ԵՆՔ ԼԵՌՆԵՐԸ ՇԱՐԺԵԼ

Հայրենիքը՝ Սրբութիւն Սրբոցն է հայուն: Հայրենիքի սերն ու կարօտը ոգին է մեր առօրեային: Հայուն հոգեւոր ու ազգային կեանքը հայրենական կանչին ընդառաջ խոնարհումով միայն պիտի ճախրէ դէպի յաւերժութիւն:

Ժամանակները լեցուն են փորձութիւններով, բայց մեր հաւատքով պարտ ենք լեռները շարժել եւ մեր ձեռքերով կերտել նորը, որուն տեսիլքով երիտասարդ սերունդներ անվախօրէն ու վեհանձն քաջութեամբ պատարագեցին իրենց կեանքը:

Անկախութեան գոյգ տօնակատարութիւնները արթնութեամբ ու քաջութեամբ, իմաստութեամբ ու հաւատքով ապրելու մարտահրաւեր են այսօր բոլորիս համար՝ պահելով հանդերձ մեր հաւատարմութիւնը այս երկրի հանդէպ որպէս պատուաւոր քաղաքացիներ:

Այսօր, ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի ապրող մեր ժողովուրդի զաւակունք պարտ ենք քրիստոնէական սիրոյ մէջ վերամկրտելու մեր կեանքը եւ մեր հոգին զրահաւորելու հայրենական գիտակցութեամբ:

Ի՞նչ է հայուն կեանքը: Աստուածատուր պարզէն է մեր կեանքը, զորս պարտ ենք ընծայաբերել մեր նահատակ զինուորներու արեամբ նուիրականացած հայրենիքին, կեանքը նուիրաբերել հայրենիքին, հայրենական ժառանգը ամրացնելով հոգեւորապէս, տնտեսապէս, քաղաքական առումով, կրթութեան համակարգով եւ մանաւանդ հզօր բանակով:

Ինչպէս Քրիստոս կը պատգամէ Քանքարներու առակով, մենք պարտ ենք մեզի տրուածը վերադարձընելու «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր» փոխարժէքով: Այլապէս, անտարբերութեան մէջ ենք եւ անպիտան ծառաներ:

Միրելի հայրենակիցներ, այսօրուայ տօնախմբութիւնը կ'իմաստաւորենք, եթէ երբէք մեր տուները վերադառնանք եւ մեր զաւակաց հոգին ու միտքը կապենք յաւերժական Մայր Հայաստանին ու մեր հաւատքի դարբնոց Ս. Էջմիածնին: Այլապէս, պիտի նմանուինք Քրիստոսի Աւետարանով մեզի տրուած Անատակ որդու առակին մէջ յիշուած՝ այս անգամ մէկի փոխարէն իննսունինը տունին ճամբան կորսնցուցած զաւակներուն: Այնպէս ապրինք այս երեկոյի տօնախմբութիւնը, որ այս հանդիսութեան պահը դարձընենք Թափօր լեռը՝ պայծառակերպութիւն, դառնալու համար նոր հայր՝ ամենէն թանկագին ժառանգը մեր զալիք սերունդներուն:

Կեցցէ Հայաստանը, եւ թող մեր հոգիներուն մէջ բռնկի ոգին Ազատատենչ Արցախի: Ամէն:

*Մեպտեմբեր, 2021*

## ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆ Է

Աղօթքով ու հաւատքով կը խոնարհինք Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած մեր նախնեաց պատարագեալ ու նուիրականացած սրբութեանց առաջ: Մա այն պահն է, որ աւելի քան բոլոր ժամանակները առաջնորդուինք Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ եւ գալիք սերունդներուն փոխանցենք Մայր Հայաստանը: Գերագոյն հրամայական է, որ միմեանց սիրենք ու յարգենք, ու մէկգմբիւսին մէջ փնտոնենք ու տեսնենք Աստուծոյ պատկերը եւ մեր հոգիներուն մէջ խորացնենք տեսիլքը մեր հայրենիքին: Արդ, մեր կոչն ու հրաւերն է, որ միասնաբար աղօթենք առ Աստուած, ու հաւատքով շաղախենք մեր հոգեւոր ու ազգային կեանքը: Ըլլանք արթուն ու քրիստոնաւալայել մեր կեանքով:

Հողն այն, որուն վրայէն կը քալենք, հող չէ միայն, այլ՝ տեսլապաշտ մեր նախնեաց ոսկորներուն փոշիացումն է, որուն մէջէն կ'առնենք պատգամ զգաստութեան եւ հոգեւորոգութեան:

Քաջութիւն ունենանք մեր ժողովուրդի հոգիին մէջ կարդալու Տիրոջ պատգամը՝ որպէս սնունդ մեր հոգեւոր կեանքի. «Մի երկնջիր, միայն հաւատա, եւ կեցցե՛ք» (Դուկաս 8:50):

### ԱՂՕԹՔ

*Օրհնէ՛, Տէր, եւ մեր բոլորին սրտերուն մէջ սերմանէ սրբութեան եւ զգօնութեան սէրը՝ ճանչնալու համար իմաստութիւնը եւ խրատը եւ կատարելու համար մեր պարտաւորութիւնը՝ ի պահպանութիւն բոլոր օրէնքներուն, որոնք մեր ազգի օգուտին կը հային:*

*Օրհնէ՛, Տէր, մէր հայրենիքը, Հայաստան աշխարհը, որպէսզի՝ ինչպէս որ առաջին անգամ հաստատեցիր զայն որպէս դրախտավայր, եւ զոր ապա անօրէններու ձեռքերը բազում դարեր ւաւերակի վերածեցին, վերստին ծաղկի ու պայծառանայ՝ բոլոր երկնաւոր եւ երկրաւոր բարիքները վայելելու համար:*

*Օրհնէ՛, Տէր, ամէն բարի բան, որ կայ անոր մէջ, ինչպէս նաեւ անոր կոչումը ինքնին՝ Հայաստան, «որպէսզի ամենքը մէկ ըլլան» (Յովհ. 17:21):*

## ՊԱՏԳԱՄ՝ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Կ'ապրինք փորձություններով լեցուն աշխարհի մէջ, եւ ինչքան հոգեւին մխիթարուած պիտի զգանք, որովհետեւ բոլորս ի մի բերող զօրութիւնը մեր քրիստոնէական հաւատքն ու ազգային ոգին է, որով ոչ միայն կը մերժենք տկարութիւնը, այլեւ՝ առաւել ամրացած մեր յանձնառութեանց մէջ, մեր հայեացքը կը շարունակենք ուղղել դէպի հայրենիք ու Արցախ հեռաւոր այս ամերէն, պահելով հանդերձ մեր հաւատարմութիւնը այս երկրի նկատմամբ, որպէս օրինակելի քաղաքացիներ:

Ո՞վ է մարդը առանց ինքնութեան, եւ աւելին՝ դժուար է պատկերացնել հայուն կերպարը առանց ապրող յոյսին դէպի նորանոր արշալոյսները: Մեր նորանկախացեալ Մայր երկրի տօնը եւ անոր զուգահեռ Արցախի Հանրապետութեան 30-ամեակը հրաւերն են արթնութեան, որպէսզի մեր նահատակներու արեան կանչը երբէք չխեղդուի մեր էութեանը խորքին: Այսօր, աւելի քան պատմութեան բոլոր ժամանակները, պետք ունինք միաբանուելու քրիստոնէական սիրոյ առաջնորդութեամբ, որովհետեւ յաղթանակը ապահովագրելու միակ զէնքն է այն առհասարակ ի հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

Մեր կեանքի մաս ու բաժին դարձող մեր աղօթահաւաքներն ու հանդիսութիւնները խոնարհումի արդար զգացումը արտայայտող առիթներ են մեր բոլոր ժամանակներու նահատակներու յիշատակին առջեւ:

Ինչքան յուսադրող ու քաջալերական առաքելութիւններ կեանքի կը կոչուին մեր ազգային կեանքին մէջ, որոնք պարտ ենք հազարապատկել: Իրաքանչիւրս

Աստուածատուր մեր կեանքը պիտի ապրինք այն գիտակցութեամբ, որ ե՛ւ մեր հոգիներուն մէջ, ե՛ւ գալիք սերունդներուն մէջ յաւերժական հայրենիքն ու Ս. Էջմիածինը վեր յառնին: Արտաքին աշխարհէն մեզի հասնող բոլոր վտանգները պատճառ պիտի դարձնենք, որ միմեանց աւելի սիրենք ու յարգենք, ու հայրենական պատկերը լուսաւորենք մեր էութեան մէջ:

Տօնական այս համախումբ ներկայութիւնը վերածենք աղբիւրը յարուցեալ կեանքին: Պահպանենք մեր ինքնութիւնը անձնուէր ծառայութեամբ եւ նոյն ոգին ներշնչենք մէկզմիւսին ու նորահաս սերունդներուն որպէս տեսիլքը, նպատակն ու առաքելութիւնը իրենց կեանքին:

Կեցցէ Հայաստանը, եւ թող ազատատենչ Արցախի ոգին շունչ հաղորդէ բոլորիս. ամէն:

*Սեպտեմբեր, 2021*

## ԶՕՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Փորձեցէ՛ք զանձինս ձեր, եթէ կայցեք ի նոյն հաւատս. քննեցէ՛ք զանձինս, եթէ ո՛չ գիտէք զանձինս, զի Քրիստոս Յիսուս ի ձեզ է, բայց եթէ անպիտան իցեք... Չի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեան, այլ վերակացու եմք ճշմարտութեանն»: (Բ Կորնթ. 13: 5-8)

Առաքեալի այս խօսքերը ուղղուած են բոլորիս անխտիր, որպէսզի աղօթքի մէջ մնանք անդադար եւ անյոզնաբեկ եւ քննենք մեր անձերը՝ մինչեւ խորքը մեր հոգիներուն, եւ կատարենք ինքնաքննութիւն՝ տեսնելու համար, թէ ինչքանո՞վ հաստատ ենք քրիստոնէական մեր հաւատքին մէջ. այն հաւատքը, որ ի վերուստ մեզի տրուած պարգեւն է լիովին հասկնալու համար կեանքին իմաստն ու նպատակը, եւ աւելին՝ մեր մէջ տեսնելու Քրիստոսի ներկայութիւնը, որպէսզի Տիրոջ առաջնորդութեամբ վերակացու ըլլանք ճշմարտութեան:

«Փորձեցէ՛ք ձեր անձերը, քննելու համար, եթէ հաւատքին մէջ ենք...» ու դառնանք պաշտպանը ճշմարտութեան:

Այս հարցումը, սիրելի բարեպաշտ հայորդիք, ամէն օր մենք մեզ պիտի ուղղենք՝ այն դարձնելով մեր աղօթքը առաւօտեան, երբ արշալոյսին հետ կը բանանք մեր աչքերը, բայց մանաւանդ լայն բանանք մեր հոգիին դռները, որպէսզի մեր օրը եւ կեանքը լեցնենք աստուածային լոյսով ու իմաստութեամբ եւ նախնեաց հաւատքի տեսիլքով:

Հայ քրիստոնէային համար այս պատգամը հոգեւոր հացն է ամէնօրեայ: Դեռ օրեր առաջ տօնախմբեցինք



Հայաստանի Անկախութեան 30-ամեակը, տարբեր իր նկարագրով անցեալ տօնախմբութիւններէն, որովհետեւ դեռ շատ թարմ է բոլորիս սրտերուն մէջ տառապանքը՝ ի տես մեր երկրի կրած տառապանքին ու կորուստին:

Այնուհանդերձ, պարտ ենք առաւել քան բոլոր ժամանակները, մեր ձեռքերով կերտելու ու ամրացնելու մեր երկիրը, այն դարձնելու համար խոստումը նոր կեանքին, որպէս թանկագին ընծան նահատակ մեր զինուորներուն, որոնք ի սեր հայրենիքի ու Արցախի իրենց կեանքը պատարագեցին: Կ'ապրինք շատ դժուարին ժամանակներու մէջ: Այլեկո՞ծ է աշխարհը եւ առաւելեալ չափսերով վտանգի մէջ է մեր հայրենիքը, ի մասնաւորի նկատի առնելով աշխարհաքաղաքական դիրքը մեր երկրի: Հետեւաբար, ինչքան վտանգուած է հայրենիքը, ապա այնքա՛ն առաւելեալ չափսերով սերը պիտի իշխէ մեր վրայ ու պարտ ենք միաւորուել:

Այսօր մեր նահատակներու հոգիները կը խօսին մեզի բոլորիս անխտիր Առաքեալի նոյն պատգամով. «Փորձելու համար մեր անձերը, տեսնելու համար, եթէ հաւատքը արթուն է մեր մէջ եւ հաստատուն եւ կամ կը մնանք վերակացուն ճշմարտութեան»:

Մարդուն կեանքը առհասարակ դէմ առ դէմ է միշտ փորձութիւններու, բայց տկարութիւնը մերժելու գրաւականը հաւատքն է: Առաւել եւս մեր ազգի կեանքը ի մասնաւորի վերջին հարիւր եւ անլի տարիներու ընթացքին ինքզինք գտաւ ահռելի փորձութեանց առջեւ: Մեր կեանքը ի Հայաստան եւ Սփիւռս աշխարհի պիտի պահենք արթուն՝ հաւատքի զօրութեամբ եւ պիտի շարունակենք ըլլալ վերակացուն ճշմարտութեան: Պարտ ենք

լինել խոհուն եւ հեռատես՝ դիմագրաւելու համար ժամանակի բոլոր փորձութիւնները հաւատքի զօրութեամբ եւ արթուն պահապանները դառնալու ճշմարտութեան:

Այսօր, մեր Մբ. պատարագը կ'ընծայենք մեր նահատակ զինուորներու պայծառ յիշատակին, աղօթքով առ Աստուած, որ անոնց վշտաբեկ սրտով ծնողները մնան քաջ ու յանձնառու ի կատար ածելու համար իրենց զուակաց տեսիլքը՝ հայրենի հողին պահպանումը: Մեր Նահատակ զինուորները իրենց կեանքը զոհաբերեցին: Մեզի կը մնայ սիրել հայրենիքը եւ այն ցոյց տալ գործնապէս:

Միրելիներ ի Քրիստոս, մեր նահատակ քաջ զինուորներու յիշատակը յաւերժացնելու միակ ճանապարհը հաւատքով ապրուած կեանքն է՝ միմեանց նկատմամբ համակ սիրով լեցուած: Ժամանակի հրամայականն է, որ հոգու աչքերով տեսնենք հզօր Հայաստանը եւ այն կեանքի կոչենք մեր անկոտրում հաւատքով: Թող անասան մնայ հայրենիքը, որուն երկնքի վրայ կը սաւառնին մեր անմահ հերոսներու հոգիները:

Հայրենիքը Սրբութիւն Սրբոցն է հայուն: Հայրենիքը սերն ու կարօտի ոգին է մեր առօրեային: Հայուն հոգեւոր ու ազգային կեանքը հայրենական կանչին ընդառաջ խոնարհումով միայն պիտի ճախրէ դէպի յաւերժութիւն: Այս էր տեսիլքը Վարդանանց, եւ այս տեսիլքով Սարդարապատի հերոսները ս. Հաղորդութիւն ստացան Հայոց քրիստոնէական հաւատքի օրրան Ս. Էջմիածնի Մայր խորանէն եւ ծնունդ տուին բոլոր ժամանակներու Հայաստանին: Թող նոյն քրիստոնէական հաւատքը բոցավառուի մեր հոգիներուն մէջ, որպէսզի արթուն մնանք ի սէր ճշմարտութեան, որուն պատկերը կը տեսնենք մեր հերոս նահատակներուն արեամբ նուիրականացած հայրենական հողին մէջ:

Թող բոլորիս կեանքը առաջնորդուի Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ: Կեանքն ապրինք հայրենական սիրով ու կարօտով, եւ թող բոլորիս հոգին, միտքն ու սիրտը դարձնենք լոյսի կանթեղը Ս. Էջմիածնի, որպէս ժայռը, որուն վրայ հաստատուած է՝ ւ կեանքը, է՝ ւ հայրենիքը, է՝ ւ մեր ազգը կը մնան անսասան ու անխախտ:

Թող անսասան մնայ Հայրենիքը, որուն երկինքի վրայ կը սաւառնին մեր անմահ հերոսներու հոգիները:

Մեր կոչն է ու հրաւերը, որ ս. Պատարագի աւարտին սրտագինս աղօթենք մեր նահատակ զինուորներու հոգւոց խաղաղութեանը համար եւ այնուհետեւ թափորով առաջնորդուինք դէպի եկեղեցւոյ հարաւային գմբէթի հովանիին տակ՝ այնտեղ կատարելու համար նոր խաչքարի մը օծումը, որպէս խորհրդանիշը վերածնեալ մեր երկրին ու ժողովուրդին:

*Մեպտեմբեր 22, 2021*

## ԿՈՉ ԹԵՄԻՍ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ ՁԵՌՔ ԵՐԿԱՐԻՐ ԵՂԲՕՐԴ

Սիրելի եղբայրներ ի Քրիստոս,

Հայ հոգեւորականը իր քահանայական կոչումով կանչուած է սիրելու իր հոգեւոր եղբայրը հոգու ամբողջ զօրութեամբ: Բոլորս ալ քաջատեղեակ ենք, որ մեր սուրբ եկեղեցւոյ ծառայութեան դաշտին մէջ ունինք հոգեւոր եղբայրներ, որոնք Հայաստանի մէջ կը գտնուին ծայրահեղ աղքատութեան մէջ: Բոլորիս պարտքն է՝ բոլորանուէր ծառայել եւ ի մասնաւորի թոյլ չտալ, որ այսօր ի Հայաստան ծառայութեան մէջ գտնուող մեր եղբայրները իրենց օրուան հացը ձեռք բերելու համար պարտաւորուած ըլլան հոգեւոր ծառայութեան համընթաց դաշտերուն մէջ աշխատանք փնտռելու: Այս ճշմարտութեան իրազէկ էք դուք եւ միասնաբար ու զոհողութեամբ պիտի լուծենք այս հիմնախնդիրը:

Արդ, սկսեալ մեզմէ, որպէս հոգեւոր Առաջնորդը Արեւմտեան թեմի, մեր ամսական նիւթական պարտականութիւնը պիտի կատարենք քսանէն-երեսուն հոգեւոր սպասաւորներու նկատմամբ՝ իւրաքանչիւրին համար ապահովելով ամսական երեք հարիւր տոլարի նուէրով, որպէսզի անոնք կարող դառնան հոգալու իրենց երիտասարդ ընտանիքներու ծախսերը: Մեզի հետ միասին մի քանի աշխարհականներ յանձնառու են եղած Առաջնորդարան յուսած նուէրները եռապատկելու: Եւ այս առաքելութիւնը պիտի սահմանափակենք չորս տարիներու վրայ՝ յուսալով, որ մօտիկ ապագային մեր երկրի տնտեսական իրավիճակը կը բարելաւուի:

Անցնող Կիրակի, Մեպտեմբերի 26-ին, Մայր Տաճարին մէջ սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Արժ.

Տ. Մանուկ Աւ. Քինյ. Մարգարեանը, եւ խաչի խորհուրդին ու հայրենական կեանքին մասին խօսելով՝ ըսաւ. «Հայրենիքը մեր գոյութեան խաչն է»: Հետեւաբար, այս գիտակցութեամբ կը դիմենք ձեզ եւ կը սպասենք, որ բոլորով մեր սերը գործնապէս ցոյց տանք մեր եղբայրներուն նկատմամբ: Այս նուիրական քայլը մենք պիտի իրագործենք: Այլապէս, անընդունելի է, որ մեր հոգեւոր եղբայրները զրկուին իրենց առօրեայ նուազագոյն կարիքներէն: Մի րտ տանք մեզ համար այնքա՛ն սիրելի եւ յարգելի եղբայրներուն գործնական քայլերով, որպէսզի զօրացնենք մեր ս. Եկեղեցին եւ ամրապնդենք մեր առաքելութիւնը Աստուծոյ փառքին համար:

*Հոկտեմբերի 5, 2021*

**ՄՐՏԻ ԽՕՍՔ**  
**ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ**  
**ՏԷՐ ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱՅԻՆ**

Քահանայութիւնը աստուածային կոչում է, որուն մէջ կը վերածնի մարդը, որուն ամբողջ ընթացքը կը պայմանաւորուի Աստուծոյ ժողովուրդին ծառայութեամբ: Մեր սուրբ խորաններուն վրայ անթիւ հոգեւոր սպասաւորները քաջօրէն պատասխանելով Աստուծոյ կանչին՝ իրենց կեանքը ընծայաբերած են Աստուծոյ խօսքին ու Աւետարանի լոյս պատգամներուն քարոզչութեանը կեանքով ու գործով: Եւ սրբալոյս միտոնով օծուած քահանան գործակից է Աստուծոյ, եւ արդարեւ, առաքեալը Քրիստոսի ու դէսպանը ս. Եկեղեցւոյ:

Այսօր, ս. Պատարագի խորհուրդին մէջ կը մկրտենք մեր հոգեւոր կեանքը եւ մեր խոնարհումը կը մատուցենք Աստուծոյ սպասաւոր եւ մեր ս. Եկեղեցւոյ անդաստանին մէջ իր կեանքը պատարագում դարձուցած Արժանապատիւ Տ. Աստղիկ Քահանային, որուն կեանքի ճանապարհորդութիւնը եղաւ ազնիւ ու համակ ծառայութիւն: Իր քաղցրաշունչ շարականներու երգեցողութեամբ Տ. Աստղիկ Քահանան շատ-շատերու հոգիները շարժեց, որպէսզի զԱստուած փառաբանեն եւ կեանքն ապրին Աստուծոյ հետ:

Այսօր, դէպի երկինք կը յուղարկաւորենք բարի մշակը, որուն համար իր եկեղեցին դարձաւ իր տունը, սրբավայրը, եւ նոյն այս աղօթքի տունը դարձաւ նաեւ բալասանը իր ցաւերուն:

Բոլորիս կեանքին մեկնակէտը Աստուած է: Աշխարհ կու գանք յատուկ կոչումով եւ կը վերադառնանք Աստուծոյ ձեռքերուն մէջ գտնելու համար մեր յաւիտենական հանգիստն ու խաղաղութիւնը:

Տէր Ասողիկը այսօր, այս խորանէն իր վերջին ողջոյնը կու տայ բոլորիս անխտիր, հոգեւոր դասին, հաւատացելոց եւ իր ընտանիքին հանդերձ երեցկիւնով ու զաւակներով: Ողջոյն կու տայ այն մեզի բոլորիս, որ պէսզի սիրենք մեր ս. Եկեղեցին ու ծառայենք անբասիր կերպով: Իր կտակը մեզի կը մնայ Քրիստոսի պատգամին մէջ ամփոփուած. «Պիտի սիրես քու Տէր Աստծուն քու ամբողջ սրտով ու հոգով: Պիտի սիրես ընկերոջդ քու անձիդ պէս»:

Սիրելի հոգեւոր եղբայրներ, երեցկիւն ու զաւակներ եւ հաւատաւոր ժողովուրդ, աղօթեցէ՛ք Տէր Հօր հոգու խաղաղութեան համար եւ փառք տուէ՛ք Տիրոջ, որ իր սպասաւորը բոլորանուէր ծառայեց Քրիստոսի ս. Եկեղեցուն եւ մխիթարութիւն հաղորդեց իր հաւատացելոց:

Մեր սրտի խորին ցաւակցութիւնները բոլորիդ անխտիր: Մեր աղօթքը Տէր Հօր հոգւոյ խաղաղութեանը համար եւ մեր աղօթանուէր խոստումը, որ նորոգուած ուխտով շարունակենք մեր ուխտաւորի կեանքը Աստուծոյ փառքին համար:

Այսօր, երկնքի հրեշտակներու դասին մէջ է Տէր Ասողիկը եւ կը լսէ բոլորիս աղօթքի ձայնը, եւ երկինքը կը պատգամէ բոլորիս, որ մեր բովանդակ կեանքի ընթացքին Տիրոջ կամքը կատարենք եւ լոյս ու օրհնութիւն դառնանք հաւատացելոց կեանքին մէջ:

Խունկ ու աղօթք Տէր Հօր բարի յիշատակին ընդառաջ: Թող Տէր Հօր հոգին երկնային լուսեղէն օթեւաններու մէջ իր հանգիստը գտնէ, որտեղ այլեւս ցաւ ու փորձութիւն չկայ: Աստուծոյ ձեռքերուն մէջ է ան արդէն եւ պիտի շարունակէ իր ճանապարհորդութիւնը յաւիտենականութեան մէջ. Ամէն:

*Մեպտեմբեր, 2021*

## ՍԲ. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԸ

Սուրբերը եկեղեցւոյ կեանքին մէջ հաւատքի ներշնչման աղբիւր են, քանզի իրենց կեանքով կը վկայախօսեն Քրիստոսի մասին, ընդհուպ յանձնառու ըլլալով նաեւ նահատակութեան եւ մարտիրոսութեան:

Արդարեւ, սուրբերը հոգեւոր հարստութիւնն են եկեղեցւոյ, եւ մենք տարւոյ կտրուածքով կը տօնախմբենք իրենց նահատակեալ կեանքը՝ խոստում կատարելով հետեւիլ իրենց կեանքի օրինակին եւ իրենց օրհնեալ կեանքը ճանապարհը դարձնելով մեր կեանքին: Անոնք լսեցին Քրիստոսի խօսքը եւ այն ընդունեցին որպէս յաւիտենական ճշմարտութիւն:

Այսօր մեր ս. Եկեղեցին կը տօնախմբէ Ս. Գեորգ Զօրավարի մարտիրոսեալ կեանքը: Ո՞վ էր Սուրբ Գեորգը: Հռոմէական կայսրութեան պալատական բարձրաստիճան ծառայող մըն էր, որ մերժեց կայսեր հրամանը՝ խոնարհելու քուրմերու առաջ եւ յօժարակամ ընդունեց զոհաբերումը ի սէր Քրիստոսի: Վերցնենք այս պատկերը եւ այն բերենք այսօրուայ մեր առօրեայ կեանքին մէջ, աշխարհի կեանքին մէջ, եւ պիտի տեսնենք, որ խորքին մէջ շատ բան փոխուած չէ: Թերեւս կայսերական հրամաններ չեն արձակուիր այլեւս, բայց մարդիկ իրենց կենցաղին ոճով կը հեռանան Աստուծմէ եւ կը խոնարհին ժամանակաւորին առաջ, նիւթին առաջ: Աշխարհը մշտապէս պիտի խօսի ու քարոզէ Աստուծոյ մասին, եւ մենք բոլորով վեր պիտի հանենք ս. իսաչին խորհուրդը, որպէսզի քայլենք լոյսի ճանապարհէն եւ մեր կեանքով ուղեկից դառնանք Քրիստոսի՝ գործնականացնելով Աւետարանական պատգամները:



Միրելիներ ի Քրիստոս, մենք միշտ վերյիշած ենք հոգեւոյս Գարեգին Ա. Հայրապետի խօսքը, թէ՛ «Սուրբերը չեն ծնիր, այլէ՛ իրենց ապրած կեանքով կը ստանան սուրբի կոչումը»: Ուրեմն, տեսիլքն ունենանք ապրելու սուրբի կեանքով եւ դառնանք լոյս ու օրհնութիւն ամենուրեք:

Ս. Գեորգի Տօնի առիթով մեր շնորհատրութիւնները Արժ. Տ. Զարեհին եւ ձեզ բոլորիդ, որովհետեւ եկեղեցոյ անուանակոչութիւնն է այսօր: Մեր աղօթքն անխտիր բոլորիդ, որպէսզի մնաք հաւատքի կեանքին մէջ եռանդուն:

*Մեպտեմբեր 24, 2021*

## ՊԱՏԳԱՄ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

«Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, գոքս եկեալ տէրն գտցէ արթուն...»: (Ղուկ. 12:37)

Քրիստոսի այս խօսքերը առաւելաբար բոլորիս է ուղղուած, որպէսզի Աստուծոյ տան ծառայութեան մէջ մնանք որպէս արթուն պահակ՝ կատարելու համար մեր հոգեւոր ծառայութիւնը նախանձախնդրութեամբ, օրինակ դարձնելով մեր կեանքը հաւատացեալներուն: Որպէս հովիւներ, մեզի է վստահուած Քրիստոսի հօտին ծառայութիւնը: Եւ ճշմարիտ առաջնորդութիւնը ծառայութեամբ է պայմանաւորուած: Ինչքա՛ն ծառայենք, այնքան մեր սիրոյ չափը կ'արտացոլուի: Ինչքա՛ն ծառայենք, ապա այնքան կը միաւորենք հաւատացեալները, որպէս մէկ եւ անքատկելի ընտանիք եւ մեր ծառայութեամբ կը փառաւորենք Աստուծոյ սուրբ անունը:

Հոգեւորականաց մեր խորհրդածոյումները կը միտին զօրացնել մեր հոգեւոր կապը միմեանց նկատմամբ, մեր սէրն ու յարգանքը ժողովուրդին հանդէպ: Մեր քննարկումները զանազան նիւթերու շուրջ անտարակոյս էական են, որովհետեւ պատեհ առիթն է սա նորոգելու մեր ուխտը եւ կոչումը Աստուծոյ անդաստանին մէջ՝ ունենալու համար բոլորանուէր ծառայութիւն:

Այս շարաթը նուիրական շարաթ է մեր եկեղեցւոյ մէջ, եւ մենք աղօթքով ու երկիրաճութեամբ պիտի ոգեկոչենք Ս. Մեսրոպ Մաշտոցի ու Ս. Սահակ Պարթեւ Հայրապետի, ու բոլոր թարգմանիչներու տօնը: Անոնք մեզի ժառանգ են թողած, որպէսզի սրբութեամբ պահենք

Աստուածաշունչը եւ մեր կեանքով դառնանք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ու առաքեալները:

Անցնող ամբողջ տարին մեր ազգի ու հայրենիքի համար դարձաւ խաչելութեան տարի: Բոլորս ալ ցաւեցանք, եւ դեռ պատերազմին պատճառած վերքերը թարմ են: Բայց չենք կրնար յուսակտուր մնալ, քանզի հայ քրիստոնեան խաչին մէջ է գտած նպատակն ու առաքելութիւնը, այն հաւատքով, որ խաչի ճանապարհը մեզ կ'առաջնորդէ դէպի Յարութիւն եւ նոր կեանք:

Հետեւաբար, մեզի կը մնայ միասին աղօթել եւ մեզի հետ աղօթակից դարձնել մեր հաւատացեալները: Հայ հոգեւորականը իր կեանքը այնպէս պիտի ապրի, որ այն վերածէ լոյսի ու յոյսի: Ձեզ ի բոլոր սրտէ կը մաղթենք քաջառողջ կեանք եւ ձեր եկեղեցանուէր գործունէութեան մշտական յաջողութիւն:

Յիշենք Քրիստոսի խօսքերը. «Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն գտցէ արթուն...»:

*Հոկտեմբեր 5, 2021*

## ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

«Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ՝ շատ արկ քան զամենեսեան որ արկին ի գանձանակն: Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա՝ ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր, արկ գոյի չափ զկեանս իւր»: (Մարկոս 12:43-44)

Մարկոսի Աւետարանէն քաղուած այս խօսքը ինչպէս իր օրին իմաստ ունէր՝ պատգամ էր ուղղուած ժողովուրդին, այսօր ժողովուրդը մենք ենք, եւ Քրիստոս կը նայի մեզ, թէ ինչպէս կ'ապրինք մեր հաւատքի կեանքը:

Պատմութիւնը շատ պարզ է. Քրիստոս կանգնած էր Տաճարի գանձանակին դիմաց ու կը քննէր, թէ ով ինչպէս իր նուէրը կը նետէր Տաճարի գանձանակին մէջ: Չխորհինք, թէ Քրիստոս հաշուեքննիչ մըն էր եւ ոչ ալ ըստայնմ կը կատարէր իր դիտողութիւնը: Քրիստոս կը քննէր մարդկանց միտքն ու սիրտը՝ տեսնելու մեր հաւատքի տարողութիւնը:

Գանձանակը մեր ընտանիքն է, եւ անմիջական ընտանիքը, ուր ծնողներ կ'ապրին իրենց զաւակներով: Գանձանակը՝ եկեղեցին ու ընկերութիւնն է, որուն մէջ մենք կ'ապրինք եւ մեր աղօթքի կեանքը, եւ մեր ծառայական կեանքը հասարակական բոլոր ոլորտներու մէջ: Իսկ գանձանակին մէջ նետուած դրամը ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր սէրն ու նուիրումը, մեր ծառայութիւնն ու հաւատարմութիւնը, մեր յանձնառութիւնն ու հաւատքի եռանդը, որոնց համար խնայութիւն չպէտք է կատարենք եւ մեզի վստահուած պարտակութիւնները պէտք է կատարենք բոլորանուէր, ամբողջ սրտով ու հոգու ամբողջ

գորութեամբ: Եւ Քրիստոս կը կարդայ բոլորիս էութիւնը, թէ ինչ ձեռով ու ինչպիսի չափով կը կատարենք մեր ծառայութիւնը:

Այսօրուայ աշխարհի կեանքին մէջ ալ, ուր որ ալ կը գտնուինք, ընտանիքէն ներս, թէ դպրոցին ու եկեղեցիին մէջ, ընկերութեան մէջ առհասարակ մեզի վստահուած պարտականութիւնները պարտ ենք կատարել նախանձախնդրութեամբ: Իսկ երբ կը թերանանք մեր պարտականութեանց մէջ՝ կը խանգարուի ե՛ւ ընտանիքը, ե՛ւ եկեղեցին, ե՛ւ դպրոցը, ե՛ւ ընկերութիւնը:

Չմոռանանք, որ բոլորս ալ Աստուծոյ սպասաւորներն ենք եւ պարտ ենք կատարելու Աստուծոյ կամքը եւ կեանքի կոչելու Քրիստոսի պատուիրանները, որոնք նոր կեանք կը հաղորդեն մեզի:

Միրելինէ ր ի Քրիստոս, մեզի համար ճշմարտապէս ուրախութիւն է տեսնել այս համայնքին մէջ հոգեւոր կեանքի առողջ մթնոլորտ, ուր ձեր սիրելի հովիւին՝ Արժ. Տ. Մեսրոպ Քահանայի առաջնորդութեամբ եւ աջակցութեամբը Ծիսական խորհուրդին ու յարակից բոլոր մարմիններուն դուք կ'ապրիք ու կը գործէք քրիստոնէական հաւատքով: Մենք կ'օրհնենք ձեզ եւ հազար փառք կու տանք Աստուծոյ ձեր բարի ծառայութեան համար եւ կը պատգամենք, որ շարունակէք ձեր աղօթանուէր կեանքը Աստուծոյ փառքին համար եւ ձեր զաւակաց քրիստոնէական դաստիարակութեանը համար: Ի մասնաւորի մեր գնահատութիւնը ձեզի, որ անցնող աւելի քան մէկուկէս տարիներու ընթացքին covid19-ի դժուար պայմաններուն մէջ դուք ձեւերը փնտռեցիք ու զանոնք գործադրեցիք, որ եկեղեցին իր առաքելութիւնը շարունակէր՝ ժողովուրդին երթալով:

Մնացէք խաղաղութեան մէջ, եւ մեր աղօթքը միշտ պիտի մնայ ձեզի համար եւ ձեզի հետ:

*Հոկտեմբեր 7, 2021*

## ՆԱԲԱԿԱՏԻՔ

Աստուծոյ կամօք, նորակառոյց այս սուրբ եկեղեցւոյ դռնբացեքի ասանդական արարողութիւնը կատարեցինք եւ անտարակոյս բոլորիս հոգիները հրճուած են ի տես այս փառահեղ եկեղեցական կառոյցին, որուն մէջ բոլորով դրինք մեր սիրտն ու հոգին եւ նորոգեցինք մեր քրիստոնէական հաւատքը նոր յանձնառութիւններու պատրաստակամութեամբ:

Ինչքան խոր հաւատքով նայինք այս սուրբ եկեղեցիին, այնքան ձեր պատկերը պիտի տեսնէք եւ զգաք ձեր սրտի թրթռացումը:

Ինչպիսի՜ առանձնաշնորհում է սա բոլորիս համար դէպի երկինք բարձրացնելու հայկական նորած խաչերով զարդարուած գմբեթներ, որոնք կը խորհրդանշեն մեր ազգի ու եկեղեցիին յարութիւնն ու լոյսի փարոսը:

Աստուծոյ օգնականութեամբ վաղը պիտի կատարենք նորակառոյց այս եկեղեցւոյ օծումը սրբալոյս միռոնով, որմէ անմիջապէս յետոյ պիտի օրհնենք նոր եկեղեցւոյ անուանակոչութիւնը:

Միրելիներ ի Քրիստոս, եկեղեցին Աստուծոյ տունն է. մեր ս. եկեղեցին մկրտութեան ասպանն է մեր հաւատքի կեանքին, եւ բանաստեղծին բառերով՝ «Եկեղեցին հայկական՝ ծննդավայրն է հոգւոյս» - մեր հոգիներուն:

Հայաստանէն հեռու այս ամիերուն, Սան Տիեկոյի արուարձանի մէջ այս սուրբ եկեղեցին բոլորս պիտի առաւել միաւորէ ու ամրացնէ մեր քրիստոնէական հաւատքին, յոյսին ու սիրոյն մէջ: Մեր ազգի կեանքին մեծագոյն նուէրներ՝ հաւատքը, յոյսն ու սէրը Աստուծոյ կողմէ մեզի են շնորհուած:

Այս տօնական առիթով առաջին հերթին փառք կու տանք Աստուծոյ, որ օրհնեց մեզ ու առաջնորդեց բոլորս, որպէսզի ձեռք ձեռքի կառուցենք նուիրական այս եկեղեցին:

Մեր աղօթքը այս համայնքին մէջ իրենց ծառայութիւնը ընծայաբերած եկեղեցւոյ բոլոր սպասաւորներուն անխտիր, երախտագիտութեամբ կը յիշատակենք հանգուցեալ քահանաներ Տ. Շահէ Աւագ Քահանայ Սեմերձեանին, Տ. Գրիգոր Աւագ Քահանայ Հայրապետեանին, Տ. Լեւոն Աւագ Քահանայ Առաքելեանին:

Եւ ուրախ ենք, որ այսօր մեզի հետ աղօթակից է անցնող երկու տասնամեակներու արժանաւոր հովիւր՝ Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ. Թաթուլեանը:

Մեր գնահատութիւնը եկեղեցւոյ նուիրեալ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Բագրատ Ծ. Վարդապետին, որուն գլխաւորութեամբ Ծխական խորհուրդը, ինամակալ մարմինն ու Շինութեան յանձնախումբը, յարակից բոլոր մարմիններով ձեր տեսիլքը դարձուցիք իրագործուած ոգեղէն կառոյց մը:

Մենք երախտագիտութեամբ կը յիշենք անցնող տասնամեակներու Ծխական խորհուրդները եւ յարակից մարմինները եւ ի մասնաւորի հաւատացեալները, որոնց աղօթքի ձայնն այսօր կը լսենք այս ս. եկեղեցւոյ կամարներու ներքոյ:

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄԸ

Սիրելիներ ի Քրիստոս,

Ուրախութեան օր է այսօր ե՛ւ այս համայնքի, ե՛ւ մեր թեմի համար, քանզի դէպի երկինք բարձրացաւ հայկական ճարտարապետական ոճով նոր եկեղեցի մը, որուն անուանակոչումը կատարեցինք Ս. Սարգիս Հայց. Առաքելական եկեղեցի անունով:

Այս Սուրբ եկեղեցին այսօրուրնէ սկսեալ երկինքն ու երկիրը միացնող ոսկէ կամուրջն է: Այս սուրբ եկեղեցին ճանապարհ է դէպի Սայր Հայրենիք ու Ս. Էջմիածին: Այս սուրբ եկեղեցին մեր ազգի վերածննդեան խորհրդանիշն է:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փառք քեզ յաղագս ամենայնի, Տէ՛ր, փառք քեզ»:

Օծեալ եկեղեցին օրհնութիւն է մեր կեանքին մէջ: Այս սուրբ եկեղեցոյ դռնէն ներս մուտք գործող իւրաքանչիւր հայ հաւատացեալի կեանքը կը լուսաւորուի, քանզի կը կանգնինք Աստուծոյ առջեւ եւ Աստուծոյ ներկայութիւնը կը դարձնենք պատկերը մեր հոգիին:

Մեր սրտի պարտքն է՝ առաջին հերթին մեր աղօթքը կատարել Աստուծոյ աչքի ներքոյ, այն բոլոր հոգեւոր ու աշխարհիկ սպասաւորաց համար, ովքեր իրենց հաւատքի կեանքով առաջնորդեցին մեզ:

Երախտագէտ սրտի զգացումներն ու գնահատութիւնը մեր սիրելի Հայր Սուրբին՝ Հոգշ. Տ. Բագրատ Ծ. Վարդապետին, որուն անմիջական հովուական ծառայութեամբը եւ Ծիսական խորհուրդի, ինսամակալ մարմնի, շինութեան յանձնախումբի եւ յարակից մարմիններու, բոլորի բարոյական ու նիւթական աջակցութեամբ, կառուցուեցաւ այս հոյակերտ ս. եկեղեցին:



Հոգևոր կեանքի վերածննդեան տունն է սա: Եւ այստեղ կ'ուզենք մեր մասնայատուկ երախտիքը յղել առաջին հերթին Տիար Հերի Գրիգորեանին, իր նախանձնախնդիր եւ հոգածու ծառայութեան համար, որով որպէս վարձատրութիւն իրեն պիտի շնորհուի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակն ու «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը: Մասնայատուկ մեր երախտիքը եկեղեցւոյ Աւագ կնքահայր եւ գլխաւոր նուիրատու Իսրայէլեան ամուլին, որոնք իրենց իշխանավայել նուիրատութեամբը արագացուցին եկեղեցւոյ շինարարութիւնը եւ որուն որպէս գնահատութիւն պիտի ստանան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակն ու «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Ա. Կարգի շքանշանը:

Մեր երախտիքի խօսքին մէջ կ'ուզենք յիշել թեմի բարերարներուն ու կնքահայրին, որոնք օրին կատարեցին իշխանական նուիրատութիւններ քաջալեր հանդիսանալով եկեղեցւոյ կառուցման:

Պարտք ենք յիշել բարի անուններ, որպէս խնամակալ մարմնի բարերարներ, նախկին եկեղեցւոյ առաջին գլխաւոր կնքահայր Տէր եւ Տիկին Նուպար Մարգարեան եւ շինութեան գործընթացին մէջ իր կարեւոր ներդրումը ունեցած ազնուաշուք Տիկին Մարիա Մեհրանեանը, որ Coastal Commission-ի հետ միատեղ ձեռք երկարեցին այս եկեղեցւոյ առաքելութեան յաջողութեանը համար: Աղօթքով կը յիշենք նաեւ լուսահոգի Ժագ Խաչիկեանը, որ իր հոգու աչքերով տեսաւ եկեղեցին իր ապրած տարիներուն:

Շատերուս երազը իրականացած է արդէն: Ուրեմն, ուխտ կատարենք ապրելու եկեղեցական կեանքով, կեանքը դարձնելու հաւատքի ճանապարհորդութիւն եւ մեր նահատակներու կեանքը խորհրդանշող մշտական վկայական դարձնենք այս սուրբ եկեղեցին:

## «ԹԱԳԱԲՈՐ ԵՐԿՆԱԲՈՐ ՉԵԿԵՂԵՑԻ ՔՈ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱՎ»

Նորած եկեղեցւոյ ս. խորանին վրայ մատուցուող Անդրանիկ / Առաջին պատարագը կը մատուցանենք եւ հազար փառք կու տանք Աստուծոյ այս օրհնեալ օրուան համար, որովհետեւ տարիներու մեր գեղեցիկ երագը դարձաւ իրական: Այս նոր եկեղեցւոյ կառուցումը եւ օծումը վկայութիւնն է մեր քրիստոնէական հաւատքին, որը ժառանգած ենք մեր նախնիներէն, եւ այսօր կը խոստանանք մեր զաւակաց հոգեւոր կեանքը հարստացնել նոյնինքն մեր նախնիներէն մեզի ժառանգ տրուած հաւատքով:

Աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, որ անշարժ ու անսասան պահէ մեր սուրբ եկեղեցին, որովհետեւ մեր ս. եկեղեցին այն հիմնաքարն ու ժայռն է, որուն վրայ պիտի շարունակենք մեր քրիստոնէական առաքելութիւնը՝ քարոզելու համար Աստուծոյ խօսքը:

Միրելիներ, եկեղեցին ունի երկու ներկայութիւն. առաջինը՝ մենք ենք, որպէս ապրող ու շնչող հաւատքը ի Քրիստոս, եւ երկրորդը՝ քարեղէն շէնքը, որուն հովանիին տակ միասնաբար կ'աղօթենք ու կը կառուցենք բարին ու գեղեցիկը, վերջապէս Աստուածահաճոյ տունը:

Աղօթքի այս նոր տունը կառուցեցիք Աստուծոյ առաջնորդութեամբ եւ անձնուէր աշխատանքով: Այս պահուն ձեզի կը բերենք մեր ջերմ գնահատութիւնը, որ մերժելով ժամանակի բոլոր դժուարութիւնները՝ մնացիք հաստատ ձեր կամքին մէջ եւ այսօր արդար վայելքը կ'ունենաք նորած այս եկեղեցիէն: Ի մտի ունեցէք, որ ձեր նուիրումի ճշմարիտ վարձատրութիւնը պիտի գայ

Աստուծմէ: Ինչ որ տուիք, այդ Աստուծմէ էր, եւ կը վերադարձնէք Աստուծոյ: Լաւ յիշեցէք նաեւ, ճշմարիտ աշխատանքը կը սկսի այսօր: Այն, պարզ բառերով՝ կառուցուածը պահելու պարտականութիւնն ու առաքելութիւնն է: Եւ ինչքա՛ն մեր ձեռքերը խառնենք Աստուծոյ սուրբ գործին մէջ, որը եկեղեցաշինութիւնն է, ապա այնքան կը զօրանայ մեր ներքին միութիւնը եւ մեր կեանքը կը վերածենք առաքելութեան:

Սիրելիներ՝ ի Քրիստոս, յիշեցէ՛ք Քրիստոսի կողմէ մեզի տրուած կարեւորագոյն երկու պատգամները. «Պիտի սիրես քու Տէր Աստուածը քու բոլոր սրտով ու հոգիով, եւ պիտի սիրես քու ընկերդ քու անձին պէս»:<sup>1</sup> Այսօր ուխտի օր է մեզի համար, որպէսզի նորոգենք մեր քրիստոնէական կոչումը եւ յետ այսու մեկզմիւսի առաջ խոնարհինք՝ ճշմարտապէս ցոյց տալու համար մեր սէրը Աստուծոյ համար, որով եւ պայմանաւորուած է մեր Սբ. եկեղեցոյ առաքելութեան յաջողութիւնը:

Այս Սբ. պատարագը թող նոր օրհնութիւն բերէ բոլորիս կեանքին մէջ, որպէսզի նորոգեալ հաւատքով շարունակենք մեր եկեղեցանուէր առաքելութիւնը: Սա պահուն մեր սուրբ պարտք է մասնայատուկ կերպով շնորհատրել ձեզ բոլորդ, գլխաւորութեամբ Հոգշ. Տ. Բագրատ Օ. Վրդ. Պէրջիքեանին: Մեզի համար հոգեկան մեծ բաւարարութիւն է տեսնել սերտ համագործակցութիւնը եկեղեցոյ յարակից բոլոր մարմիններու Օխական խորհուրդի գլխաւորութեանը ներքոյ: Սա պահուն կ'ուզենք ի պատուի արժանացնել

«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա՛»:

## ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՑՆՈՂ ՇԱԲԱԹՈՒԱՅ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, այսօր քրիստոնէական եկեղեցին կը տօնախմբէ Աստուածամօր տաճար ընծայումը: Ան իր փոքր տարիքէն կ'ընծայուի տաճարին, որպէս ուխտի զաւակ, որմէ յետոյ կ'ապրի բարեպաշտական կեանքով մը, որուն հետեւանօք ալ Աստուծոյ կանչը զինք կ'ընտրէ դառնալու համար Աստուածածինը, Աստուածամայրը: Մեզի հասած աւանդութեան համաձայն՝ Աստուածամայրը տաճար կ'ընծայուի իր ծնողաց կողմէ որպէս ուխտի զաւակ, հանգամանք մը, որ անտարակոյս կը բացատրէ Աստուածամօր կեանքի առջեւ բացուած առաքելութիւնը՝ դառնալու համար Յիսուսի մայրը Աստուածամայրը: Եւ անշուշտ Աւետարաններէն զիտենք, որ ան սրբութեամբ կատարեց իր մայրական պարտականութիւնը եւ հետեւեցաւ Յիսուսի քայլերուն Անոր ծնունդէն մինչեւ խաչելութիւն: Իր մէջ մենք կը գտնենք մայրական կերպարին կատարելութիւնը:

Ուրեմն, այս իմաստով ալ արդարացուած է այն բացատրութիւնը, որ ան ուխտի զաւակ էր, քանզի իր կեանքն ալ պիտի ապրէր ուխտագնացութեամբ: Այս պատկերին մէջ կը տեսնենք ձեր ուխտագնացութիւնը, սիրելի ծնողներ, քանզի դուք ալ նուիրուած էք ձեր զաւակաց:

Երբ կարդացինք այն բացատրութիւնը, թէ Ս. Կոյս Մարիամ ընտրուած էր որպէս ուխտի զաւակ, ապա մեր մտածումներուն մէջ ծնունդ առաւ նաեւ անկեղծ ապրում մը, թէ մենք եւս կարելիութիւնն ունինք հաւատքի տեսիլքով դառնալու ուխտի զաւակ մեզի տրուած

կեանքի մէջ: Եւ ի՞նչ կը նշանակէ դառնալ ուխտի զաւակը, պարզ բառերով եթէ ուզենք բացատրել, ապա ուխտի զաւակ ըլլալ կը նշանակէ լսել Աստուծոյ խօսքը, պահել անոր պատուիրանները: Եւ մեզմէ ամէն մէկը իր մէջ կը կրէ Աստուծոյ պատկերը, այլ խօսքով՝ նաեւ Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը առ հասարակ կեանքին բացուելու համար խոնարհութեամբ: Եւ անկասկած մենք բոլորս մեր մէջ ունինք հաւատքի գիտակցութիւնը մեր կեանքն ապրելու սրբութեամբ: Մեր ս. եկեղեցւոյ հայրերէն եւ այս թեմի անդրանիկ Առաջնորդը՝ Գարեգին Խաչատուրեան երբ կը խօսի հաւատքի մասին, հետեւեալ խօսքը կ'արտասանէ. «Հաւատքը կեանքի ուժն է»: Այս նոյն հաւատքն է, որ առաջնորդեց Ս. Մարիամը լսելու համար Աստուծոյ կանչն ու հրաւերը: Եւ աղօթքը դարձաւ առանցքը անոր հոգեւոր կեանքին:

Ի՞նչ է աղօթքը, սիրելի բարեպաշտ հաւատա-ցեալներ: Նախ կ'ուզենք անկեղծօրէն բաժնել ձեզի հետ մեր այն փորձառութիւնը, որ երբ երեխաներու հետ դպրոցներու այցելութիւն կ'ունենայինք, անոնց մաքուր հոգիներէն կը լսէինք լաւագոյն ու ամենէն հարուստ բացատրութիւնները: Իսկ աղօթքին նուիրուած բացատրութիւնները շատ են: Պարզ բառերով՝ աղօթքը սրտէն բխած խօսքն է Աստուծոյ հետ: Աղօթքին զօրութիւնը մեծ է մեր կեանքին մէջ: Աղօթքը Աստուծոյ պարզէն է մեզի տրուած: Եւ աղօթքի զօրութեամբ մեր մէջ կ'ամրագրենք բարին՝ ընդդէն չարին, որ մեզ կը հեռացնէ Աստուծմէ: Աղօթքը մեզ կ'առաջնորդէ քննելու մեր ներքին աշխարհը եւ նոյն աղօթքին մղիչ զօրութեամբ մեր մէջ տեսնելու Աստուծոյ ներկայութիւնը: Ահաւասիկ այս է նշանակութիւնը աղօթքին, որուն առաջնորդութեամբ Ս. Մարիամ Աստուածամայրը դարձաւ ուխտի զաւակ եւ

ունեցաւ հոգեւոր պատրաստութեան շրջանը իր մէջ կրելու համար Աստուածորդին: Ուրեմն, մենք ալ դառնանք ուխտի զաւակ, որպէսզի մեր առօրեան լեցնենք Աստուծոյ կամքը ի գործ դնելով որպէս ծնողներ կամ արհեստավարժներ՝ կեանքի մէջ ինչպիսի պաշտօնի վրայ ալ որ գնտուինք:

Մեր ս. Եկեղեցին եւ Ազգը իր կեանքի ուղին արժեւորած են ուխտի զաւակներ ծնունդ տալով: Այսօր մանաւանդ աւելի քան բոլոր ժամանակները մենք բոլորս, հաւաքաբար մէկգմիւսին ներշնչենք ուխտի զաւակ դառնալու գիտակցութեամբ: Ուխտի զաւակ ըլլալ կը նշանակէ կեանքն ապրիլ Աստուծոյ հետ, քայլել հաւատքի ճանապարհներէն, միմեանց սիրել ու ծառայել խոնարհ ոգով, քանզի այս բոլորի բացակայութիւնը մեզ կը հեռացնէ Աստուծոյ սիրոյ ճանապարհէն:

*Նոյեմբեր 20, 2021*

## ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՏԱՃԱՐ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

Այսօր քրիստոնէական եկեղեցին կը տօնախմբէ Աստուածամօր տաճար ընծայումը: Ան իր փոքր տարիքէն կ'ընծայուի տաճարին, որպէս ուխտի զաւակ, որմէ յետոյ կ'ապրի բարեպաշտական կեանքով մը, որուն հետեւանօք ալ Աստուծոյ կանչը զինք կ'ընտրէ դառնալու համար Աստուածածինը, Աստուածամայրը: Մեզի հասած աւանդութեան համաձայն Աստուածամայրը տաճար կ'ընծայուի իր ծնողաց կողմէ որպէս ուխտի զաւակ, հանգամանք մը, որ անտարակոյս կը բացատրէ Աստուածամօր կեանքի առջեւ բացուած առաքելութիւնը՝ դառնալու համար Յիսուսի մայրը՝ Աստուածամայրը: Եւ, անշուշտ, Աւետարաններէն գիտենք, որ ան սրբութեամբ կատարեց իր մայրական պարտականութիւնը եւ հետեւեցաւ Յիսուսի քայլերուն Անոր ծնունդէն մինչեւ խաչելութիւն: Իր մէջ մենք կը գտնենք մայրական կերպարին կատարելութիւնը: Ուրեմն, այս իմաստով ալ արդարացուած է այն բացատրութիւնը, որ ան ուխտի զաւակ էր, քանզի իր կեանքն ալ պիտի ապրէր ուխտագնացութեամբ: Այս պատկերին մէջ կը տեսնենք ձեր ուխտագնացութիւնը, սիրելի ծնողներ, քանզի դուք ալ նուիրուած էք ձեր զաւակաց:

Երբ կարդացինք այն բացատրութիւնը, թէ Ս. Կոյս Մարիամ ընտրուած էր որպէս ուխտի զաւակ, ապա մեր մտածումներուն մէջ ծնունդ առաւ նաեւ անկեղծ ապրում մը, թէ մենք եւս կարելիութիւնն ունինք հաւատքի տեսիլքով դառնալու ուխտի զաւակ մեզի տրուած կեանքի մէջ: Եւ ի՞նչ կը նշանակէ դառնալ ուխտի զաւակը. պարզ բառերով էթէ ուզենք բացատրել, ապա

ուխտի զաւակ ըլլալ կը նշանակէ լսել Աստուծոյ խօսքը, պահել Անոր պատուիրանները:

Եւ մեզմէ ամէն մէկը իր մէջ կը կրէ Աստուծոյ պատկերը, այլ խօսքով՝ նաեւ Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը առ հասարակ կեանքին բացուելու համար խնարհութեամբ: Աստուածամայրը դարձաւ ուխտի զաւակ, որովհետեւ կեանքն ապրեցաւ սրբութեամբ ու խնարհութեամբ: Եւ անկասկած մենք բոլորս մեր մէջ ունինք հաւատքի գիտակցութիւնը մեր կեանքն ապրելու սրբութեամբ: Մեր ս. եկեղեցւոյ հայրերէն եւ այս թեմի անդրանիկ Առաջնորդը՝ Գարեգին Արք. Թաշատուրեան, երբ կը խօսի հաւատքի մասին, հետեւեալ խօսքը կ'արտասանէ. «Հաւատքը՝ կենքի ուժն է»: Այս նոյն հաւատքն էր, որ առաջնորդեց Ս. Մարիամը՝ լսելու համար Աստուծոյ կանչն ու հրաւերը: Եւ աղօթքը դարձաւ առանցքը անոր հոգեւոր կեանքին:

Ի՞նչ է աղօթքը, սիրելի բարեպաշտ հաւատացեալներ: Նաեւ կ'ուզենք անկեղծօրէն բաժնել ձեզի հետ մեր այն փորձառութիւնը, որ երբ երեխաներու հետ դպրոցներու այցելութեան ժամանակ անոնց մաքուր հոգիներէն կը լսենք լաւագոյն ու ամէնէն հարուստ բացատրութիւնները: Իսկ աղօթքին նուիրուած բացատրութիւնները շատ են: Պարզ բառերով՝ աղօթքը սրտէն բխած խօսքն է Աստուծոյ հետ: Աղօթքին զօրութիւնը մեծ է մեր կեանքին մէջ: Աղօթքը Աստուծոյ պարզեւն է մեզի տրուած: Եւ աղօթքի զօրութեամբ մեր մէջ կ'ամրագրենք բարին՝ ընդդէմ չարին, որ մեզ կը հեռացնէ Աստուծմէ: Աղօթքը մեզ կ'առաջնորդէ քննելու մեր ներքին աշխարհը եւ նոյն աղօթքին մղիչ զօրութեամբ մեր մէջ տեսնելու Աստուծոյ ներկայութիւնը: Ահաւասիկ այս է կոչումը աղօթքին, որուն առաջնորդութեամբ Ս. Մարիամ Աստուածամայրը դարձաւ ուխտի զաւակ եւ ունեցաւ հոգեւոր



պատրաստութեան շրջանը՝ իր մէջ կրելու համար Աստուածամայրը: Ուրեմն, մենք ալ դառնանք ուխտի գաւակ, որպէսզի մեր առօրեան լեցնենք Աստուծոյ կամքը ի գործ դնելով որպէս ծնողներ կամ արհեստավարժներ, եւ կեանքի մէջ ինչպիսի պաշտօնի վրայ ալ որ գտնուինք:

Մեր ս. Եկեղեցին ու ազգը իր կեանքի ուղին արժեւորած է ուխտի գաւակներու ծնունդ տալով: Այսօր մանաւանդ աւելի քան բոլոր ժամանակները մենք բոլորս, հաւաքաբար մէկգմբիսին ներշնչենք ուխտի գաւակ դառնալու գիտակցութեամբ: Ուխտի գաւակ ըլլալ կը նշանակէ կեանքն ապրիլ Աստուծոյ հետ, քայլել հաւատքի ճանապարհներէն, միմեանց սիրել ու ծառայել խոնարհ ոգով, քանզի այս բոլորի բացակայութիւնը մեզ կը հեռացնէ Աստուծոյ սիրոյ ճանապարհէն:

*Նոյեմբեր 22, 2021*

## «ՀԱՒԱՏՔԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՈՒԺՆ Է»

Գարեգին Տրապիգոնցի

20-րդ դարու Հայց. Առաքելական եկեղեցույ լուսաշող դեմքերու շարքին է անկասկած հոգելոյս Գարեգին Արք. Խաչատուրեանը, որուն հոգեշունչ պատգամներուն մէջ է ամփոփուած աստուածասիրութեան շունչն ու եկեղեցասիրութեան առաքելականութեան զգացողութիւնը: Խորին արնածանօք կը համարձակիմ սրտիս ծալքերուն մէջ տեղ գտած զգացումներս թուղթին յանձնելու, որպէս խոնարհումս մեծ հոգեւորականին հանդէպ:

Սոյն աշխատութիւնը իր գրչի արգասիքէն ծնունդ առած պատգամներու համեստ հաւաքածոյ մըն է, զորս պարտք համարեցինք հրապարակել Արեւմտեան թեմի 95-ամեակին առիթով: Գրքի առաջին հատուածին մէջ ներկայացուած են հոգիները շարժող Մեծ Պահքին նուիրուած քարոզները: Երկրորդ հատուածին մէջ ամփոփուած են իր անդրանիկ պատգամին շողարձակումները՝ նուիրուած թեմը ներկայացնող միաւորներուն. հայ տուն, հայ ծնողք, հայ կիներ եւ մայրը, հայ ուսուցիչներ, հայ ժողովուրդ եւ հովիւները: Իսկ երրորդ հատուածի նիւթերը, «Հոգեւոր շողարձակումներ» վերնագրով, յստակօրէն կը բարձրաձայնեն իր հոգեմտաւոր կեանքին փիլիսոփայութիւնը, քահանայական կարգը, եկեղեցական պատուանշանները, Պահք եւ աղօթք, ներողամտութիւն, հոգի եւ միտք, սէրը եւ խաչը:

Ներածական այս խօսքի մէջ ընթերցողին կը ներկայացնենք միայն մի քանի քաղուածքներ՝ յուսալով,

որ ընթերցողը անձնապէս պիտի ըմբռնի մեծ հոգեւորականին ապրումները՝ որպէս հաւատամքը իր կեանքին:

Հոգեւոյս Պատրիարքը, երբ կը խօսի Տնտեսի առակին մասին, ընդգծուած կը ներկայացնէ իր մեկնաբանութիւնը ծառայութեան մասին. «Ծառայել Աստուծոյ՝ արդարութեամբ եւ արդարութեան համար, իմաստութեամբ եւ ուղղամտութեամբ, - այս է անխախտ սկզբունքն այն տնտեսութեան՝ որ կը վերաբերի մեր անձնաւոր տան, մեր ֆիզիքական եւ հոգեկան շինածքին»: Իսկ երբ իր խօսքը կ'ուղղէ ժողովուրդին, հետեւեալ խորհրդածութիւնը կը կատարէ. «Աստուծոյ ճշմարիտ տունը այն բարոյական մթնոլորտն է՝ ուր հոգին կը գտնէ իր ինքնութեան լման ճանաչումը, շնորհիւ ճշմարտութեան այն լոյսին՝ որ Աւետարանէն կը ճառագայթէ, աւելի ճիշտ՝ որ Քրիստոսի երկրաւոր կամ մարդկային փորձառութիւններէն, ապրած կեանքէն կ'արտափայլի»:

Երբ կը խօսի բարիին եւ չարին մասին, ան կը լզրէ հետեւեալը. «Պայքար մը կայ մեր մէջ, մեր իսկ ձեռքով ստեղծուած: Բարիին եւ Չարին գօտեմարտութիւնն է այդ: Բարիին համար ճակատագրուած, պարտինք սպառազինուիլ այն բոլոր ոյժերով՝ որոնք տրուած են մեզի Գերագոյն Բարիէն»:

Խաչատուրեան Պատրիարքի ներկայ հաւաքածոյին մէջ տեղ գտած բոլոր պատգամները իրենց բովանդակութեամբ հիւթեղ են: Երբ ան կը խօսի աղօթքի մասին, կը ներկայացնէ հետեւեալ հաստատումը. «Աղօթքը: Ի՞նչպէս ըմբռնած ենք զայն: Մտէ՛ք եկեղեցիներէն ներս, բայց մանաւանդ մտէք ձեր անձնական «տաճար»ներէն ներս: Դիտեցէք, Աւետարանի լոյսով, ինչ որ կ'անցնի ու կը դառնայ հոն: Ուշադրութեամբ անդրադարձէք, թէ ի՞նչ կ'աղօթէք, ի՞նչպէս կ'աղօթէք եւ ի՞նչու կ'աղօթէք,

է՞րբ եւ ո՞րու համար կ'աղօթէք: Կը լսէ՞ ձեզի Այն՝ որուն կ'աղօթէք»:

Սոյն ներածական խօսքը կ'աւարտենք կեանքին նուիրուած իր սահմանումովը. «Կեանքին նպատակը կեանքն է: Իրաւունք ունի իմաստունը երբ կ'ըսէ.- «Աստուած ստեղծեց մարդը անմահութեան համար»: Եւ անմահութիւն կը նշանակէ կեանքը կեանքին համար»:

«Ոսկեղենիկ» մատենաշարի Ե. Գրքոյկով ջերմ փափաքն ունեցանք պանծացնել յիշատակը՝ հոգիով հզօր Պատրիարքին: Հայ եկեղեցւոյ պատմութեան երկնակամարին վրայ որոշապէս գրուած է բարի անունը Խաչատուրեան Պատրիարքին՝ մեզի ծանօթ Գարեգին Տրապիզոնցի անունով:

Սիրելի՛ ընթերցող, կը կամենա՞ս պայծառակերպել հոգիդ ու միտքդ աստուածային լոյսով: Ուրեմն, կարդա՛ կենսատու խօսքերը Գարեգին Խաչատուրեանին:

*Նոյեմբեր 24, 2021*

## ՄՐՏԻ ԽՕՍՔ “ՆԱՐԵԿ”-Ի ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Ծննդեան Տոնին ընդառաջ հոգեւոր նախապատրաստութեան ճանապարհորդութեան տանող դուռը կը հանդիսանայ այս երեկոն, որու ընթացքին ներկայացուցաւ մեր սիրեցեալ եղբօր՝ Հոգեշնորհ Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի «Մատեան ողբերգութեան» աղօթագրքի արեւմտահայերէնի բանաստեղծաշունչ թարգմանութիւնը:

«Մատեան ողբերգութեան» գրաբարէ արեւմտահայերէն թարգմանութիւնը կը պահանջէր հաւատքի քաջութիւն եւ համարձակութիւն: Արդարեւ, Հայր Տաճատ ոչ միայն սիրեց Նարեկացին «Մատեան ողբերգութեան» աղօթագրքով, այլեւ իր իսկ բառերով՝ ինք «Մատեան ողբերգութեան» աղօթագրքով յափշտակուած է:

Նարեկացիին բառերով հասկնալը անհնար է, այն կարելի է ըմբռնել միայն որպէս հոգեթոնիչ աղօթք: Ինչպէս Հայր Սուրբը կ'ըսէ իր մեկնաբանութեանը մէջ, Մատեանը իր մէջ ունի ներողամտութեան ակնկալութիւնը: Նարեկացու «Մատեան ողբերգութեան» թարգմանութիւնը պարտաւորեցուցած է, ինչպէս կը բացատրէ Հայր Տաճատը, որ ինք ճանապարհորդակից ըլլայ Ս. Գրիգոր Նարեկացու մատեան ողբերգութեան հետ: Բանաստեղծական ոճը, բառերու շարահիւսութիւնը եւ նոր բառերու անվերջանալի տողանցումը իրապէս կը զարմացնէ ընթերցողը:

Առ ի երախտագիտութիւն Հայր Տաճատի գրական ու գիտական վաստակին, յառաջիկայ երկու տարիներուն պարբերական հրատարակութիւններով պիտի ներկայացնենք իր գիտաշխատութիւնները, որոնց շարքին մէջ տպագրութեան կը պատրաստուին քսանէ աւելի գրքեր՝ ծնունդ առած Հայր Տաճատի գրիչէն:

*Դեկտեմբեր, 2021*

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԻՐ

Ամանորի եւ Ս. Ծննդեան նախօրէին  
Թեմիս Հոգեւոր Հովիւներուն

Սիրելի Հոգեւոր հայրեր,

Արդէն հաստատուած ասանդութիւն է մեզի համար ամէն տարի Ամանորի եւ Ս. Ծննդեան Տօներու նախօրէին ձեզի յղել պարզ խորհրդածութիւն մը՝ յուսալով, որ այն փոքր ինչ չափով առաւել կ'ամրապնդէ մեր մէջ հոգեւոր առաքելութեան տեսիլքը եւ ծառայութեան մէջ մնալու հաւատարմութիւնը:

Փառք կու տանք Աստուծոյ, որ մեր թեմի եկեղեցական առաքելութիւնը կ'առաջնորդուի նուիրեալ հոգեւորականներով: Ձեր հաւատքի ուժը պիտի մշտապէս հաղորդէք հաւատացելոց:

Այս տարի ի մասնաւորի ձեր ուշադրութեանը կ'ուզենք յղել թեմի Անդրանիկ Առաջնորդ հոգելոյս Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեանի խօսքը՝ յղեալ հոգեւոր դասին: Մեր փափաքն է, որ այն ընթերցէք, քանզի այնտեղ կը գտնէք խորիմաստ պատգամներ: Մենք անձնապէս քանիցս կարդացած ենք արդէն եւ ամէն անգամ ընթերցելով այն, անդ կը գտնենք նոր «մարգարիտ»ներ:

Սիրելիներ ի Քրիստոս, Գարեգին Տրապիզոնցին, այնուհետեւ Պատրիարքը Հայց. Կ. Պոլսոյ 20-րդ դարու մեր հոգեւոր դասին պսակը հանդիսացող առաջնորդող դէմքերէն է: Մեր այս գրութեանը կից երկու գրութիւնները՝ «Հովիւներ» եւ «Քահանայութեան կարգը» իրօք ուսանելի են:

Հոգեւորականը, իր քահանայական կենքով ամբողջական նուիրում պիտի դառնայ: Մեր կեանքի օրինակով Հայց. Եկեղեցին պիտի բարեկարգենք եւ այն բարձրացնենք աւելի նոր մակարդակի մը վրայ:

Ընդունէք մեր սրտի ջերմագին մաղթանքներն ու աղօթքն առ Աստուած, որ մեզ բոլորս առաջնորդէ դէպի ճշմարիտն ու բարին, որպէսզի նորոգեալ սրտով դիմաւորենք Նոր Տարին՝ 2022-ը Քրիստոսի Սուրբ եւ հրաշալի Ծնունդին ընդառաջ:



## ՄՐՏԻ ՊԱՏՎԱԾ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԴԱՄԻՆ

Միրելի եւ բարեշնորհ սարկաւազներ,

Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու սեմին  
Հայց. Առաքելական Եկեղեցին կը տօնախմբէ Ս. Ստե-  
փանոս նախասարկաւազի Տօնը, որպէս խորհրդանիշը  
ծառայութեան:

Այս պատեհ առիթէ օգտուելով՝ կ'ուզենք ձեզի յղել  
մեր սրտազին բարեմաղթութիւնները եւ փառք տալ  
Աստուծոյ, որ մեր ս. Եկեղեցին օրհնուած է նուիրեալ  
սարկաւազներով, ովքեր Աստուծոյ ս. Սեղանին կը ծա-  
ռայեն սիրով ու հաւատքի գիտակցութեամբ:

Յիշեցէ՛ք, որ դուք ձեր ծառայութեամբ կը պատաս-  
խանէք Աստուծոյ կանչին եւ Աստուած Ինք վարձահա-  
տոյց պիտի ըլլայ ձեզ: Դուք ձեր ծառայութեամբ կը հե-  
տեւիք Ստեփանոս սարկաւազի օրինակին, ան դարձաւ  
նահատակ՝ Քրիստոսի վկայ դառնալու պատճառով:  
Ուրեմն, դուք ալ ձեր նուիրումով պիտի վկայէք Քրիս-  
տոսի մասին:

Ձեզ ի բոլոր սրտէ կը մաղթենք ամենայն բարիք:  
Թող Տէրը մշտապէս օրհնէ ձեզ:

*Դեկտեմբեր 1, 2021*

## ՄԲ. ՄՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆ

«Յաւէ՛լ ի մեզ հաւատս»:

Խնդրանքի այս բառերը արտասանուած են Քրիստոսի առաքեալներու կողմէ՝ ուղղուած Տիրոջը: Այս նոյն բառերուն մէջ մենք կը զգանք աշակերտներուն բուռն փափաքը, հոգեւոր ծարաւը հաւատքով ապրելու եւ հաւատքը դարձնելու կողմնացոյցը իրենց հոգեւոր կեանքին, առօրեային ընթացքին: Մենք պիտի ուզէինք պարզ բառերով ըսել, որ հաւատքը բանալին է կեանքը լիովին ըմբռնելու, որպէս թանկագին նուէրը Աստուծոյ կողմէ: Հաւատքով ապրիլ կը նշանակէ զԱստուած սիրել, Քրիստոսի սիրով ու իմաստութեամբ ապրիլ եւ ամենէն կարեւորը՝ հաւատքը արտայայտել պատարագեալ կեանքով, ծառայութեամբ:

Մեր սուրբ եկեղեցոյ վարդապետները հաւատքի ուսուցիչներ էին, որոնք մեզի փոխանցեցին Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամները: Անոնք մեկ գլխաւոր նպատակ կը հետապնդէին. մարդուն կեանքը մշակելու Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ:

Մենք այսօր մասնաւոր կերպով կ'ուզենք անդրադառնալ Ս. Ստեփանոս նախասարկաւագին, Բարի նահատակին, Քրիստոսի վկայի տօնին, որ ընդհանրապէս քրիստոնէական եկեղեցոյ եւ այսօր Հայց. եկեղեցոյ կեանքին մէջ ունի մասնայատուկ տեղ, որովհետեւ Ստեփանոս ինք դարձաւ առաջինը՝ շատերուն մէջ, որ իր կեանքը պատարագեց Քրիստոսի Անձին վկայութեանը համար: Մենք կը տօնախմբենք Ստեփանոսի տօնը, յիշատակը, որովհետեւ անոր պատարագեալ ու նահատակեալ կեանքը բոլորիս կը հաղորդէ հաւատքի

ներշնչումը: Եթե Ստեփանոս նախասարկաւագ չունենար իր մէջ հաւատքին ուժն ու (գօրութիւնը) առատութիւնը, ապա դժուար թէ ան կարողանար ծառայական կեանքով ապրիլ ու նահատակուիլ վասն Քրիստոսի: Հետեւաբար, Ստեփանոս նախասարկաւագի օրինակը հրաւեր է բոլորիս համար կեանքն ապրելու իր կեանքի նմանակցութեամբ: Այս հրաւերը ուղղուած է այսօր անխտիր բոլորիս եւ ի մասնաւորի բոլոր սարկաւագներուն ու խորանի ծառայողաց: Եւ մեր մաղթանքն ու աղօթքն է, որ այսօր մեր ս. խորանէն սարկաւագներն ու ծառայողները ձայնակից դառնան առաքեալներուն՝ արտասանելու համար հետեւեալ խօսքը. «Յաւե լի մեզ զհաւատս», ուղղուած Տիրոջը:

Այսօր, սարկաւագաց տօնին կը նշանաւորենք ս. սեղանի բոլոր ծառայողները՝ դպիրներ, դպրաց դաս եւ ի մասնաւորի սարկաւագները: Դուք ծառայութեամբ կ'առատացնէք ձեր հաւատքին չափը: Արդարեւ, մեր ս. եկեղեցին ձեր ծառայութեամբ կը շարունակէ հոգեւոր առաքելութիւնը: Եւ մեզի համար յատուկ կերպով ուրախութիւն է ձեզ ունենալ որպէս վաղուան հոգեւոր առաջնորդները: Եւ ձեր ներկայութեան կ'ուզենք պատուել մեր թեմի հաւանաբար ամենէն տարեց սարկաւագը Բարշ. Հրայր Սարկաւագը, որ ութսուն տարիներ անընդհատ խոնարհութեամբ ծառայեց մեր ս. եկեղեցւոյ ս. խորանին: Առողջական պատճառներով ան չկրցաւ մեզ հետ ըլլալ, բայց հոգեւին մխիթարուած ենք, որ իր ազնիւ տիկինը ինք ընդունի ամուսնոյն ձօնուած խաչքարը, որուն օծումը պիտի կատարենք շուտով, եւ այն այնուհետեւ պիտի տեղադրուի Մայր Տաճարի պատերուն:

**«Յաւել ի մեզ հաւատս»**

Արդ, անընդհատ կրկնեցէ՛ք առաքեալներու այս խօսքը, որպէսզի արտայայտէք նաեւ ձեր սրտի փափաքը:

*Դեկտեմբեր 19, 2021*

## ԵՒ ԶԳԵՆՈՒԼ ԶՆՈՐ ՄԱՐԴՆ

«Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջին գնացից զմարդն հին, զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն. եւ նորոգել հոգւովն մտաց ձերոց: Եւ զգեալ զնոր մարդն, որ ըստ Աստծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ ճշմարտութեան»:

(Եփեսացիս 4:22-24)

Ամանորեան եւ Ս. Ծննդեան տօներու սեմին հրաւեր կ'առնենք Ամենակարողն Աստուծմէ՝ հրաժարիլ մեր էութեանը մէջ թաքնուած «հին մարդ»էն եւ մեր հոգիներուն մէջ ծնունդ տալու «նոր մարդուն» ի Քրիստոս: Մեզի վստահուած հրաւերին պարտ ենք պատասխանելու հաւատքի գիտակցութեամբ ու զգացողութեամբ, որպէսզի մեր կեանքի հոգեւոր ճանապարհորդութիւնն արժեւորենք Քրիստոսի նմանակցութեամբ: Այլապէս, ինչպէս պիտի արդարացնենք Ամանորեան ու Ս. Ծննդեան տօնախմբութիւնները: Եթէ երբէք վրայէն չենք թօթափած «հին մարդ»ը եւ արմատախիլ չենք ըրած մեր էութեանը խորքին ծուարած ապականութեանց տեղիք տուող խորհուրդները, ապա մուտք կը գործենք Նոր Տարւոյ սեմէն ներս առաց նորոգուելու եւ կոյր կը մնանք ու անհաղորդ մեր հրաշքին, որն է Աստուածորդու Ծնունդը:

Ի՞նչ է կեանքը: Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած մարդուն կեանքը հրաշք մըն է, զորս պարտ ենք ապրիլ Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ, եւ աւելին՝ նոյնին խորհուրդը հաղորդելու մեր նմաններուն:

Կ'ապրինք նոր աշխարհի մը մէջ: Յաճախ մարդիկ ընդհանուր աշխարհին ակնդէտ կը կատարեն հաստատում մը՝ ըսելով, որ աշխարհը փոխուած է: Բայց իրականութիւնն այդ չէ: Աշխարհը նոյնն է, եւ միայն մարդն ու մարդկութիւնն են փոխուած: Մարդն է հեռացած Աստուծմէ եւ հոգեւորապէս մերկացած առաքինութիւններէ: Ուրեմն հարկ է բռնել դէպի Աստուծ վերադարձի ուղին, ու փնտռելու արդարութեան ճշմարտութիւնը: Չմոռանանք երբէք, որ տաճարն ենք Աստուծոյ բնակութեան, եւ մեր խօսքն ու գործը պիտի ըլլան միայն ու միայն Աստուծոյ կամքին իրականացումը: Հետամուտ պիտք է դառնանք Աստուծոյ պատուիրաններուն, կեանքն ապրինք Քրիստոսի ուղեգծած ճանապարհով, եւ միայն այն ժամանակ կարող պիտի ըլլանք ընկալելու Աստուծոյ ստեղծած աշխարհի գեղեցկութիւնը, որուն վայելքը տրուած է մեզի:

Արդ, թօթափենք մեր վրայէն «հին մարդ»ը եւ մեր մէջ վերակերտենք Աստուծոյ պատկերը: Մեր հոգին, միտքն ու սիրտը զարդարենք Աւետարանէն ճառագայթող ոսկի պատուիրաններով, որպէսզի մերժենք անտարբեր կեանքը, զորս իր մէջ կը կրէ թերութիւններ, որոնց մէջ ակնյայտօրէն երեւելի են ազահութիւնն ու ներողամտութեան ոգու բացակայութիւնը: Մարդու կոչումը պիտի ըլլայ կեանքն ապրիլ սրբութեան տեսիլքով, Աստուծոյն որդեգրութեան գիտակցութեամբ եւ տակաւին այն բոլոր բարի ասանդութիւններու առաջնորդութեամբ, որոնք մեր հոգին կ'ազնուացնեն:

Նոր Տարին ու Ս. Ծնունդը մեր Տիրոջ եւ փրկչի Յիսուս Քրիստոսի նոր խոստումներով ապրելու հրամայականն է: Մեր մարդկային պարտականութեանց մէջ չմոռանանք երբէք, որ որպէս զաւակները Մայր Հայաստանի ու մեր Մայր Սուրբ եկեղեցիին, պարտ ենք

մեր էութեանը մինչեւ խորքը հաստատելու ծառայութեան ոգին, որպէսզի անխախտ պահենք մեր մէջ հայ քրիստոնէայի կոչումն ու նկարագիրը: Ժամանակները շատ դժուարին են եւ լի հազարամէկ փորձութիւններով: Հայրենիքն ու Հայց. Առաքելական ս. Եկեղեցին ցաւ ու տառապանքի բովին մէջէն կ'անցնին: Պիտի մերժենք սկարութիւնը եւ հաւատքը դարձնենք հիմնաքարը մեր հոգեւոր ու ազգային նկարագրին: Դարերով մեր հողը, իր ժողովրդով հանդերձ, գրկուեցաւ իր պետականութենէն, բայց Յարութեան շունչը վերարթնացաւ մեր նախնեաց արեան մէջ: Հայց. Եկեղեցին միշտ մնաց հիմնաքարը Հայոց պետականութեան՝ անվերապահ ու անպայմանական զօրակցութեամբ: Պահն է համախմբումի, որպէսզի ներքին միասնականութիւնը դարձնենք վկայութիւնը մեր հաւատքի կեանքին, ի գլուխ ունենալով Ս. Էջմիածինը:

Ս. Էջմիածինը՝ բաբախող սիրտն է ի Հայաստան եւ ի Սփիւռս ապրող ողջ հայութեան: Հաւատքի այս գիտակցութեամբ հայ զինուորը դեռ մօտաւոր անցեալին հայրենիքը փրկելու վեհ զգացողութեամբ խոնարհուեցաւ Ս. Էջմիածնի լուսատու խորանին առջեւ եւ ս. հաղորդութեամբ զօրացած՝ հայոց պատմութեան էջերը լուսաւորեց Սարդարապատի յաղթանակով:

Հաւատաւոր հայ քրիստոնէայ, ամրացո՛ւր քու մէջ սէրը Աստուծոյ հանդէպ, որպէսզի նոյն սիրոյ տեսիլքով տեսնես Ծնունդը Քրիստոսի: Քրիստոսի Ծնունդը պարտ ենք ապրիլ, որպէսզի դառնանք ճարտարապետը Նոր Կեանքին եւ Նոր Մարդուն: Այս է սպասումը մեր նախնեաց, եւ ի մասնաւորի մեր քաջարի երիտասարդներուն, որոնք կեանքն ապրեցան վասն Յիսուսի, վասն Հայրենեաց: Քրիստոսի Ծնունդը իր մէջ կը կրէ քաջութեան խորհուրդը եւ նոյն խորհուրդով կը հրաւիրէ

նաեւ բոլորս: Թող այս գիտակցութեամբ ապրինք ու  
արարենք մեր կեանքի հոգեւոր ճանապարհորդութիւնը:  
Այս նոյն խորհուրդով միայն պիտի մերժենք մեր մէջ  
թաքնուած «հին մարդ»ը եւ վերապրինք «նոր մարդ»ը:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,  
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի:

*Դեկտեմբեր, 2021*

Յ Ո Ւ Ց Ա Կ

Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեանի  
Հրատարակած Աշխատասիրութիւններու

- . Կոմիտաս Վարդապետ *Ս. Էջմիածին, 1988*
- . Փունջ մը քարոզներ *Թորոնթօ, 1989*
- . Հովուական Աստուածաբանութեան  
գործնական ձեռնարկ *Մոնրէալ, 1989*
- . Մեծ պահքի Կիրակիներ *Թորոնթօ, 1989*
- . Աստուածաշունչ քարոզներ *Թորոնթօ, 1989*
- . Տէրունական Աղօթքը, Բացատրութիւն *Թորոնթօ, 1989*
- . Աւետարանաշունչ քարոզներ *Թորոնթօ, 1989*
- . Ապրուած Խոհեր, Բ. Հտ *Մոնրէալ, 1991*
- . Աւետարանական Խոհեր *Մոնրէալ, 1991*
- . Մեծ Պահքը հանգրուաններով *Մոնրէալ, 1991*
- . The Lent Period *Montreal, 1991*
- . Խօսող հոգիներ *Մոնրէալ, 1992*
- . Հոգելից հանդիպումներ *Մոնրէալ, 1993*
- . Հոգեւորոգ յուշեր *Մոնրէալ, 1993*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Ա. Հտ *Մոնրէալ, 1994*
- . Նորակնունք *Մոնրէալ, 1994*
- . Փունջ մը քարոզներ, Ա. Հտ *Մոնրէալ, 1994*
- . Հոգիիս մկրտութիւնը *Մոնրէալ, 1994*
- . Քարոզներ *Մոնրէալ, 1995*
- . Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Ա. Հտ *Մոնրէալ, 1995*
- . Ստորումներ հոգելոյս Վազգէն Ա.  
Վեհափառի շիրիմին առջեւ *Մոնրէալ, 1995*
- . Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Բ. Հտ *Մոնրէալ, 1997*
- . Խոհեր *Մոնրէալ, 1997*
- . Տաղաւար քարոզներ եւ ելոյթներ *Մոնրէալ, 1997*
- . Նոր տարին կը ծնի մարդուն մէջ *Մոնրէալ, 1997*
- . Սուրբ Պատարագ Հայաստանեայց  
Առաքելական Եկեղեցւոյ *Մոնրէալ, 1997*
- . Աւագ Շաբթուայ խոհեր *Մոնրէալ, 1998*
- . Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Գ. Հտ *Մոնրէալ, 1998*
- . Հոգեւոր ճանապարհորդութիւն *Մոնրէալ, 1998*



- . Հայաստանը առաքելութիւն է *Մոնրէալ, 1998*
- . Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Դ. Հտ *Մոնրէալ, 2000*
- . Փունջ մը քարոզներ, Բ. Հտ *Մոնրէալ, 2000*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Բ. Հտ *Մոնրէալ, 2000*
- . Հայաստանեայց Եկեղեցին՝  
կեանքի ճանապարհ *Մոնրէալ, 2000*
- . Փունջ մը քարոզներ, Գ. Հտ *Մոնրէալ, 2002*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Գ. Հտ *Մոնրէալ, 2002*
- . Reflection on the 1700 anniversary  
of Christianity in Armenia *Montreal, 2002*
- . The Christology of St. Nerses *Montreal, 2002*
- . Խմորուիք աղօթքով *Մոնրէալ, 2003*
- . Փունջ մը քարոզներ, Դ. Հտ *Մոնրէալ, 2003*
- . The Armenian Church, A Journey of Life *Montreal, 2003*
- . Արարողութիւն Հայ Եկեղեցաւեր  
Տիկնանց Օրուայ *Մոնրէալ, 2003*
- . Չքոյս ի քոյոց... *Մոնրէալ, 2003*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Դ. Հտ *Պրրպէնք, 2003*
- . Spiritual Reflections *Los Angeles, 2004*
- . Return to God *Los Angeles, 2004*
- . Ծաղկաքաղ *Պրրպէնք, 2004*
- . Փունջ մը քարոզներ, Ե. Հտ *Պրրպէնք, 2005*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Ե. Հտ *Պրրպէնք, 2005*
- . Քսանհինգամեակ ճանապարհի  
նոր արշալոյսներու *Պրրպէնք, 2006*
- . The Lenten Journey... Spiritual Reflections  
Հոգեւոր ճանապարհորդութիւն *Պրրպէնք, 2007*
- . Փունջ մը քարոզներ, Չ. Հտ *Պրրպէնք, 2007*
- . Faith in Action *Burbank, 2007*
- . Աւագ Ծարաթը՝ Դուռն Յարութեան *Պրրպէնք, 2007*
- . Հոգեշունչ մանրապատումներ, Չ. Հտ *Պրրպէնք, 2008*
- . Փունջ մը քարոզներ, Է. Հտ *Պրրպէնք, 2008*
- . Փունջ մը քարոզներ, Ը. Հտ *Պրրպէնք, 2010*
- . Ուղեցոյց Հովուական Կեանքի *Պրրպէնք, 2010*
- . Քահանայի 40-օրեայ Ճանապարհը *Պրրպէնք, 2010*
- . Միտքէն դէպի սիրտ,  
Ասոյթներու ընտրանի *Ս. Էջմիածին, 2010*

- . Փունջ մը քարոզներ, Թ. Հտ *Պրրպէնք, 2010*
- . «Հայր Մեր» Տէրունական Աղօթքի  
մեկնութիւն մանուկներու համար *Պրրպէնք, 2010*
- . Մանրապատումներ եւ Խոհեր, Դ. Հտ *Պրրպէնք, 2011*
- . Փունջ մը քարոզներ, Ժ. Հտ *Պրրպէնք, 2012*
- . Նոր Կեանքի Դուռը *Պրրպէնք, 2012*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ *Պրրպէնք, 2012*
- . Փունջ մը Քարոզներ, ԺԱ. Հտ *Պրրպէնք, 2013*
- . Nourish & Enrich your Spirituality  
Burbank, 2013
- . Բարութեան Մերմեր *Պրրպէնք, 2013*
- . Հոգու Կաթիլներ, աղօթագիրք *Պրրպէնք, 2013*
- . Ապրուած Կեանքի Յուշեր,  
Մանրապատումներու Հաւաքածոյ *Պրրպէնք, 2013*
- . The Lenten Journey,  
Ճանապարհորդութիւն Աստուծոյ Հետ *Պրրպէնք, 2013*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ  
(Ա, Բ, Գ) (Հայ-Անգլ) *Պրրպէնք, 2014*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ  
Հաւատով Խոստովանիմի ներշնչումով *Պրրպէնք, 2014*
- . Faith in Action (2nd Ed) *Burbank, 2014*
- . Աղօթարան Հայ Մանուկին (Հայ-Անգլ) *Պրրպէնք, 2014*
- . Աւագ Ծաբթուան Հոգեւոր  
Ճանապարհորդութիւն, (Հայ-Անգլ) *Պրրպէնք, 2015*
- . Փունջ մը Քարոզներ ԺԲ. Հտ *Պրրպէնք, 2015*
- . Spiritual Reflections  
Burbank, 2015
- . The Lord's Prayer,  
Տէրունական Աղօթք (Booklet) *Պրրպէնք, 2016*
- . Christian Identity,  
Քրիստոնէական Ինքնութիւն *Պրրպէնք, 2016*
- . Towards a more fruitful Life,  
Դէպի Առաւել Կեանք *Պրրպէնք, 2016*
- . Հրաւեր Աղօթքի *Պրրպէնք, 2017*
- . Դէպի Նոր Կեանք *Պրրպէնք, 2017*
- . The Life *Burbank, 2017*
- . Փունջ մը Քարոզներ, ԺԳ. Հտ *Պրրպէնք, 2017*
- . Դէպի Առաւել Կեանք,  
Toward a more fruitful life *Պրրպէնք, 2018*

- . Աղօթարան Հայ Մանուկին (Բ Տպգ) *Պրրպլէնք, 2018*
- . Հրաւեր Աղօթքի (Բ Տպգ) *Պրրպլէնք, 2018*
- . Ապրուած Կեանքի Յուշեր (Բ Տպգ) *Պրրպլէնք, 2018*
- . Աղօթարան Հայ Մանուկին, Բ տպգր *Պրրպլէնք, 2018*
- . Փունջ մը Քարոզներ, ԺԴ. Հտ *Պրրպլէնք, 2019*
- . Խոստում՝ Նորովի կեանքը ապրելու *Պրրպլէնք, 2019*
- . Սրտէ Բիսած Աղօթքներ, Բ տպգր. *Պրրպլէնք, 2019*
- . Երբ Առանձին եմ՝ Մենակ չեմ *Պրրպլէնք, 2019*
- . Հոս չէ, Յարութիւն առաւ *Պրրպլէնք, 2020*
- . Յարութիւն եւ Կեանք *Պրրպլէնք, 2020*
- . Փունջ մը քարոզներ, ԺԵ. Հտ *Պրրպլէնք, 2020*
- . Երկունքի մէջ ծնած խոհեր *Պրրպլէնք, 2020*
- . Քայլ առ Քայլ *Պրրպլէնք, 2020*
- . Պատգամներ *Պրրպլէնք, 2020*
- . Սքանչելի Հոգեւորականը՝ *Պրրպլէնք, 2020*  
 Գարեգին Տրապիզոնցի *Burbank, 2020*
- . Walking out of the Upper Room *Burbank, 2021*
- . The Book Corner *Burbank, 2021*
- . Walking out of the Upper Room, Vol II *Burbank, 2021*
- . Spiritual Reflections *Burbank, 2021*
- . Փունջ մը Քարոզներ, ԺԶ. Հտ *Պրրպլէնք, 2021*